



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈՖ. Հ. ՇԵԽԵԼՅԱՆ

ԲՈՒՑՍԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935



Պրոֆ. Հ. ԲԵԴԵԼՅԱՆ

581.8

(f-4)

ԲՈՒՑՍԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱ

A 1619



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1935

Պատ. խմբագիր՝ Դ. Ռ. Գևորքին յան
Ֆելի. խմբագիր՝ Դ. Շենյան
Անդր. խմբագիր՝ Հար. Գևորգյան
Մերժակը՝ Մ. Ա.

Հըստ. 3040. Գլափ. 8607. Պատվիր 1043. Տիրաժ 5000
Հանձնված և արտադրության 25 հունիսի 1934 թ
Սառաղրված և ապհով 13 մարտի 1935 թ.

Պետէրատի տպարան, Յերևան 11 Գնունի, 4

ԱՌԱՋԱԲԱՆ

Բույսերի անտառմիան-համալսարանական ծրագրի համապատասխան ծավալով—առաջին անգամն և լույս տեսնում հայերենունց այս փաստն արդեն ցույց և տալիս, թե ինչքան դժվարին ու պատասխանատու մի գործ և այսպիսի մի կուրս շաբադրելը: Դժվարություններն այն են, վոր հեղինակը մեր գրականության համար այս նոր գիտության բնագավառում իր սեփական ուժերով պետք և հարթի իր ճանապարհը, ուրիշների վրա հենվելու հնարավորություն չունենալով, ինքը պետք և հորինի գիտական տերմինները: Բացի այդ, գիտության տվյալները տեսականուրեն պարզաբանելուց և ամրապնդելուց հետո, նա անհրաժեշտ տեղ և ուշադրություն պետք և հատկացնի պրակտիկ կյանքի այն պահանջների արտացոլման, վորոնք կապ ունեն բույսերի մեջ արտադրվող տեսնիկական նյութերի հետ: Այդ պատճառով մի-այն այժմ, իմ պրոֆեսորական գործունեյության տասնյակ տարիները բոլորելուց հետո, յես վճռեցի ձեռնամուխ լինել այսպիսի մի դժվարին գործի: Պատասխանատվությունը, վորը կապ-ված և գիտության այս ճյուղի շաբադրման հետ, այն պատճառով և խոշոր, վոր թե ուսանողները թե բնագետները և թե բույսերի հետ գործ ունեցող մասնագետները մեր խորհրդային հանրապետության մեջ բույսերի անատոմիան պետք և ուսումնասիրեն գլխավորապես այս գրքով: Ուստի և պետք և գիտական հաստատ հիմք գրվի հայերեն շաբադրված բուսաբանության տակ և գիրքը պետք և ներկայացնի գիտության վերջին խոսքը: Այս տեսակետից յեխնելով՝ յես ողտագործել եմ նորագույն բոլոր տվյալները:

Անատոմիա տերմինը, վոր ընդհանրապես մարմնակազմություն և թարգմանվում, այս գեազքում բույսերի վերաբերմամբ ուրիշ նշանակություն ունի՝ կենդանիների կամ մարդու անա-

տոմիայի հետ համեմատած վաղուց ի վեր սահմանված և մարդու անառաջիք կոչել զիառթյան այն հյուզը, վրանեղ հասագուցամ են մարդու մարմնի սրբաններն առանձին - առանձին և բոլորը միասին՝ իրեն մի ամբողջոթյան կազմող մասեր, զրան հարակցված են արդ որդանների ֆունկցիաները, արենին մարդու անառաջիք առաջիս և մարդու որդանների նկարագրությունը և նրանց կատարած ֆունկցիաները նույնը պետք և ասել կենդանիների անառաջիք մասին: Իսկ բույսերի անառաջիքան այլ և նա մանրապնին ուսումնասիրում և բույսերի ներքին կազմվածքը, նրա որդանների հյուսվածքները, հյուսվածքների բջիջները և բջիջների բույս մասերն ու առանձնահատկությունները եր մեթոդիկայով բույսերի անառաջիքան ներկայացնում և բույսերի միկրոսկոպիկ կազմության ուսումը, միենույն ժամանակ նույն իր ուշադրության կենարանում և պահում այդ բջիջների կազմության քիմիական կոզմը, նա թափանցում և բջիջներում կատարված քիմիական ռեակցիաների մեջ, ծանոթանում և այլանող սուած յիկող ֆիզիոլոգիական յերեսությներին: Այսպիսով պարզ և, վոր բույսերի անառաջիքան այն և, ինչ վոր կենդանական այխարճի ուսումնասիրության մեջ մարդու և կենդանիների հիմունքին, այսինքն՝ հյուսվածքաբանությունը: Աւսաի և բույսերի անառաջիքան միկրոսկոպային հետազոտությունների արդյունք և, այն ինչ կենդանիների անառաջիքան նրանց մարմնի մակրոակտոպային ուսումնասիրությունն է: Աղա ուրիմն, ինքն ըստ ինքնայն այն հարցն և ծագում, թե ինչպես պետք և դորձագրենք միկրոսկոպը, վոր տեսնենք բույսերի ներքին բջիջային կազմությունը: Հարցն ավելի քան բնական և, և յես այդ առթիվ պետք և տամ հետեւյալ պատասխանը բույսերի անառաջիքայի գործնական ուսումնասիրության ձևերը, միկրոսկոպի գործածությունը, բույսերից կարոններ վերցնելը, նրանց մշակումը, դիտումը և այլն: Այդ բոլորը պիտի կազմեն իմ ընդհանուր բուսաբանության մի այլ հատորը, վորակել յես պետք և մեջ բերեմ վերոհիշյալ բոլոր մեթոդների ամենամանրամասն նկարագրությունը: Այն կը բանի բույսերի անառաջիքայի պարագափկումը, իսկ այս գիրքը բույսերի անառաջիքայի թեորիան և:

Վերը յես ասացի, վոր կենդանիների անառաջիքայի մեջ հետազոտվում են որդանների նաև ֆունկցիաները: Ինձ կարող

հն առարկել, թե որքանների Փունկցիաների ուսումնասիրությամբ պարապում և ֆիզիոլոգիան և վհջ թե անատոմիան։ Այդի հարկի ճիշտ և հանրածանոթ վերն ասածով յիս ուղում եմ միայն ցույց տալ վոր վաղուց ի վեր անցել ե, անցել անվերադարձ, այն ժամանակը, յերբ կենդանիների անատոմիան պարապում եր որգանների զուտ միակողմանի նկարագրությամբ և չեր տալիս այդ որգանների Փունկցիաների զոնե ամփոփ պատկերը։ Նույն ամբողջովին վերաբերում ե և բուսաբանության Այժմ արգեն չի կարելի, ինչպես առաջ հյիս անում, առաջ սերի հյուսվածքների չոր նկարագրությունը, այլ պետք ե հյուսվածքների, բջիջների կազմությունը կապել նրանց Փունկցիաների հետ։ Այս կապակցությամբ տեղին կլիներ հիշել վոր հռչակող ոռուս բուսաբան պրոֆ. Տիմիրյազեր և՛ իր գասախոսություններում, և՛ իր բազմաթիվ տաղանդավոր գրվածքներում *), ուսուցանում եր՝ Դան օրган, հայտ ֆունկցիո; հաօборոտ—данա ֆունկցիա, հայտ օրган.—զրանով նա ցույց եր տալիս, վոր չի կարելի սահմանափակվել որգանի միայն նկարագրությամբ, այլ անհրաժեշտ ե, գիտական մոտեցումով, որգանի նկարագրության հանդեպ տալ և նրա Փունկցիան, այլ և այն, վոր չի կարելի անվանել որգանիզմի մի վորեն Փունկցիա, առանց ցույց տալու այն որգանը, վորը կատարում ե այդ Փունկցիան։ Որգանից անցնելով հյուսվածքներին՝ կարելի յե, հետեւելով Տիմիրյազեր ուսուցման, ասել՝ «Ծրված ե հյուսվածքը, զտեք նրա Փունկցիան», և հետո ասել՝ «Բույսն ունի այս ինչ Փունկցիան, գտեք այն հյուսվածքը, վորը կատարում ե այդ Փունկցիան»։ Այս վերջին մեթոդը յիս դրել եմ իմ գրքի հիմքում և յերբեք առանց Փունկցիան պարզելու՝ չեմ տալիս հյուսվածքի, կամ բջիջի, կամ նույնիսկ բջիջի մասերի կազմության պատկերը. ուղում եմ ասել վոր Փունկցիան և անատոմիկական պատկերը յիս միշտ իրար հետ կապած եմ տալիս. Մի խոսքով՝ իմ կազմած այս գիրքը—«Բույսերի անատոմիան»—զուտ նկարագրական անատոմիա չե, վհջ մի դեպքում, այլ սա Փիզիոլոգիական անատոմիա յե, և յիս այս իմ աշխատանքի համար իբրև անհասանելի իդեալ ու-

*) Тимирязев К. А., — „Современные науочные вопросы естествознания“, Москва.

նեցել եմ իմ ասած իմ համեմարեզ ուսուցչի — Բնութինի համարաւարանի աշխարհահաջակ պրոֆեսոր տկապիմիկոս Հարերանդափի — զլուս գործոցը, նրա՝ բաւարանական դիսաթյան մեջ զարարդան կազմող՝ «Բույսերի ֆիտիորոգիական անառողմիա» գրվածքը, վորի մեջ նու համարձակ վրձինով կերպել և բույսի ֆունկցիաների և նրա ներքին կազմվածքի հարակցության հմայիչ պատկերը, բաց անելով բաւարանաթյան առաջ նորանոր, լայնատարած հորիզոնները:

Ծննդալով ժամանակադրական կարգով, պետք և առևմ, վոր բացի Տիմիրյանովի և Հարերանդափի ուսմունքներից, բույսի ներքին կազմության և նրա ֆունկցիաների հարակցության ահանգեացից իմ ասած ունիմ մի շատ կարեսոր հանդամանք, այդ հետեւյան և՝ մեր Միության մեջ իրեն բիոլոգիական դիսությունների հաստատված և ընդունված հիմք ծառայում և այն հայցից, թե որպանիզմերի կազմությանը չի կարելի տալ սուկինքնին, այլ պետք և միշտ մասնանշել այն բիոլոգիական յերկու յիմները, վորոնք ընթանում են ավյալ որդանի, ավյալ հյուսվածքի կամ բջիջի մեջ, որից կերպ ասած՝ չի կարելի սահմանափակվի հարցի ստատիկայով, — այդ կլինիկ մի կիսատ զործ, — այլ պետք և տալ նաև նրա զինամիկան Այդ շատ կարեսոր զիտական պատճառով և, վոր բույսի անառողմիկական ավյալները նկարագրելով խկույն կանոն եմ առնում, այն ել բավական յերկար, այն պրոցեսների վրա, վորոնք ստրուկտուրային ավյալ պայմաններում առաջ են զալիս և կատարվում են Ամենուրիք առանձնապես շեշտում եմ այն մեծ նշանակություն ունեցող հանգամանքը, վոր որգանիզմի մեջ կատարվող յերկույթները շափաղանց սերտ կերպով կապված են պրոտոպլազմայի, բջիջի կենդանի նյութի հետ, այդ պատճառով առանձնապես կանոն եմ առնում պրոտոպլազմայի ամենաշեշտական հատկությունների վրա: Բայց այստեղ գեռ չպարզված շատ հարցեր կան: Դրա նախապատճառն այն է, վոր կենդանի նյութը հավելք չարժման և փոփոխության մեջ եւ Բակալաւր ասած՝ չկա որդանիզմի ան-

փոփոխ պատկեր,—այդ որգանիզմի թեկուղ վոր մասն ել վերց-
նենք,—նույն իսկ ամենակարճ ժամանակամիջոցում։ Այդ հա-
մոզմունքը պետք ե դառնա զիտության բիոլոգիական մասերի
մշակման հիմքը։ Ուղեմն, յեթե տրվեր այստեղ բույսերի միայն
ներքին կազմության պատկերը այդ չեր համապատասխաներ
իրերի գրության

ՀԵՂԻՆԱԿ

I. ԲՈՒՅՍԵՐԻ ԲԶԻՉԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մինչև 17-րդ դարի 2-րդ կեսը գիտնական բուսաբաններն ըույսերի ներքին կառուցվածքի մասին անգամ գաղափար չունեցին ինարկե այդ նրանց անկարողությանը վերագրել և զրահման վրա նրանց մեղագրել չի կարելի։ Դրա պատճառը տեխոնիկայի և մյուս գիտությունների հետամնացությունը, արտադրական ուժերի զարգացման ցածր մակարդակն եր՝ տվյալ ժամանակաշրջանում։ Բույսերի ներքին կառուցվածքն ուսումնասիրելու, համար այժմ գործ են ածվում բարդ գործիքների մի ամբողջ կոմպլեքս, քիմիայի, ֆիզիկայի նվաճումները, վորոնց մասին այն ժամանակվա գիտնականները յերազել անգամ չեցին կարող։ Ամենազլամակորն այն ե, վոր միկրոսկոպ չկար, առանց վորի այսոր ել հնարավոր չե վոչինչ անել Այս ըոլորը, միենույն ժամանակ, զալիս են պարզելու, թե ինչու բույսերի ներքին կառուցվածքի խորազնին ուսումնասիրությանը զուգադիպում ե միկրոսկոպի և այլ գործիքների գյուտին, ֆիզիկայի և քիմիայի դարձացմանը հետագայում քայլ առ քայլ զարգանում ե՝ նրանց կատարելագործման զուգընթաց։

17-րդ դարի յերկրորդ կեսի սկզբներին առաջին անգամ Ռուբերտ Հուկն իր խակ պատրաստած միկրոսկոպով սկսում ե իր գիտողությունները կատարել և թիվս բազմաթիվ որյեկտոների նա գիտում ե նաև խցանի ու փայտածխի կտրվածքները, նա նկատում ե, վոր դրանք կառուցված են բազմաթիվ մանր կամերներից, վորոնք ջատ նման են մեղրախորխիսի բջիջներին, և հենց այդ նմանության պատճառով ել նա այդ կամերները բջիջ ե կոչում։

Հուկից հետո, 17-րդ դարի յերկրորդ կեսի ընթացքում յերկու գիտնականներ՝ Գրյուն Անգլիայում, Մարչելլո Մալպիկին՝ իտալիայում, իրարից անկախ զարգվելով բույսերի կառուցվածքի խնդրով, զալիս են այն համոզման, վոր բույսերն ունեն բջիջա-

յին կտառոցվածքու Սակայն այդ խնդրով, համեմատաբար ավելի կտառելազորձված միկրոսկոպով, վերը նշված յերկու զբանականներից հետո զբազված և Շլեյփենրու նա ուսումնասիրելով բույսի որգանները և նրանց գարգացումը, վերջնականապես հաստատեց, վոր նրանց բարձրությունը մասերը կտառոցված են բջիջներից և կամ առաջ են գալիս նրանցից, ինչպես բարային բջիջները, ջրասար խօսպակները և այլն և նկատեց նաև, վոր կենզուի բջիջները լցված են հեղանյութով, այն ինչ մեռմած բջիջներում այդ բացակայում և, նրան փոխարինում և ողը, որինակ՝ խցանի բջիջը, չորացած բնափայտի ելեմենտները և այլն Յեղնելով իր այդ ուսումնասիրությունից, նու հանեց ճիշտ յերակացություն նաև բջիջի և որգանիզմի հարաբերության մասին—վոր յուրաքանչյուր բջիջ հանդիսանում և կենզուի որգանիզմի սարսկառացին միավորը և բջիջից զենք նաև այլն անբաժանելի չեն:

Շլեյփենից հետո 1839 թվին հրատարակված և Շվանի գիրքը՝ նա, զբազվելով կենդանական որգանիզմի ներքին կտառոցվածքի ուսումնասիրությամբ զարդ զարդ, վոր վոչ միայն բուսական, այլև բուլոր կենդանական որգանիզմները կամ կտառոցված են բջիջներից և կամ առաջանում են նրանցից, ուրեմն բջիջը սարսկառացին միավոր և նաև կենդանական աշխարհի համար Այզպիսով Շվանը և Շլեյփենը վերջնականապես հաստատուն հոգի վրա զբին բջիջացին ահսությունը—վոր բուլոր բույները և կենդանիները կտառոցված են բջիջներից կամ առաջ են գալիս բջիջից, ուրեմն բջիջն ընդհանուր և վոչ որգանական աշխարհի համար ինչ վերաբերում են բջիջի ներքին կտառոցվածքի խնդրին, այսուղ արգեն նրանը սխալ հոգի վրա ելին կանոնած, ընդունելուվ վոր նրա մեջ գըլ-խավորը—կենսակիր մասը—թաղանթն և և վոչ թե նրա պարունակությունը, վորին նրանք յերկրորդական դեր ելին վերապրում: Դեռ Շվանի գրքի հրատարակությունից առաջ, 1830 թվին, բուսաբան Մոհամ բջիջի պարունակության մեջ տարբերում և մի մածուցիկ, լորձունքանման նյութ, վորի կարևորությունը շեշտած վիճակու համար նրան անվանում և պրոտոպլազմա (նախանյութ): 1833 թվին անդիմացի գիտական Բրունը բջիջների այդ մածուցիկ նյութում նկատում և ավելի խիտ, ձևավորված մի մարմնիկ, վորին անվանում և բջջակորիզ: Շվանից և Շլեյփենից հետո գիտականների ուշադրությունը ահա բներվում և հենց Մոհամ պլու-

տոպլազմայի և Բրոունի կորիզի վրա, Զանցած շատ ժամանակ՝ հաստատվեց, վոր բջիջի եյտկան, գլխավոր մասը, կենսակիրը, հանդիսանում և պրոտոպլազման իր կորիզով։ Այդ խնդրի լուծմանը նպաստեցին յերկու հանդամանքները։ Առաջին — կենդանական որգանիզմի կառուցվածքը ուսումնասիրողները գտան, վոր նրանց մարմնի բջիջներից շատերը թաղանթ չունեն և ներկայացնում են Մո՛լի նկարագրած մածուցիկ նյութի մի զանգված՝ իր կորիզով։ Յերկրորդ — միկրոռգանիզմների աշխարհի հայտնաբերումը վորի մեջ գտնվեցին բազմաթիվ ներկայացուցիչներ վորոնք իրանց ամրողջ կյանքի ընթացքում, կամ կյանքի վորոց շրջանում, բոլորովին մերկ են լինում, թաղանթազուրկ կազմված մի կաթիլ պրոպլազմայից իր կորիզով։ Կենդանի եյտկներ, վորոնք շնչում են, սնվում, շարժվում, բազմանում են, մի խոսքով կրում են կյանքն իր բոլոր արտահայտություններով և, սակայն, թաղանթազուրկ են։ Քանի այդ այդպիս ե, ապա բջիջի եյտկան մասը պետք ե վոր հանդիսանա պրոտոպլազման իր կորիզով — շատ ճիշտ կերպով յեղրակացրին գիտնականները։ 1863 թվին Մաքս Շուլցին վերջնականապես ցույց տվեց, վոր, իրոք, կորիզը և պրոտոպլազման են բջիջի գլխավոր, կենդանի մասը, իսկ թաղանթը՝ այդ նրա մեռած, յերկրորդական նշանակություն ունեցող մասն ե, առանց վորի յել բջիջներն ապրում են։ Դրա հիման վրա յել նա տվեց բջիջի ընորոշումը — վոչ թե մի բշտիկ և թաղանթով պատաժ և հեղանյութով լցված, ինչպես ասում եյին Շվանը և Շլեյդենը, այլ մի կաթիլ պրոտոպլազմա յե՝ իր կորիզով։

Բջիջային տեսության եյտկան կողմերից մեկն ել բջիջի առաջացման պրոբլեմն եր։ առաջ կարծում եյին, վոր նոր բջիջներն առաջանում հին, ծերացած բջիջների մեջ։ Այս սիալ տեսակետը ժխտվեց և բջիջային տեսությունը լրացվեց բջիջների բաժնուման հայտնաբերմամբ և Ռուտոլֆ Վիրխովի գրանից արած յեղրակացությամբ՝ վոր բջիջներն առաջ են գալիս բաժանման մանապարհով միայն, իրանց նման բջիջներից։ Օոնիս սելլա և սելլա բջիջի բաժանմանը հաջորդեց կորիզի բաժանման պրոցեսի ուսումնասիրությունը. պարզվեց նրա ժառանգակիր լինելու և մի շարք այլ կարևոր նշանակությունները բջիջում. պրոտոպլազման նանաչվեց վորպիս մի միջավայր, վորի մեջ կատարվում

ևն բոլոր կենսական յերես յթները Բջիջի այս բարդ կտրմությունն ու կաստցվածքը նկատի առնելով՝ նրան տարբական որդանիզմ անանը տվին Այդ տարբական որդանիզմին՝ բջիջին նորագույն բժրունմամբ բնորոշում են վորովես մի կտթիլ պրտուղազմում մեկ կամ մի քանի կորիզով:


Ահա բջիջային տեսության պատկերացումը, սկսած նորերա չուկից մինչեւ բջիջի նորագույն բժրունման ժամանակաշրջանը: Սակայն բջիջային այդ տեսությանը, անկախ նրա նորագույն ըմբռնուուներից, այսոր անվերապահութեն միանալ չի կարելի, վորովհետեւ նու թերի յեւ, լրիվ չեւ, ավելի ճիշտ կլինի տեսէ վոր այդ տեսության մշակողները, յերես յթները ճշարեն հայտնարելավ հանդերձ, սխալ հետեւ յթներ են անում: Դասնանք այս հարցին նրանք մի կտթիլ պրտուղազման իր մեկ կամ մի քանի կորիզով—բջիջը՝ անվանելով տարբական որդանիզմ, տառամ են՝ քանի վոր յտ բարանչյուր որդանիզմ կառուցված երջիջներից, ապա նու վոչ այլ ինչ եւ, յեթե վոչ անհատ բջիջների, այսինքն տարբական որդանիզմների մի զաղութ, ուրիշ խոսքով՝ բազմարջիջ որդանիզմի կյանքը հանդիսանում եւ բջիջ-որդանիզմների կյանքերի սոսկական գումարը: Դրանից հետեւում եւ ուսումնասիրելով սամնձին բջիջը, մենք միաժամանակ ուսումնասիրած կլինենք նաև ամբողջ որդանիզմը: Յեկ վորովհետեւ ընտեթյան մեջ կան բազմաթիվ միարջիջ որդանիզմներ, ապա պարզ ե՛ կյանքի ուսումնասիրության համար ամենից առաջ պետք եւ վերցնել նրանց, քանի վոր նրանք համարժեք են բարձրջիջ որդանիզմի սարուկառային միավոր հանդիսացող սամնձին բջիջներին: Աւելին, զուր յերեմին, զուրս յեկավ, վոր բազմարջիջ որդանիզմը համարժեք են, վոր բազմարջիջ որդանիզմի սամնձին բջիջները համարժեք են աղատ աղբող միարջիջ որդանիզմներին: Խոկ մաթեմատիկայից գիտենք վոր յեթե յերկու մեծություններ զատ-զատ հավասար Են մի յերբորդ մեծության, ապա նրանք հավասար են իրար: Յեթե բազմարջիջ որդանիզմը համարժեք երջիջները համարժեք են աղատ աղբող միարջիջ որդանիզմները: Ահա սրանք են բջիջային տեսության սխալ հետեւ յթները: Այսպիսով հիմնովին ժխտվում

և որդանական աշխարհի զարգացումը, որդանիզմի ամբողջականությունը:

Նախ վերցնենք բազմարջիջ որդանիզմի և նրա առանձին բջիջների հարաբերությունը: Միաբջիջ որդանիզմներից բազմարջիջ որդանիզմներ առաջանալուն զուգընթաց, զոյտության կովում, բնական ընտրության ճանապարհով, վերջիններիս մեջ կատարվում և բջիջների վ փունկցիաների դիմերենցիացիա, առանձին բջիջները, բջիջների առանձին խմբերը, հայտնի ձևով ձեռափոխվելով, հարմարվում են վորոշ փունկցիաների, դառնում են սպեցիալիստներ մի աշխատանքի մեջ, կորցնում են ուրիշ փունկցիաներ կատարելու ընդունակությունը: Յեզ վորքան աշխատանքի և կառուցվածքի դիմերենցիացիան խորանում ե, այնքան այդ պարագան ավելի շեշտված կերպով և հանգես գալիս: Այսպես, որինակ, բույսի մեջ վորոշ բջիջներ ներկայացնում են որդանիզմի մարմնական բջիջներ, վորոնք ընդունակ չեն նոր սերունդ առաջացնելու (խոսքը բույսների մեջ տարածված վիճետատիվ բազմացման մասին չե): Նրա վորոշ բջիջները ձեւ ափոխվելով դառնում են զանազան տեսակի մեխանիկական բջիջներ, մյուսներից առաջ են՝ գալիս ջրատար խողովակներ, բջիջներ, վորոնք մեռնելուց հետո միայն իրանց փունկցիաների կատարման կատարելության են հասնում: Բջիջների մի այլ խումբ՝ արմատի ծծող հյուսվածքն իր մազիկներով վորոշակի ձեափոխվելով, կատարում է ջուր ծծելու ֆունկցիան, հարմարվում է հողային խոնավ պայմաններին, բոլորովին անընդունակ և փոտոսինթեզ կատարելու Այդ հյուսվածքի բջիջներն իրանց տեղով և դիրքով համապատասխան տեսակի պաշտպանողական հյուսվածք անդիսացող եպիդեմիսին, սակայն ողում անմիջապես չորանում, մեռնում են, անընդունակ են նման փունկցիա կատարելու և, հակառակը, վոչ եպիդեմիսը և վոչ ել տերեկի ասիմիլացիոն հյուսվածքը վոչ մեկը մյուսի և վոչ ել արմատամազիկների փունկցիան կատարել կարող են և այլն և այլն: Յեկ յեթե այդպես եսկ այդ մասին կասկած լինել չի կարող, ապա այդ առանձին, բջիջները այդ վերին աստիճանի շնեղ սպեցիալիստներն առանձին վերցրած, ապրել զարգանալ և նոր սերունդ առաջացնել չեն կարող, ուրեմն նրանք ամբողջական որդանիզմներ չեն հանդիսանում, վորովհետեւ կյանքը հատուկ և միմիայն ամբողջական որդանիզմին, նրանք ամբողջության մասեր են միայն, հետեւա-

բար վճէ վորտեսողիս և վճէ ել քանոնկապիս համարժեք լինել
ամբողջ որդանիզմին չեն կարող կնշանակի՝ որդանիզմը վոչ թե
անհատ բջիջ որդանիզմների մի գողութե, մի զումար, այլ մի
բարզ ամբողջություն իր մասերով—որդաններով, հյուսվածքներով
բջիջներով։ Այսանդից ել բղբում և այն, վոր որդանիզմի կյանքն
ուսումնասուրելու համար բարդական չե ուսումնասուրել նրա առան-
ձին բջիջների կյանքը միայն, այդ ել անհրաժեշտ ե, բայց այդ
քիչ ե, միակողմանի և թերի, զրո համար պետք և ուսումնասուրել
ամբողջական որդանիզմի կյանքը։

Այժմ զանանք հետեալ հարցին՝ արդյոք բազմաբջիջ
որդանիզմի բջիջները համարժեք են ազատ ապրող միկրոռբա-



Նկար 1. Botrydium—ջրիմուռ, խոշո-
բացբած և 30 անդամ, ըստ Վորոնինի


համարել, թե բազմաբջիջ, որդանիզմ, նրանց կառուցվածքի

նիզմներին և համապատասխա-
նմամ են բջիջի վերը հիշած բնու-
րուժմանը կրկին վոչ։ Այս միկ-
րոռբանիզմների բարձր ափակերի
մասին վեճ մնել չի կարող, մին-
չդեռ ստորին տեսակների մասին
այդ հնարավոր և թեև վոչ ճիշտ։

Վերցնենք վարպետ որինակ
Botrydium-ը (Նկ. 1). Նրա ցածի
մասը արմատի նման ճյուղավոր-
ված ե, անդամը և և կանվում է
հողում, խոկ վերեի մասը տանձի
ձև ունի, պարունակում և քլորո-
ֆիլի հատիկներ։ Առա Caulerpa—ն
(Նկ. 2)։ Սա իր արտաքին ձևով
արգեն վերին աստիճանի նման
և բազմաբջիջ որդանիզմներին,
նա ունի հողում խրված, անդույն
սրմատի նման, ճյուղավորված
լասեր. ունի ցողունանման
մաս, տերեներ, վորոնք հիշեցը—

նում են ծաղկավորների բարդ
տերեր. ինչ անել, սրանց բջիջ
համարել, թե բազմաբջիջ, որդանիզմ, նրանց կառուցվածքի

ուսումնասիրությունը ցույց և տալիս, վորչնայած նրանց մարմ-
նի մասերի դիֆերենցիացիային և աշխատանքի բաժանմանը,
չնայած բազմարջիջ որդանիզմի հետ նրանց ունեցած արտաքին
նմանությանը, սրանք բազմորդան որդանիզմներ չեն, վորով-



Նկար 2. Caulerpa ջրիմուռը՝ բնական մեծությամբ. Առաջատանման մասը.
Տ—ցողունանման մասը. Վ—նրա աճման կետը. Ե—տերևանման մասը

հետեւ բջիջային կառուցվածք չունեն: Դրանք ներկայացնում են
մի ընդհանուր թաղանթ, վորի տարբեր մասերը տարբեր կերպով
ձևափոխվել են, լցված պրոտոպլազմայի մի ընդհանուր զանգ-
վածով, բազմաթիվ կորիզներով և քրորոֆիլի հատիկներով: Բայց
սրանց մենք մի կաթիլ պրոտոպլազմա, մի կամ մի քանի կորի-
զով բջիջ ել չենք կարող համարել. սրանք բազմարջիջ որդա-
նիզմ չլինելով հանդերձ, այդ որդանիզմի առանձին բջիջներին
բնակ նման ու համարժեք չեն. կարծ ասած՝ սրանք բջիջներ ել
չեն. սրանց մենք կարող անք կոչել անրջիջ որդանիզմներ:

Այս որդանիզմները կարծեք թե մի փորձ են՝ զարգանալու,
կառուցվածքի և փունկցիաների դիֆերենցիա ձեռք բերելու
համար, սակայն առանց մարմինը բջիջների տրոհելու, առանց
բջիջային կազմություն ունենալու: Բայց սփորձն անհաջող է

գուրս յեկելք. նման որդանիզմերի ահասկների և թվի սակառ-
վոթյունը, քիչ տարածված լինելը, այն ել միմիցին ջրային
միջավայրում, զոյտթյան պայքարում բջիջային կառուցվածք
ունեցողների համեմատթյումը զարգացման հետին պլանի վրա
մնալը հենց առացուց և այն բանի, վոր զարգացման այդ հա-
նագարներ ճիշտ չի յեկել վոր զարգացման բնական և ճիշտ հանա-
պարհը բջիջային կառուցվածք ունենալն և և վոր բջիջային
կառուցվածքը մի պատճեական յերեալի չի

Ավելի բարդ որդանիզմեր են և ֆունկցիաների ուժեղ դիմե-
րենցիացիա ունեն կենսանական աշխարհին պատկանող մի շարք
միկրոօրդանիզմեր, որինակ՝ վորոշ կենսանիների աղիքներում
տարրող ինֆուզորինները. Սրանց մաս զիֆերենցիացիան այն
աստիճան խորն և գնացել վոր պարանական յերկու կորիզներից
վորքը միմիցին մասնակցում և սեռական ակտին, խոր խոշորը
ռղեկապարում և մյուռ կենսական պրոցեսները և այլն

Բայց չնայած զրանք, որանք ել բջիջային կառուցվածք
չունեն, որանք ել անբջիջ որդանիզմեր են, վորովհետեւ վորիցեւ
բջիջ մենք նրանց հետ համեմատեն չենք կարող չնայելով նրանց
մարմնի և ֆունկցիաների բարդ զիֆերենցիացիային. Պարզ է
ուրեմն, վոր որանց և բազմաբջիջ որդանիզմի մարմինը կաղմող
բջիջների համարժեքության մասին ել խոսք լինել չի կարող:
Այժմ զառնանք միկրոօրդանիզմների ցածր խմբերին Սրանքը
մանավանդ նրանց վորոշ ներկայացուցիչները, ինչպես, որինակը,
ամյորանները, առնասարակ մերկ բջիջները և շատ ուրիշ որդա-
նիզմներ, առաջին հայացքից, թվում և, թե համընկում են
բջիջային տեսության բջիջին վերը տված բնորոշմանը, թվում,
և, զոր նրանք և բազմաբջիջ որդանիզմի բջիջները համարժեք
են, քանի վոր իրոք նրանցից շատ շատերը կաղմված են պրոտո-
պլազմայից, վորն ունի մեկ կամ մի քանի կորիզ: Սակայն այդ
նմանությունը արտաքին և, ձեւական վերեւում տավեց, վոր կյանքը
կապված և միարողջական որդանիզմի հետ. հետեւապես բազմաբջիջ
որդանիզմի մասները, բջիջները, առանձին վերցրած, կյանքի
անհատ միավորներ, միարողջական որդանիզմներ չեն, այլ մասներ:
Նման որդանիզմի, մընչդեռ միկրոօրդանիզմների այդ ստորին
տեսակներն ունեն իրենց անհատական կյանքը, վորեիցե որդա-
նիզմի մասներ չեն հանդիսանում. նրանք կը ում են կյանքն իր

բոլոր արտահայտություններով. նրանք, թեև տարրական, բայց բազմարջիշ որդանիղմի մեջ միմիայն սեռական բջիջներին կարելի յի համարել լիովին համարժեք ամբողջական որդանիղմին, և կարող են համեմատվել անրջիշ և միարջիշ որդանիղմների համամեմայն զիպս որդանիղմներ են, ուրեմն ամբողջություն են ներկայացնում:

Յեկ վերջապես համարժեք չեն վնչ ստորին միկրոռդանիղմներն անբջիշ որդանիղմներին և վճռ ել սրանք՝ բազմարջիշ որդանիղմներին Սրանք, չնայած կենսակիր ամբողջական որդանիղմներ են, սակայն զարգացման տարբեր ընթացքի և ստագիայի վրա յեն գտնվում. հետեւապես իրանց ընդհանուր նմանություններով հանդերձ, նրանք միաժամանակ վրակական տարբերություններ են հանդիսանում՝ իրանց սպեցիֆիկ որինաչափություններով:

Վերը ասածները կարող ենք ամփոփել այսպես, բջիջային տեսության միջոցով վերջնականապես հաստատվեց, բույսերի և կենդանիների բույսը մասերը կամ բջիջային կառուցվածք ունեն և կամ առաջ են գալիս բջիջներից (այն հյուսվածքները, վորոնք բջիջային կառուցվածք չունեն), վոր այդ բջիջն իր ընդհանուր հասկացողությամբ հանդիսանում և մի կաթիլ պրատոպլազմա՝ մեկ կամ մի քանի կորիզով, սակայն յերբ վերցնում ենք վորոշակի բջիջ, որինակ՝ բուսական որդանիղմի ըլիջ, նրա մի կաթիլ պրատոպլազման և մեկ կամ մի քանի կորիզով պատկերացնում ենք միջապատված թաղանթով, վորն ինչպես տեսնելու յենք հետաքայլում խորոր նշանակություն ունի բուսական աշխարհի զարդացման համար, չնայած այն բանին, վոր բջիջի մեռած մասն և հանդիսանում: Բջիջային տեսությունը հաստատեց պրատոպլազմայի և կորիզի բարդությունը, նրանց գերը, նրանց բջիջի կենդան մաս լինելու Բջիջային տեսությունը մշակողները տալով փաստական նյութի այս ճշմարտությունները, ուղղելով այդ տեսության նախակարառապետների սխալները, սակայն հետեւողականորեն մինչև վերջը գնալ չկարողացան. նրանք պրատոպլազմայի և կորիզի խիստ բարդությամբ հմայված, չկարողացան ճիշտ կերպով պատկերացնել բազմաբջիջ որդանիղմի և նրա մասը կազմող բջիջի փոխհարաբերությունը և այդ բջիջները համարեցին ամբողջական որդանիղմ, իսկ բույսը կամ կենդանին —

փորպիս մի զազոթ, վորպես մի թվարանական զումար այդ
բջիջ-որդանիզմների, վորոնց կյանքերի զումարը առլիս և այդ
իրեն զազոթ պատկերացված որդանիզմի կյանքը, այլզգիսով
առաջարկելով իրենց նախորդների — Շվանի և Շիկենի — այդ
խնդրի ձերա գրածքը, նրանք որդանիզմի հնրա մասի՝ բջիջի
հարարերությանն արզպես պատկերացներով մի այլ հակասության
հանգեցին, — այն հակասության, վոր նրանք բջիջի այն բնորու-
շումը, վոր վերաբերցում և բազմարժիջ որդանիզմի բջիջներին,
առաջածեցին նաև միկրոորդանիզմների վրա, հավասարության նշան
զնելով նրանց միջին Յնկ վերջապիս յերեսությների այլորինակ
պատկերացումից բղիսում և մի այլ խոչը հակասության,
— յիթե բազմարժիջ որդանիզմի կյանքը վորակապես հա-
մարժեք և նրա մասի՝ բջիջի կյանքին, և յեթե այդ բջիջն իր
հերթին համարժեք և միկրոորդանիզմներին, առա միկրոորդա-
նիզմների և բարձր կարգի որդանիզմների մէջ և լ վորակական
տարրերություն չկա, այլ ամենուրեք տարրերությունը քանա-
կական և, իսկ այս ժիառում և որդանական աշխարհի գարզացումը:

Ենդունելով բջիջացին աևսության զրական կոզմը, նրա փառ-
ական ուսումնասիրությունը, պետք և զեն զպրանել զրանից հան-
ված հետեւթյունները, սխալ յեղբակացությունները, վորով-
հետեւ բացի այն, վոր այդ յեղբակացությունները անընդունելի
ու խորթ են, այլև նրանցից բղիսում են զործնական սխաններ։
Չընդունելով միկրոորդանիզմների, բազմարժիջ որդանիզմների և
նրանց մարմինը կազմող բջիջների վորակական տարրերությու-
նը, որդանիզմը վորպես ամբողջություն իր սպեցիֆիկ որինաչա-
փություններով զեն և շպրափում, ուսումնասիրության արենայի
վրա, վորպես որյեկտ մնում և վերջին հաշվով բջիջը Հետեալիս,
յիթե ուզենանք ուսումնասիրել, ճանաչել բույսերը, վորպեսը
կարողանանք ակտիվ կերպով ազգել նրանց վրա, փոխել, փոփոխել
նրանց կենսական յերեսությներն այնպես, վոր նրանցից շատ
արդյունքներ ստանանք, պետք և զիմենք բջիջին, պետք և այն
ուսումնասիրենք, քանի վոր բջիջն ուսումնասիրելով՝ ուսումնա-
սիրած կլինենք և ամբողջ բույսի կյանքը։ Սակայն այդ կլինելը
ապարդյուն աշխատանք, վորովհետեւ մենք զիտենք, վոր ամբող-
ջական բույսը, նրա ամբողջական կյանքը, նրան հատուկ որի-
նաշափություններն այն չեն, ինչ վոր են նրա կառուցվածքը

մեջ մտնող բջիջը, նրա կենսական արտահայտությունները, որին աշխափությունները Ուստի արդյունավետ աշխատանքի համար, զործնական արդյունքների համելու համար, անհրաժեշտ և բջիջի ուսումնասիրել նաև ամրող չական որգանիզմը, անհրաժեշտ և բջիջն ուսումնասիրել որգանիզմի ամրող չական ուսումնասիրել յամբ, վորպես նրա մասը, ինչպես Շվանը և Շլայդենն են ասում վորպես սարուկտուրային միավոր:

Որգանիզմներն ուսումնասիրելու ընթացքում բջիջը վորպես չափանիշ ընդունելը միկրոռորգանիզմներին և բազմարջիջ որգաններին, միաժամանակ նրանց համարժեք համարելը, հանդում և եկոլոցիչային իրոք, այդ գեպքում ել ինչպես պետք և բացատրել որինակ, բույսերի խենոսինթեզից փոտոսինթեզի անցնելը, ինչպես պետք և բացատրել պատկերացնել միարջիջ որգանիզմներից բազմարջիջ որգանիզմների առաջ գալը, ինչպես մեկնարաններ նրանց մարմնի այն խորը զիֆերենցիային, աշխատանքի բաժանումը, վոր ունեն բույսերը, կենդանիները: Վերջիվերջութեալ վարակական տարրերություն չկա միարջիջ և բազմարջիջ որգանիզմների մեջ, յեթե հավասարության նշանով կապում են նրանց միմիանց, հապա ել ինչն և բազմարջիջ բարդ որգանիզմի առաջանալու խմասեց, եյությունը: Անցնենք այս խնդիրին ինչպես և ինչպես պետք և բացատրել բույսերի բջիջային կառուցվածք ունենալու հանդամանքը:

Ցեղ այդպես, արդեն անժխտելի փաստ և այն, վոր բոլոր բարձր կարգի բույսերն անխտիր բջիջային կառուցվածք ունեն: Ինչ խոսք, վոր այդորինակ բարդ ստրոկտուրա ունեցող ժամանակակից որգանիզմներն ի սկզբանե գոյություն չեն ունեցեն նրանք առաջացել են նախնական պարզ միարջիջ բույսերից¹⁾,

1) Այստեղ անհրաժեշտ է հիշել վոր այսոր ել ընության մեջ հանգիպում ենք բազմաթիվ բույսերը, վորոնք կազմված են մը բջիջնց: Սովորաբար այդ բույսերը համարվում են բուսական աշխարհի պիոններները, առաջին ներկայացւցիչները. ուրեմն նըսանք կազմել են կյանքի ծագման շրջանում, ապա ուրեմն բազմաթիջ որդանիզմները սերվել են զբանցից: Այդ ճշշտ չեւ Արդ բույսերը շատ պարզ ու հասարակ են ժամանակակից այն բույսերի համեմատությամբ վորոնք գերիշխող են հանգիստանում բայց նույնքան ճշմարդտ և այն, վոր նըսանք ել հենց սկզբից անառև չեն յեղել, ինչպես վոր այժմ են, վոր նըսանք

Նրանք պայմանների և յերկարառությամբ ժամանակի որդյունք են: Գոյսթյան կովի մեջ անբնագուտ հարմարվելով միջավայրին, նրա անրնագուտ փափախված պայմաններին և հետեւողեւ իրանց կառարությունը կանկցիաներին, նրանք բազմարձիջ են գործել, իսկ այդ բազմարձիջ լինելու, ինչպես առնելու յենք, նախապայմաններին գուրաքանչյուր բոյս կազմվում և հարյուրափոր, հազարափոր, անդամ միլիոնափոր, շատ փոքրիկ, սովորաբար հասարակ աչքով անսահսանելի, հայտնի ձեւ է կառուցվածք անհցող մասնիկներից -բջիջներից:

Բազմարձիջ որդանիդմբ մեջ տարրեր բջիջները տարրեր տեղ և զիրք են գրավում, մեկը մակերեսին և զանգում, մյուսը՝ կենարոնական մասերում, մեկը ցածր զիրք ունի, մյուսը՝ բարձր, և այլն ձետեղիու, թե միջավայրի նկատմամբ և թե որդանիդմի ընդհանուր սիստեմում նրանք զանգան պայմաններում են լինում, տարրեր ազգեցաթյունների յեն յենթարկվում: Այդ հանգամանքն առա պատճառ և զանուում այդ բջիջների ներքին զիրքերնցիացիայի, զոյսթյան կավում իրանց շրջապատի, միջավայրի պայմաններին, արտաքին ազգեցաթյուններին հարմարվելու ճշնապարհով բույսի տարրեր բջիջները տարրեր, բայց հայտնի ձեւ կառուցվածք են ձեռք բերում և որդանիդմի ընդհանուր սիստեմում հարմարվում են հայտնի փունկցիա, սպեցիալ աշխատանք կատարելուն: Որդանիդմի մեջ տեղի յեւ ունենում բջիջների զիրքերնցիացիա:

Սակայն զարգացումը զբանով չի ավարտվում: Միանման պայմաններում զանվոր, հետեւապես միանման փունկցիա և կառուցվածք ունեցող բջիջներից կազմակերպվում են բազմաթիվ

շատ բարզ են բուսական աշխարհի պիտոններին, կյանքի ծագման շրջանում կազմված բույսերի համեմատությամբ: Յեկ այդ զարմանալի չե, յեթե բուսական աշխարհի պիտոններն հանդիս գալուց, չկյանքի ծագման շրջանում կազմված բույսերից մինչ մեր որերը միլիոնափոր տարրեր են անցել, վորի ընթացքում այդ պիտոններն անշարժ, բարացած չեն մեացել այլ անընդհատ զարդացել: Են հասկանալի յե, վոր այժմ զոյսթյուն ունեցող միարձիջ բույսերը, վորոնք սովորաբար համարվում են բազմարձիջների նախահայրերը, ընազ հար և նման չեն յեղել այն միարձիջ բույսերին, վորոնցից առաջ են յեկել բազմարձիջ բուսական սովանիզմերը: Նրանք անհամեմատ ազելի պարզ, հասարակ են յեղել այժմ գոյություն ունեցող միարձիջ բույսերի համեմատությամբ:

հյուսվածքներ, վորոնք ունենում են յուրահատուկ կառուցվածք և փունկցիա: Տեղի յե ունենում, այսպես ասած, հյուսվածքների դիմերենցիացիա: Հյուսվածքներից ել կազմվում են որգանները, վորոնք միասին կազմում են բազմարձիջ ամբողջական և բարդ որգանիզմ:

Այսպիսով տեսնում ենք, վոր բազմարձիջանիությունը, բջիջային կառուցվածքն որգանիզմի կազմության և փունկցիաների դիմերենցիացիայի, հետեապես՝ նրանց զարգացման և կատարելագործման նախապայմանն ե հանդիսանում, վորովհետեւ, ունենալով բջիջային կառուցվածք և դրա հիման վրա ձեռքբերելով կառուցվածքի և փունկցիաների դիմերենցիացիա, բույսերն ավելի ճկուն, զիմացկուն են զառնում, նրանք ավելի լավ և արագ են հարմարվում միջավայրի կենսապայմաններին, զանազան աղդեցություններին, հետեապես և իրանց փունկցիաներին, հանգամանքներ, վորոնք գրավականներ են գոյության կավում վոչ միայն զիմանալսւ, այլև հաղթանակելու համար:

Ահա, վորպես որինակ, հսկա ընկողենին. նա կազմված ե միլիոնավոր բջիջներից, ունի արմատներ, ցողուն, տերեներ, տալս և ծաղիկներ, պտուղներ և սերմեր իրանց յուրահատուկ կառուցվածքով և փունկցիաներով:

Ահա արմատը. նա աճելով յերկարում է, խիստ ճյուղավորվելով և հաստանալով՝ տարածվում ե հողաշերտերի մեջ, բույսն ամուր կերպով կալում ե նրա հետ. Նա հողից ծծում և անհրաժեշտ ջուրը և հանքային նյութերը, տանում և դեպի ցողունը. Ահա այն հիմնական փունկցիաները, վոր կատարում ե արմատը, վորոնց համապատասխան ել ներքին կառուցվածք ունի, նրա ծայրամասը կազմված ե բարակ պատերով, պրոտոպլազմայով հարուստ, մեծ-մեծ կորիզներով, կենսունակ բջիջներ ունեցող մի սաղմնային հյուսվածքից. Այդ հյուսվածքի անընդհատ աճման չնորդիվ արմատը յերկարանում ե: Ծայրի այդ աճող մասից մի քիչ դեպի վեր արմատը ծածկված է բարակ պատերով, կլանման մեծ մակարդակ ունեցող բջիջների մի շերտով, այս պես կոչված՝ ծծող հյուսվածքով, վորը բավականի հաջողությամբ հողի միջից կլանում ե ջուրը և հանքային ավերը. Արմատի հենց այդ տեղի, կենարունի մոտիկ գտնվող, մասերից սկիզբն ե առնում ձևափոխված, խողովակներ գարձած բջիջների մի հյուս-

վածք, վորի միջով կտառքավում և նյութերի աեզարժը՝ արժանաներից գեղի աերեները և աերեներից գեղի յետ Արժարի վորոշ բջիջների պատերը խիստ կերպով հաստանաւմ են, դիմաց կուն են զանաւմ, կազմակերպվում և այսպիս կոչված մեխանիք կական հյուսվածքը, նրա ցողունին մասիկ գանցող մասերը սազմացին, անընդհատ աճող, կամրիսում կոչված հյուսվածքի շնորհիվ հաստանաւմ են, և խիստ զարգանաւմ և նրանց փայտացին մասը Այդ մեխանիքական հյուսվածքը և փայտացին մասերն արմասը զիմացկուն են գործնում և, չնայած յերեմի վշող ունեղ քամբներին, չեն պոկիսմ հոգից, բույր կանգնած են պահաւմ:

Այս ծասի բանը, նա իր վրա կրում և հյուսվերի, տերեն ների և պատզների ծանրությունը, նու հանդիսանում և ացմատներին և աերեներին միմիանց հետ կապող սղակը, վորի միջով կատարվում և նյութերի աեզարժը գեղի արժաները և աերեները, նրա մեջ կուտակվում են սննդանյութերը, և այլն Ահա ցողունի հիմնական փունկցիաները վորի համապատասխան ել նա, կազմվածք ունի:

Վերը հիշված կամրիումի, սազմացին բջիջներից կազմված հյուսվածքի գոյաթյան շնորհիվ բույրն աճում և, առանձնապես նրա փայտացին մասը խիստ կերպով աճում, հաստանում և նրա մեջ այնպես, ինչպես արմատում վորոշ բջիջներ զիմերենցիւլով կազմում են մեխանիքական հյուսվածքը, և այսպիսով հաստացած, ամուր բանը սազարթի համար բավականին կայուն պատվանդան և զանաւմ: Անոթների հյուսվածքը սկսելով արմատներից անցնում և ցողունի միջով մինչեւ տերեները, խիստ կերպով հեշտացնելով նյութերի աեզարժությունը, ողում լինելով, հեշտառթյամբ կարող եր մեծ քանակությամբ ջուր գորոշ շիցնել վորը մահացու կլիներ նրա համար, — նա կարող եր չորսանալ Զանազան պարագիաներ հեշտությամբ կարող ելին թափանցել նրա ներքին հյուսվածքների մեջ և այնտեղ կատարել իրանց քայլացիչ աշխատանքը, Բայց այդ, նորմալ պայմաններում, այդպիս չի լինում, վորովհետև ժամանակի ընթացքում բույսերը ձեռք են բերում համապատասխան հարմարեցումներ, նրանց պերիփերիայի բջիջները, հայտնի ձեռք ձեւափոխվելով, կազմում են վերնամաշկի և խցանացին հյուսվածքները, վորոնք իրանց հարմարանքների շնորհիվ խիստ կերպով նվազեցնում են

գոլովիացումը, արգելափակում ևն պարագիտների մուտքը ներ-
քին հյուսվածքները:

Յել վերջապես ահա տերել, Նրա մեջ կատարվում ե որ-
գանական նյութերի սինթեզը, վորի համար անհրաժեշտ CO_2 -ը և
լույսը նաև ստանում ե մթնոլորտից : Ուրեմն վորքան մեծ ե նրա
կլանման մակարդակը, վորքան նա լավ ու վորոշակի դիրքով ե
տարածված մթնոլորտում, լույսի տակ, այնքան ել շատ լույս և
 CO_2 կարող ե կլանել, հետեապես՝ ավելի շատ որդանական նյու-
թեր կարող ե սինթեզել և լավ աճել Յել իրոք, զոյության
կայում զարդացումը հենց այսպես ել ընթացել ե. տերեներն ու-
նեն մեծ մակարդակ. շնորհիլ մեխանիկական բջիջներից կազմ-
ված հյուսվածքի և անոթների, վորոնք տերենում մի ամրող
ցանց են կազմում, նրա մակարդակը, մեծ լինելով հանդերձ,
բավականին դիմացկուն ե և տարածված ե մնում: Ունենալով
ցողունի ընի նման պատվանդան իր՝ հայտնի ձեռվ դասավորված
ճյուղերով, տերեները կարողանում են մթնոլորտում, տարածու-
թյան մեջ լավ դիրք ընդունել, ավելի ռացիոնալ կերպով ոգտա-
գործել լույսը և CO_2 -ը: Տերեները, ունենալով մեծ մակարդակ,
լինելով բարակ և նուրբ, շատ հեշտությամբ կարող ելին չորա-
նալ շատ ջուր գոլորշիացնելու հետեանքով: Բայց նորմալ պայ-
մաններում այդ տեղի չի ունենում, վորովհետեւ այստեղ ել բջիջ-
ների արտաքին շերտը ձեռփոխվելով կազմում ե եպիդեմիա-
ծածկող հյուսվածքը իր բազմապիսի հարմարանքներով, վորը
բավականին հաջող կերպով պաշտպանում ե տերեներին ֆունկ-
ցիաներին համապատասխան՝ բջիջների և հյուսվածքների դիֆե-
րենցիացիա նկատում ենք նաև նրա ներքին կառուցվածքի
մեջ, վորը հետաքայում կը տեսնենք: Հապա պատկերացնենք աշ-
խատանքի և կառուցվածքի նմանության խորը դիֆերենցիացիա
առանց բջիջային կառուցվածք ունենալու: Այդպիսի պատկերա-
ցումն անհնար և անհիմն կլիներ: Մի բոպե պատկերացնենք, վոր
այդ ընկուղենին բջիջային կազմություն չունի: Ուրեմն նա պետք
է ներկայացներ մի հսկա թաղանթ, պարկ՝ լցված պրոտոպլազ-
մայի, կորիզների և այլ մասերի մի ահազին զանգվածով: Միթե
այդ որինակ կառուցվածքով նա կկարողանար ձեռք բերել այն-
պիսի հարմարանքներ, այնպիսի դիֆերենցիացիա, վոր նկարագ-
րեցինք վերևում, Վհչ:

Ավելի քան նրա մարմնի մի մասը կարող էր բնագունել ար-
 մասի, մյուսը ցողունի և 3-րդը տերեների տեսքը Սակայն այդ
 մասերն իրենց ներքին կառացվածքով և աշխատանքի բաժան-
 ման այն բարդ սխահմավ, զոր նկարագրեցինք, իսկական ար-
 մասի, ցողունի և տերեների յերեք նման լինել չեցին կարող:
 Յեթե բոյուր բջիջային կառացվածք չանենար, հապա արմաս-
 ների մեջ ինչպես և վնասից պիտք և առաջ զային ջուր փո-
 խազդրող անոթները, ջուր և հանքային նյութեր ծծող հյուսված-
 քը, մեխանիկական և այլ հյուսվածքները, ուրագ և, զոր զրանք
 առաջ զալ չեցին կարող. այդ բոլոր փունկցիաները կատարելու
 յեր այդ արմասանման մասն իր ամրոց մարմնով, մի հանգա-
 մանք, զորը խիստ կերպով իջեցնելու յեր աշխատանքի արտադ-
 րողականությունը ևայլն նման որպանիզմը զոյության կըռ-
 վամ վաշնչացման եր զառապարավելու. նա ճկուն, զիմացկուն
 լինել, միջավայրի բազմաթիվ և բազմազան սույնաններին որպե-
 ս բայց հարմարվել չեր կարողանալու, նա առապալինելու յեր վոչ
 միայն ընկազենու. նման հակա ծառը, բջիջային կառացվածք
 չունենալուց զարգացման ժամանակակից աստիճանին չեր կարող
 համեմեք այլի ցամաքային սպայմաններում ամենավոր խոստա-
 րույան անգամ, ամենասառըին ցազունատերեավոր բոյուն խև,
 իր զոյությունը պահեք զարգանալ չեր կարող:


Բարեբախարար բնության մեջ կան մի քանի որինակներ,
 վորոնք հենց զալիս են ապացուցելու և հաստատելու մեր ասած-
 ները:

Անցնելով բջիջների կազմության ուսումնասիրությանը,
 կտեսնենք, վոր նրա ամենազլաւալոր և ամենակարենը մասը:
 Նրա կենդանի սպիտակուցային մասն և, վորը կոչվում և պրո-
 տոլլազմա:

II. ՊՐՈՏՈՊԼԱԶՄԱ

Պրոտոլազմայի անունն առաջին անգամ ավել և նրան
 1846 թ. Հուգո Փոն Մոլլ (Mohl). Այդ անունով նա ուզում եր
 այն իմաստն արտահայտել վոր այդ մարմինը նախնական կեն-
 դանի նյութին և Պրոտոպլազման թափանցիկ, կիսահեղուկ նյութ
 և Սկզբում, յերբ կազմվում և նոր, մատադ բջիջ, պրոտոպլազ-

ման առատ և լինում և լիցնում և բջիջի ամբողջ ներքին մասը, նրա ամբողջ պարունակությունը և ներկայացնում ե սպիտակուցային նյութերի մի բարդ խառնուրդ (Նկար 3): Այդ բջիջներն ունենում են ուռած, լարված վիճակ և թարմ արտաքին տեսք: Այդ նրանց առողջ և նորմալ վիճակն ե հանդիսանում է Հետագայում՝ բջիջի թաղանթի ծավալն և պըռտոպլազմայի զանգվածի աճման մեջ անհամաշափություն և ստեղծվում: այնքան պըռտոպլազմայի կազմվում, վոր կարողանար լինել թաղանթի ամբողջ ծավալը (B, C): Գիտնականներն այդ բացատրում են ըույսի շրջապատում գտնվող մատչելի աղոտի սակավությամբ: Այդ անհամաշափության հետևանքը կլիներ այն, վոր պլոտոպլազման, լինելով կիսահեղուկ նյութ, կառոկվեր թաղանթից և կդրավեր նրա ծավալի միայն մի մասը: հետևապես միայն այդպես չի լինում՝ գոյության կռվում բնական ընդության ճանապարհով ձեռք բերված հարմարանքների շնորհիվ:



Նկար 3. *Fritillaria* բույսի արժատի բջիջները:
Պ—պլոտոպլազմա, Կ—կորիզ, ԿԿ—կորիզակի, Տ—
փակուղներ: Մեծացրած և 550 անգամ:

վիճակը՝ նա կթառամեր և կկորցներ իր կենսունակությունը: Սակայն այդպես չի լինում՝ գոյության կռվում բնական ընդության ճանապարհով ձեռք բերված հարմարանքների շնորհիվ: Հետագայում տեսնելու յենք, վոր կենսական գործառնությունների հետևանքով բջիջներում արտադրվում են զանազան

որդանական թթուներ, վոր նրանցում կռառակրգում են զանազան աննպահյոթեր, շաքար և տյի՛ն, վորոնք հեշտությամբ լուծվում են ջրում, Այս այլ նյոյթերը զիփաւայի և սոմոսի սրենքներով զրսից ջար են ձնում և լուծվում են նրա մեջ, կազմելով այսպես կոչված րջջանյաթի կաթիլներ, վորոնք սխուլ կերպով անզանվել են վակուումներ՝¹⁾, Այդ ճանապարհով բջիջի պրոստացիոզայում ասած անում են մեծ թփով և նրա բոլոր մասերում քիչ շատ հավասար կերպով զառավորված՝ վերը նշան որդանական նյոյթերի լուծույթի կաթիլներ — վակուումներ։ Դրանց շնորհիվ բջիջում ապատ արածությունն չի ոռյանում, պրոստացիոզայում մնում է պատերի տակ, նրան հաղված, վորով պահպանվում և նրա կենառնակ նորմալ վիճակը

ժամանակի ընթացքում, բջիջի ծավալի հետագա մեծացման զուգընթաց, բջջանյութի այլ կաթիլները, վակուումները, ջրի նոր քանակություններ ծներով մեծանում են և ձուլվելով միմյանց հետ՝ կազմում են ավելի մեծ վակուումներ։ Դրանք իրենց մերժին միաձուլվում են և առլիս են մեկ ընդհանուր խոշոր վակուուր, վորը զրավում և բջիջի կենարանական մասը, Այսպիսի բջիջներում պրոստացիոզան և կորիզը մի ներշնչանի ձևով գնում են բջջապատերի տակը (նկար 3): Բայց միշտ այլպես չի լինում։ Հասակ տած բջիջներում ել յերբեմն կորիզը մնում և կենարունում, այդ գեղաքում պրոստացիոզայի մի մասը շրջապատում և կորիզը, իսկ մյուս մասը զանվում և պատերի տակ, վորոնք միանում են միմյանց հետ պրոստացիոզային բարակ թելիներով։ Այսպիսի բջիջներում ստացվում և պրոստացիոզայի մի ցանց, վորի կենարունումն և կորիզը, իսկ ցանցի արանքները լցված են բջջանյութով։ Այսեղ անհրաժեշտ և մատնանշել պրոստացիոզայի մի հատկությունը, առանց վորի բջիջի աճումը վերը նկարագրված ձևով չեր կարող առաջ գալ Խնդիրն այն և, վոր պրոտեստազմայի, մանավանդ նրա արտաքին շերտի և վակուումները շրջապատող չերտի միջով բոլոր նյոյթերը հավասարապես չեն անցնում Վորոշեր շատ լավ անցնում են.

1) Վակուուլ բառն տառշ և գալիս լատինական վակուում բառից, վոր նշանակում և զատարկությունն Այս առթիվ պետք և տաեւ, վոր առաջին հետազոտությունները չեն կարողացնել պարզն այդ կաթելները բնույթը և նման սխալ տերմինով են անվանել այն, վոր մինչ այժմ ել մնում և բջջարանության մեջ


մյուսները վատ և դանդաղ են անցնում. և վերջապես կան նյութեր ել, վոր բոլորովին չեն անցնում, Տվյալ գեպքում բջջահյութի մեջ յեղած որդանական հյութերը չեն անցնում, կամ շատ վատ են անցնում, սինչեռ ջուրը հեշտությամբ անցնում եւ թրա հետեանքը լինում ե այս, վոր այդ նյութերը բջիջց գուրս գալ չկարողանալով, զրախց մեծ քանակությամբ ջուր են ծծում, և բջջահյութի մասսան մեծանում եւ Վորքան բջջահյութի մասսան մեծանում ե, այնքան նրա ճնշումը (վորը կոչվում ե ոսմոտիկ ճնշում և մի քանի ատմոսֆերի յե հասնում) պրոտոպլազմայի վրա ներգուստ մեծանում ե, վորի ազդեցության տակ կիսահեղուկ պրոտոպլազման ձգվելով տարածվում ե, մինչեւ հասնում ե բջջապատերին և հավում ե նրան։ Հասնելով բջջապատերին, պրոտոպլազման իր հերթին ճնշում ե առաջացնում բջիջի վրա, ձգում, լարում ե նրան, վորից ստացվում ե բջիջի՝ վերը նկարագրված թարմ, կենսունակ վիճակը։ Յեթե ջրի պակասության պատճառով բջջահյութի ջուրը պակասում ե, այն ժամանակ բջիջի տուրգորն ընկնում ե, նրա թագանթը կորցնում ե իր լարվածությունը, բջիջի պատերի տակ գտնվող պրոտոպլազման այլևս այնպես մեծ ոսմոտիկ ճնշում չի գգում իր վրա բջջահյութի կողմից, և յեթե ջուրը շարունակի գոլորշիանալ պրոտոպլազման կարող ե բջիջի պատերից պոկվել և հավաքվել բջիջի մեջը, մնացած բջջահյութի ջուրջը։ Այս յերելու յթը կոչվում է պլազմոլիզ։

Պլազմոլիզը ցույց ե տալիս, թե արդյոք կենդանի՞ յե բը Ջիջը, թե մեռած։ Պլազմոլիզը ջրի պակասության ցուցանիշն ե, և վորովհետև ջուրը բույսի մննդառության մեջ ամենազլսավոր տեղն ե բռնում, ուրեմն պարզ ե, վոր պլազմոլիզն արդեն բջիջի տկարության, հիվանդության նշանն ե։ Տուրգեսցենցիա հայտնաբերում են բույսի թարմ, աճող մասերի բջիջները, յերբ ջուրը և սնունդը լավ են հասնում բույսին. պլազմոլիզը դիտում հնք դաշկացած, թառամող տերեների և բույսի ուրիշ որգանների բջիջների մեջ։ Յերբ ջուրը գոլորշիանալու պատճառով հեռանում ե բջիջի միջից, բջիջի զանազան մասերը կորցնում են իրանց ջուրը հետեւյալ հերթով. նախ ջուրը գոլորշիանում ե բջջահյութից, հետո՝ պրոտոպլազմայից և բջջակորիզից և վերջապես արդեն

բջիջի պատերից *): Յեթե մխառժամանակ բջիջները մնան պլազ-
մոլիաթիկ դրության մեջ, նրանք կարող են վերականգնել իրանց
ցանկալի առարգեսցինցիայի դրությունը, յերբ նրանց ջուր առնեք,
թառամածած, փոքրացած բջիջները նորից առաջդ, խոշարացած,
բարված բջիջներ կուտանան: Բայց յեթե բջիջն առանց ջրի մնա-
յերկար ժամանակ, այդ գեղքում պլազմոլիզը պրոտոպլազմայի
և կորիցի վրա քայլացիչ ներդրծոթյուն կոնի և յեթե համարյա-
չորացած բջիջներն ջուր ել առնեք, նա այլիս յետ չի գաւանա առեր-
զեցնեց դրության, թառամածածոթյունը չի անցնի, և բջիջները
կմեռնեն: Պրոտոպլազմայի մահը, վորը պլազմոլիզից և առաջա-
նում, հետեւնեք և այն հանդամանքի, վոր յեթե կիսանեղուկի
պրոտոպլազման, յերբ կորցնում և իր ջուրը, այդ դրության մեջ
մնայ յերկար ժամանակ, յենթարկվում և յուրահատուել կառուց-
վածք անհեղող իր մասնիկների այնպիսի փոփոխության, վորը
հասրավորություն չի առաջին ջուր սահանալու գեղքում ել իր
առաջիւ կառուցիածքը վերականգնել Պետք և կարծել, վոր
պրոտոպլազմայի մահվան գեղքում, նրան իրարից հայտնի հե-
ռավորության վրա գանգոս մասնիկները միմիանց մստենում և
ձուլվում են հետազայտմ անրաժանելի կիրառվի: Պլազմոլիզ
կարող ենք առաջ բերել բջիջի մեջ արհեստական կերպով, յեթե
վերցնենք մի մամուսի տերեն, վորը շատ բարակ և լինում, և
վորի բջիջները մանրագիտակի տակ պարզ յերեսում են, մենք
կաեննենք, վոր բջիջների մեջ, նրանց պատերի տակ, պլազ-
մոլիզմա յե գանգում: Նրա մեջ շարժած են բլորովիլի կանաչ
հատիկները, և ամրող տերեի մեջ յերեսում և յուրաքանչյուր
բջիջի անգույն թաղանթը, վորը տեսողության դաշտի մեջ կաղ-
մում և մի խիտ ցանց: Բջջահյութի մեջ կա հայտնի ոսմոտիկ
ճնշում, այդ պատճառով պրոտոպլազման գանգում և բջիջի պա-
տերի տակ: Յեթե մեր պրեպարատը դնենք մի կաթիւ շաքարի
կամ աղի լուծույթի մեջ, վորոնց չափը ցույց տրված կլինի գործ-
նական աշխատանքների ձեռնորկի մեջ, մենք կտեսնենք, վոր
բջիջները մի քիչ կփռքրանան, և հետո պրոտոպլազման կսկսի
կամաց-կամաց բջիջի պատերից պոկլէլ: (Նկար 4): Առաջ նա
կեռանու բջիջի անկյուններից, հետո և մյուս տեղերից, և իբրև

*) Կա և հակառակ կարծեիր

մի գնդիկ կհավաքվի բջիջի մեջտեղը. կանաչ կլինի միմիայն այդ մասը, իսկ այդ կանաչ գնդիկի և բջիջի պատերի մեջ զըտնված տարածությունը կդառնա անգույնն Շաքարի կամ աղի լուծույթը, վորի մեջ մենք դրինք մամուռի տերեւը, մանելով բջջա-



Նկար 4. Պլազմոլիզ. S—բջջահյութ, p—պրոտոպլազմա. K—բջջակորիզ, h—բջջաթաղանթ


թաղանթի միջով բջիջի մեջ, պրոտոպլազմայի մեջ ավելի ներս անցնել չի կարող, կենսունակ, կենդանի պրոտոպլազման թույլ չի տալիս, վոր զանազան նյութեր, ինչպես այս դեպքում շաքարը և աղը, անցնեն իր միջով. նա թափանցելի չե այդ նյութերի վերաբերմամբ Շաքարի կամ աղի լուծույթը, մանելով թաղանթի միջով բջիջի ներսը, սկսում ե պրոտոպլազմայի միջով դեպքի իրան քաշել բջջահյութի ջուրը: Լուծույթին այդ հաջողվում ե այս դեպքում, յերբ ինքն իր մի միավորության մեջ ուստուիկ ճնշում կատարող ավելի նյութ ունի, քան թե բջջահյութի մեջ յեղած նյութերը: Յերբ բջջահյութի ջուրը պրոտոպլազմայի միջով գնում ե դեպքի շաքարի կամ աղի լուծույթը և խառնվում ե նրա հետ, բջջահյութի ուժը, ջրի պակասելու պատճառով, պակասում ե, և նա արդեն առաջվա ուժով պրոտոպլազման լարված պահել չի կարող: Պրոտոպլազման կծկվում ե և ինչքան ջուրը հեռանում

և բջջահյութից, պրոտոռապլազման այնքան ամելի փոքր դնդիկ և կազմում, այնքան ամելի մեծանում և բջջապլազմանիթի և պրոտոռապլազմայի մեջ գանգոս անգույն մասը, իր քանի զեղչքերում տեսնում ենք, փոքր պրոպլազմիդի ժամանակ կծկված պրոտոռապլազմայից գեղի թաղանթը բազմաթիվ շատ բարակ պրոտոռապլազմայի թելիկներ են գնում, չխօս մեր պրոտոռապլազմային ջուր ամելացնենք, շաքարի կամ ազի լուծույթը կթալանա, բջջահյութի սամափիկ ամը ամելի մեծ կլինի, քան թե պրոպլազմիդ առաջ բերող շաքարի կամ ազի լուծույթի սամափիկ ամը, բջջահյութը կամաց—կամաց կոկի պրոտոռապլազման յետ մզել զեղի բջիջի պատերը, և պրոտոռապլազման կանաչ քրոտոֆիլի հատիկների հետ միասին կոտ, կոռնի իր սառաջման զերքը, զբաղելով բջիջի ներքին ամբողջ ձափլու Այլապիսով պրոպլազմիզը կվերջանա, բջիջները կվերականդաննեն իրանց ասաջման չափերը և արտաքին ձեր Այդ յերեւոյթը կոչվում և զեղլազմուլու, բջիջները զորձյուլ առերգեցնց զրության մեջ են Յերբ պլազմոլիզը կատարում ենք յերկար բջիջների վրա, նրանց պրոտոռապլազման պատերից հետանալով, մեջանեղից հաջոկելով ըստ բջիջի յերկայնության՝ քանի դնում բարականում և, անջատվում և յերկու հնարավոր չափով դնդանե մասերի, վորոնք միասնամանակ կազմված են լինում իրար հետ պրոտոռապլազմայի բարակ թելով, հետո այդ թելն ել կարիւմ և, և մենք տեսնում ենք բջիջի պրոտոռապլազման յերկու մասում կուտակված (նկար 5): Պլազմոլիզի և զեղլազմոլիզի յերեւոյթներն ամելի հարմար և զիտել այնպիսի բջիջների վրա, վորոնց բջջահյութը զունավորված և կարմիր, վարդագույն, մանիչակագույն որինակ՝ խնձորի կեղեց, վարդի և մանիչակի պատկեր հայլն Բջջահյութի սամափիկ ամը ահազին նշանակություն ունի արմատի մաղիկների՝ սնունդ ծծելու հարցում, տերեների՝ ամառվա շոգերին ջուր ստանալու գեղքում և այլն, բայց մենք այդ կարեօր հարցերի վրա կանգ կառնենք բույսերի Փիդիոլոգիային վերաբերող բաժնում:

Պրոտոռապլազմայի հիմնական մասսան թաղանթից և բջջահյութից անջատված և ամելի թանձր և թափանցիկ, հատիկներ չողարունակող պրոտոռապլազմային շերտով, նա կոչվում և հիալինի պլազմա կամ հիալինի շերտ (ապակենման), Այս շերտը հանգիստանում և գրգիռներ ընդունող շերտ և ռեակցիա յէ տալիս հան-

գեալ այդ դրդիւները. Նրա միջոցով և կանոնավորվում նյութերի յելուծուտը բջիջում, շնորհիվ իր՝ նյութերը ունտրելու հատկության. Հետո մենք վերեկում ասցինք, վոր բոլոր նյութերը հավասարապես չեն անցնում նրա միջով:

Պլազմայի հիմնական մասսան, ներքին շերտը, վորն ավելի



ա

ծ

տ

Նկար 5. Պլազմոլիզ Օօցօգոնիում թելանման ջրիմուռի բջիջում, հավաքված պրոտոպլազման յերկու մասի և բաժանվում Խոշորացրած և 350 անգամ:

հաստ և (նրա մասսան ավելի մեծ է), պարունակում և բազմաթիվ մանր հատիկներ, վորոնք կոչվում են «միկրոողներ». Նա ավելի հեղուկ և և մուգ գույն ունի: Պրոտոպլազմայի այս շերտը ծառայում և ըջիջի մննդառառությանը. Նա ընդունում և հում մննդանյութերը և յենթարկելով նրանց քիմիական, ֆիզիկական, մեխանիկական և ֆիզիոլոգիական մշակման, մարսում, դարձնում և այսպիսի նյութեր, վորոնցից կազմված և ինքը: Ինչ վերաբերում և պրոտոպլազմայի նույրը կազմությանը, Գեյցմանի հին տեսության համեմատ, վորն ընդունված և շատ գիտնական ների կողմից, պրոտոպլազման ներկայացնում և մի խիտ ցանց, վորի ծակերը լցված են միատեսակ մածուցիկ նյութով: Մյուս, նույնական տարածված ուսմունքը, վորը պատկանում և Ֆլեմինգին, պրոտոպլազմային վերագրում և առանձին, խիտ և իրարխականված թելերի և նրանց արանքները լցված լուսավոր միատեսակ նյութերի կազմություն: Բոլորովին յուրահատուկ հայացք նույն հարցի վերաբերյալ առաջ և ընթել Ալտմանը: Նրա կարծիքով,

ինքը՝ բջիջն արգեն մի ինչ վոր պինդ, ամուր զագործ է՝ և ամելի
ևս պարզ կենասկան միտավարաններից կազմված, վորսնք կոչված էն
բիորյասաններ և վորսնք կորցրել են տառնձին և ինքնաշկախ ապրե-
լու հատկությունների ու զրանությունների ձեռի կազմամ էն
կապտագույնու բյուրեղներ և տալիս, բածված զրաթյամբ կառնաչ-կապտագույն և Քլորոֆիլին Ե₅₅ H₇₀ O₆ Mg, բյուրեղի ձեռք, կանաչ-ու և խոկ լուծված զրաթյամբ բյուրովին կառնաչ և Քառնատիփիլի ֆորմացն և C₄₀ H₅₆ O₂, խոկ կարսի նի ֆորմուլը՝ C₄₀ H₅₆, Արեմն քառնատիփիլը կարս հնաբ կարսախնի որսիզացման արգյունքը, Ասկոյն մինչեւ այժմ՝ ոքսիզացնելով կամ վերականգնելով մեկից մյուսն սառնալու փորձերն արգյունքներ չեն տվել Խնչպես այդ պիզմենտների ֆորմունիները ցույց են տալիս, կանաչ պիզմենտը պարունակում է իր մեջ ազատ, խոկ զեղին և զաղարազույն պիզմենտները անազատ նյութեր են, Գերմանացի գիտնական Շտատն այն կարծիքն և արտահայտում տերեների աշնանացին զեղին զանափորման մասին, վոր աշնանը քրարսիփիլին պիզմենտը տերեների մեջ քայլույթիւնով վեր և ածվում իր բազագրիչ մասերի, ելեմենտների, վորոնցից N-ը և Mg-ը, վորուս կարեսը «զեղիցիցի-տային» ելեմենտներ, տեղափոխվում են բայսի մյաւս, կենդանի մնացող մասերը՝ հաջորդ տարբար բնմթացքում նորից զործածվելու համար, խոկ կարսախնը և քառնատիփիլը, վորոնք անազատ նյութեր են, մնում են տերերի մեջ և թափազ տերեների հետ ընկնում են զետին:

Բացի քլորոպլաստներից, վորոնք կանաչ են, կան անդույն և զունափոր, բայց վոչ կանաչ, պլաստիզներ Անգույն պլաստիզները, վորոնք կոչվում են լիզվալիասներ, զանվում են ավելի հաճախ ստորգեանցա որդաններում—արմատներում, պարագաներում,



Նկար 14. Phaius—ի արմատի լեզվող լուսատները; p—պլաստիզներուն կո-բիզ, 1—լիզվալիասները

կոճղարմատներում, այդպես լեզ-կոպլաստներ կարելի յեւ տեսնել Phaius վորքիսականի կոճղար-մատի կողեկի բջիջներում (նկ. 14): Այսակեղ նըանք մեծ թվով հավաք-ված են լիզվում բջջակորիզի շուր-ջը, վորից նըանք շատ ավելի մանր են և կարենը զեր են լիզ- զում այդ տեղում, յերբ տերե-ներից յեկող շաքարից ուլայի պաշար և առաջ զալիս ֆունկոր պլաստիզները կոչվում են խորօնլիասներ, Նը-րանք ներկայացնում են մանք հատիկներ կամ ցուպիկներ՝ ան-

կյունավոր, յերեք յեղջերանի, մանգաղաձե, իլիկաձեև այլ ձեռվէ:
Խըոմովլաստները լինում են նարնջազույն, դեղին, գաղարագույն,
կարմիր գույնի Նըրանք ընդհանրապես պատահում են հնացած,
ծերացած որդաններում, վորտեղ կարելի յե տեսնել այդ պլաս-
տիդների փշանալլ և քայլայիկելլ:

Խըոմովլաստները, քըորովլաստները և լեյկովլաստները՝
բոլորն ել սպիտակուցային պրոտեիդի նյութից կաղմված հիմ-
քեր ունեն. նըրանց պիգմենտների մեջ կա ցեղակցական, գենե-
տիկ կատալի կեյկովլաստը ներկայացնում ե պլաստիդի միայն
անգույն հիմքը: Գաղարի արմատում խըոմովլաստն առաջ ե
գալիս լեյկովլաստից: Յեթե արեի ուժեղ ճառագայթների տակ
դնենք գետնաբինձորի պալար, մի քանի որից նըրա արեին գարձ-
րած կողմը կկանաչի. պալարի կեղեկի տակի բջիջների մեջ գըտն-
ված լեյկովլաստներում, վորոնք անգույն ելին, առաջանում ե
քըրոփիլ և նըրանք կանաչում են: Ուրիշն լեյկովլաստը գարձավ
քըրովլաստ: Պոմիդորի պատուղը, յերբ գեռ խակ ե, ըոլորովին
կանաչ ե. հասունանալու ժամանակ քըրոփիլը փոխարինվում ե
խըոմովլաստով, և՝ պամիդորը կարմիր գույն ե ստանում:

Շիմակիր դասավի վոր պլաստիդներն առաջ են գալիս մեկը
մյուսաից՝ հաջորդարար, վոր նըրանք գուսար բջիջներում գոչ թե
նոր են. առաջ գալիս, այլ, ինչպես կորիզները, մայր բջիջից, վոր-
պես այդպիսիք, անցնում են գուստոր բջիջներին: Սակայն նորա-
գույն ժամանակներում մի շաբք հետազոտողներ նորից իրանց
կողմանակից են հայտարարում այն հայացքին, թե պլաստիդներն
առաջ են գալիս պրոտոպլազմայի մեջ գտնվող առանձին մար-
միններից, վորոնք կոչվում են խոնտրիոզոմներ: Սակայն այս
խնդիրը գետես վերջնականապես չի լուծված:

Բուսական աշխարհում, մանավանդ ծաղիկների մեջ, մենք
տեսնում ենք բազմերանգ գույներ: Դրանց առաջնորդ պիգ-
մենտները լինում են յերկու տեսակի. մեկը կաղմվում ե, ինչ-
պես մինչ այժմ տեսել ենք, պինդ պրոտեիկ մարմինների, պլաս-
տիդների մէջ. մյուսն այն հատկությունն ունի, վոր լուծվում ե
բջջանյութի մեջ. և յերբ դիտում ես միկրոսկոպով այդպիսի
բջիջներ, տեսնում ես, վոր ամբողջ բջջահյութը միատեսակ
ներկված ե ավլյալ գույնով: Այդպիսի պիգմենտներ են կարմիրը,
վարդագույնը, մանիչակաղույնը, կապույտը, յերկնագույնը: Այդ

լուծվող պիտմենաներից և անսոցիանը: Դեղին զույնը մի քանի պատկանիւրթերում պրաստիգի ձևով և, մյուսներում՝ անառացիան և Գեորգինի ծաղիկների պատկանիւրթերում, կիարոնի պաղի պատահրում զեղին զույնն առաջ և զալիս անսօնյուր կոչված զեղնազար յն պիտմենափց: Վորը ցեղակից և անսոցիանին Շաղիկների, պատղների, սեղմերի և բաղմաթիվ այլ զույներ, վորոնք չեն համապատասխանում վերոնիշյալ զույներից վոչ մեկին: Պահանջանակում են նրանցից իրանց յիրանգութ, նյաւանապէ, առաջ ևն զալիս վերոնիշյալ զույների իրար ենու այս կամ այն չափով իրանութեաց:

Ինչ վերարերում և սպիտակ ծաղիկների, որինակ շուշանի կամ հովտաշուշանի զույնին, յեթե նրանցից ածելիով բարակ շերտ կտրենք, նայնոք մանրուղիատկով, նրանց բջիջներում վոչ մի սպիտակ զույնի պիտմենտ չենք գտնին: Սպիտակ զույնը բուռական որյեկանաներում առաջ և զալիս վոչ թե սպիտակ պիտմենտից, — այլպիսի պիտմենտ բուռական աշխարհում չեն: — այլ առաջանում և իրքեւ լուսուրանական յիրեւոյթի Շուշանի կամ հովտաշուշանի ծաղիկի բջիջների սահմաններում առաջ ևն զալիս միջրջիշալմբ տարածուրյուններ, վորոնք իրանց մեջ ող են պարունակում: Յերբ արեի լույսի ճառագայթներն ընկնում են այդ ծաղիկների վրա, նրանք այդ ծաղիկների միջրջիջային տարածությունների մեջ սովոր հանդիպելով՝ յերթարկիում են լիակատարներին անդրագարձման, և այդ պատճառով ամրով ծաղիկը մեզ սպիտակ և յիրեւում: Վորպեսպի այս յիրեւոյթն ավելի հասկանալի լինի, հիշենք ձյունը, վորը շատ սպիտակ և, բայց վորը սպիտակ իր մեջ վոչ մի պիտմենտ, վոչ մի սպիտակ ներկանյութի չի պարունակում: Յեթե վերցնանք հայանի քանակությամբ ձյուն և յններկինք ուժեղ ճնշման (ինչպես, որինակ, շատ անդամ այդ անուռմ են ձյունով խալացող յիրեխաները), ձյան փոխարքներ կատացի անգույն թափանցիկ զանգված, ուրին ձյան մեջ ներկ չկա, ճնշումով հեռացնում ենք ձյան բյուրեղների միջից ողը, և ստացիում և համարյա թափանցիկ մասսա: Ընդհակառակը, յեթե վերցնանք սառուցը, վոր թափանցիկ և լույսի համար, և այն ծեծենք, կատանանք սառցի սպիտակ փոշի: Սպիտակ զույնն այս գիպքում առաջ և զալիս նրանցից, վոր փոշիացած սառուցի մանը կտորների մեջ, նրանց արանքներում, տեղավորվում և ողը:

վորը պատճառ և լինում փոշիացրած սառցի սպիտակ յերեալուն,
վորովնեակ այստեղ ել նույնն և կատարվում, ինչ վոր շուշանի
ծաղկի դեպքում, այսինքն՝ լույսը յենթարկվում և ողի կողմից
լիակատար ներքին անդրադարձման, նույնը տեսնում ենք ապա-
կու գեղքում: Ապակին, վոր թափանցիկ և, յեթե ջարդենք և
փոշի դարձնենք, սպիտակ զույն կստանա՝ լույսի անդրադարձ-
ման պատճառով: Յեթե ապակուց ստացված փոշին լցնենք մէ
ամանի մեջ և գնենք կրակի վրա, փոշին հնալիք, դարձյալ կըս-
տացվի թափանցիկ ապակի: այստեղ ողը հեռացավ հալման ժա-
մանակ, իսկ ապակու սպիտակ փոշու մեջ պիգմենտ չկար:

Մաղիկներն իրանց գույներով, ինչպես և նեկտար արտա-
դրելով, հարմարվել են միջատներին, վորոնց ողնությամբ ան-
ուղղակի կերպով կատարվում և խաչաձև փոշուում: Զանազան
պտուղների, սերմերի բազմապիսի գույները, բուրավետ, հյութալի,
համեղ վնելը կենդանիներին, հատկապես թոշուններին, հրապու-
րելուն և հարմարված, վոր նրանք ուտելով պառզը, նպաստեն
սրանց սպամերի տարածվելուն:

Բայց բոլոր գույներից ավելի մեծ նշանակություն ունեցողը
կանաչ քուրոֆին և Գիտությունն այժմ արդեն հաստատապես
ապացուցել ե, վոր բուսական կյանքը ծագել և ջրամբարներում,
և սկզբնական բույսերը կանաչ չեն յեղել ժամանակի ընթաց-
քում, յերբ բույսերը բազմացել են, նրանց համար արդեն ան-
հնարին և յեղել ջրամբարներում մնալը՝ տեղի և սննդի սղության
պատճառով, և նրանք սկսել են գուրս գալ ջրից գեպի ափ և
հարմարվել այդ նոր միջավայրի պայմաններին: այդպիսով
սկիզբ ե առել այժմյան ցամաքային բուսականությունը: Այսի
վրա զուրս յեկած բույսերի տրամադրության տակ՝ իրանց հա-
մար անհրաժեշտ եներգիա ստանալու համար՝ յեղել են մի քանի
քաղեր—ջրածինը, ծծմբաջրածինը, ամոնիակը, և ուրիշ քիմիա-
կան միացություններ, ինչպես, որինակ, յերկաթի ոքսիդը: Այդ
գաղերն ոքսիդացնելով, նախնական ցամաքային բույսերը ճարել
են իրանց ֆիզիոգիական պրոցեսները կատարելու համար ան-
հրաժեշտ եներգիան և այդ եներգիայի միջոցով պատրաստել են
իրանց որգանական նյութերը: Այդպիսի պարզ բուսական որգա-
նիզմներ, նման ամենանախնական բուսականության, յերկրի վրա
այժմ ել կան, սակայն նրանք չափազանց սակավաթիվ են:

Վերահիշյալ քիմիական նյութերից սպավելով որպանական նյութ պատրաստելը կոչվում է խեմիստիք, այսինքն բարդ որդանական նյութի պատրաստումը քիմիական ուսուրզ մարմիններից նրանց սքսիդացման միջացով: Խեմոսինթեզն այն ժամանակները բավական ապահովված եր, վարագնեան, յերբ յերկիրը նորատի յեր և նրա կեղեց շատ հասաւ չեր, յերկրագնզի մեջ զանված բացավառ մտցման ավելի ճնարավորության աներ շատ-շուտ պատառելու յերկրի բարակ կեղեց և հրարխային ժայթքում առաջ բերելու: Հրարխի բոցը կաւրս եր զցում մինորբափ մեջ բավական մեծ քանակությամբ զազեր, մանավանդ վիրահիցյալ զազերը, և այդպիսով բաւականությանը, նրան անհրաժեշտ սնունդ և հներգիս ստանալու համար, նրան եր մատակարարում: Բայց ժամանակի ընթացքում յերկրի կեղեն ավելի յե հասաւցել յերկրի ավելի սասելու պատճառով, հրարտիները, առաջվա հետ համեմտածած, ավելի սակայ են գործել և ողի մեջ այն ժամանակա խեմոսինթետիկ բույսերին անհրաժեշտ զազերը պակասել են Բաւականությունը կարբք և զգացել հներգիսայի: Նրա կյանքում առաջ և յեկել մեծ ճշնաժամ: Իր այդ կրթավելու կան զրությունից բաւականությունը զուրու և յեկել հարմարվելով արել ճառագայթիների հներգիսան կլանելուն Այդ հարմարեցման հասեանքը յեկել և այն, վոր բույսերում սկսվել և կազմվել քլորոֆիլ վորն այսոր հանդիսանում և նախապայման լույսի հներգիսան կլանելու համար Աքեղակի հներգիսան սպասպործելուն հարմարվելով, կանաչերով, բաւական աշխարհի առաջ բացվել և զարգացման և կատարելազորձման մեծ ասպարեզ, նրա համար սկսվել և նոր զարացրջան Ցել, հիբալի բույսերի համար վերին աստիճանի ողառակար և յեկել իրենց վիճակն արելի հետ կապելը վորովհետեւ արելի ճառագայթները զբերեկ անսպաս են և ամենորյա

Վերածելով իր նախնական անկատար քլորոֆիլի ապարատը քլորոֆիլի մանը հատիկների, խոչը չափով մեծանում և նրանց կլանման մակարդակը, նրանք ավելի դիմացիուն են զաւնում: Դրա շնորհիվ բույսերն իրանց կանաչ մասերով, ուրեմն զլիավորապես տերեներով, վորի մեջ մեծ քանակությամբ քլորոֆիլ կա, ավելի մեծ քանակությամբ և ավելի հաջող կերպով կլանում են արել լույսի ճառագայթները և դրանցով ողից վերցրած ածխաթթու գազը բաժանում են ածխածնի և թթվածնի, ածխածնը գործ և ածխածնում

վորպիս հումք՝ որդանական նյութեր պատրաստելու համար, իսկ թթվածինը նրանցից դուրս ե գալիս Այսպիսով տեսնում ենք, վոր այդ պրոցեսի հետևանքով մաքրվում ե «նեխված» ողբ, վորի անուղղակի հետևանքը լինում ե այն, վոր մարդիկ, կենդանիները հնարավորություն են ստանում ազատ շնչելու և ապրելու C₀₂-ից անջատված C-ն ազատ վիճակում չի մնում, նա անմիջապես միանում է ջրի մոլեկուլի հետ, դառնում ե շաքար և ոսլատ Դրանք այն որդանական նյութերն են, վոր առաջ են գալիս բույսերի մեջ անորդանական նյութերից, նրանական նյութ ասելով մենք պետք ե հասկանանք այնպիսի նյութ, վորի կազմության մեջ անսպատճառ մտնում ե ածխածինը և վորն ընդունակ ե այրման։ Որդանական նյութերի մեջ, բացի ածխածնից, ամենից շատ մտնում են թթվածինը, ջրածինը, ազոտը, և այդ պատճառով ածխածինը և այս վերջին յերեք քիմիական ելեմենտները բիոլոգիայի մեջ կոչվում են որգանովեներ։ Ինչ վերաբերում ե որդանական նյութերի այրվելու ընդունակության, այդ վերջինը ցույց ե տալիս, վոր որդանական նյութերի մեջ ամբարված ե հայտնի քանակությամբ եներգիա, և յերբ ասում ենք, վոր որդանական նյութը այրվում ե գրանով ուղղում ենք ասել, վոր, յերբ որդանական նյութը միանում ե թթվածնի հետ, այդ ժամանակ նրանից դուրս ե գալիս, ազատվում ե արևի լույսի այն եներգիան, վոր բույսի քլորոպլաստները կլանել ենին և իրանց մեջ այդ կինետիկ հներգիան փոխել ենին քիմիական, պօտենցիալ եներգիայի։

Մարդկությունը և կենդանական աշխարհը սնվում են որդանական նյութերով. այդ նշանակում ե, վոր մարդը և կենդանին իրանց որդանիոլմի մաշվող մասերը վերականգնում են բույսերի պատրաստած որդանական նյութերով, վորոնց մեջ պոտենցիալ ձևով կուտակված ե քիմիական եներգիայի փոխարկված արևի լույսի եներգիան։ Անող յերեխան, անող կենդանին իրանց քաշի և ուժի հավելումը նույնպես ձեռք են բերում բույսերի մեջ կաղմանով որդանական նյութերից և նրանցում կուտակված եներգիայի հաշվին։ Այդպիսով մենք պարզ տեսնում ենք, վոր քլորոպլաստները, չնորիկ իրանց կանաչ քլորոֆիլի պիզմենտի, կյանքի աղբյուր են ներկայացնում յերկրի յերեսին։ Վերջին հաշվով կանաչ քլորոֆիլ պարունակող կանաչ բույսերով ե պայմանավորված վողջ կենդանական աշխարհի, այլև բուսական աշխարհի վորոշ տիպերի, գոյությունը։ Նրանց մեջ կատարվող ֆոտոսին-

թեզ պրոցեսի հետեւանքով ողբ մաքրվում են մեծ քանակությամբ
թթվածին և արտադրվում, պատրաստվում են պատճենցիալիքրով ոչ
արեգակնային հներգիան պարանակող հոկտրական քանակու-
թյամբ որպանական նյառթեր, առանց փորոնց կյանքը յերիշիս
յերեսին այն մատշաբարով, այն ծավալով և փորակով, վար նաև
ունի յերկրաբանական մեր գարագրչանում և ուներ գրանախորդ
գարագրչաններում, գոյություն ունենալու հարացուներանց միջնորդ
որդանական աշխարհը կառվել և հներգիայի այնպիսի մի անհուն
ազրյուրի հետ, ինչպես արեգակն եւ Մի հանգամանք, վար նրա
զարգացման և պահպանման դրավականն և յեղի և եւ

Բայց երբ յերկրի յերեսին ծագելով, զոյտեթյան կովի ըն-
թացքում, բնական ընտրության ճանապարհով, արտաքին պայ-
մաններին հարցարգվելով, ձևոք են յերել ֆուսոսինթեզ կատարե-
լու ընդունակությունը և այդպիսով առանովել են իրանց զոյտ-
թյունը Չեսպ բերգում այդ հատկության անխուսափելի հետեւա-
րով մթնոլորտի մեջ որպական արձակվում և հսկայական քանա-
կությամբ թթվածին, յերկրի վրա կուտակվում են որդանական
նյութերի հսկայական պաշարներ, արեգակնային անհաշլվ պո-
տենցիալ հներգիայով։ Ահա ֆուսոսինթեզի այս անխուսափելի
հետեւանքները, անկախ վորեիցն չզու գերբնական նպատակային
ուժից, հմիմք և պայմաններ են հանդիսացել կենդանական աշ-
խարհի, բուսական պարագիտ և սապրոֆիտ տիպերի առաջացման
և զարգացման համար։

V. ԲԶՋԱԹԱՂԱՆԹ

Պրոտոպլազման, վորեց կազմված և յուրաքանչյուր կեն-
դան որգանիզմ, ինչպես ասել ենք, հեղուկ կամ կիսահեղուկ
նյութ ե, ուստի միանդամայն հասկանալի յե, վոր նա վորոշ ձև
ունենալ չի կարող։ Սակայն բույսերը տեղի և տարածության
մեջ միշտ ունենում են հայտնի ձև և մասերի դասավորություն։
Հասկանալի յե, վոր այդ առանց վորեիցն կմախքի լինել չեք
կարող։ Պատկերացրեք կիսահեղուկ պրոտոպլազմայի մի զանգ-
ված, միթե նա կարող եր այնպիսի ձև ու կառուցվածք ունենալ,
ինչպիսի ձև ու կառուցվածք ունի, ասենք թե, մի ընկուղենի
կամ վորեիցն խոտաբույս, —առանց կմախքի Վհչ, ըոլորովին
վոչ (Բույսերի մոտ թաղանթն և հանդիսանում այդ կմախքը)։

Բուսական բջիջները, շրջապատված լինելով թաղանթով, միլիոնավոր բջիջների այդ թաղանթները, հայտնի ձևերով միաձուլվելով միմյանց, կազմում են մի դիմացկուն կմախք. դրանց համապատասխան կառուցվածքի ներքին դիմերենցիան՝ միջավայրի պայմաններին հարմարելու ընթացքում՝ մեկ կողմից, և բույսի տարբեր ֆունկցիաներ կատարող մասերի հաստատուն, հայտնի ձեւու գասավորություն ունենալլ տեղի վրա, տարածության մեջ՝ մյուս կողմից:

Թաղանթը պրոտոպլազմայի արտադրանքն եւ և կազմում երջիշի անկենդան մասերից մեկը. բջիջի աճման ընթացքում, պրոտոպլազմայի գործունենության հետևանքով, նրա արտաքին մակերևույթի վրա, իսկ բաժանման ժամանակ՝ նրա կենդանական մասերում մի թաղանթից մինչև մյուսը, առաջ են գալիս մանր հատիկների ձևով մարմիկներ, վորոնք միկրոօօմետր են կոչվում: Ուսումնասիրությունները պարզել են, վոր դրանք սպիտակուցային նյութի բնույթի ունեն: Հետագայում այդ հատիկների քիմիական բնույթը փոփոխության ե յենթարկվում և ի վերջո մի մոմենտում նրանք արդեն գաղարում են սպիտակուցային նյութի բնույթ հայտնաբերելուց, նրանք փոխարկվում են թաղանթանյութի, ցելուլոզի մասնիկների, վորոնք կոչվում են գերմանոզոմներ: Այդ գերմանոզոմներից ահա կառուցվում ե թաղանթը:

Բացառությամբ բակտերիաների և սունկերի, վորոնց թաղանթն ազոտ ե պարունակում, մնացած բույսերի թաղանթը կազմված է անազոտ նյութերից՝ ցելուլոզից: Այդ փաստն իհարկե մի պատահական յերևույթ չեն: Արդեն մի անդամ շեշտել ենք, վոր բույսերն իրանց տրամադրության տակ մատչելի ազոտի շաքիչ պաշար են ունենում: Արանով բացատրվում ե բույսերի այն հարմարեցումը, վոր նրանք աշխատում են վորչափ կարելի յեխնայողությամբ գործածելազոտը¹⁾: Ցեղե թաղանթ առաջանար ազոտացին նյութերից, ապա ահագին քանակությամբ ազոտ, վոր-

1) Ասածներս պարզուած են բակտերիաների և սունկերի թաղանթի ազոտ պարունակելու փաստը: Այս որդանդիմները պարագիտ և սապրոֆիտ կանք վարողներ են, այսինքն որդանական նյութեր անորդանականից սինթեզել չեն կա-

ովես շինանյութ պրոտոպլազմայի համար, բույսերի տրամադրության առկից գույք կդար, նու առանցակ, հարյուրափոր, նույն իսկ հազարափոր տարիներով շրջանակությանից գույք կը մնար, Այդ հանգամանքն անշաշտ խիստ բացառարար կանգրագառնար բառական աշխարհի գարգացման վրա Բույսերը գարգացման ընթացքամբ հարմարվելով միջավայրի պայմաններին՝ իրանց թագանթիր կազմել են այսպիսի նյութերից, վարոնք թանկարժեք աղոտ չեն պարունակում, այդ նյութերը նու մեծ չափով պատրաստմ ե և առնենում իր արամագրության առկ, ինչպես՝ թագանթանյութիր, ցելուլոզը:

Ցելուլոզը, ինչպես հետագայում կահոնենք, նուն բավականին հարմար նյութ և թագանթի համար, իր գիմացկունության, ֆիզիկո-քիմիական հատկությունների առանձինությունների առանձինություններից:

Եջիջի թագանթի նյութը պարունակում է իր մեջ C, H և O և բջիջի անսւնդի, վոր լատիներեն cellulα յի, կոչվում է ցելուլուց, Հայերն այդ նյութը կարող ելինք անվանել՝ բուսական բջիջի թագանթի նյութ։ Ցելուլոզը զնում և բջիջի թագանթի պատրաստման և բջիջի կյանքի մեջ նյութերի փոխանակության միջավայր և, նրա միջով նյութերը—հեղանյութերը, զագերի և կարծր մարմինների լուծույթները—զնում, զալիս են մեկ բջիջից մյուսը, Այդ յերեք ելեմենտներից, վարոնցից նա կազմված է, քիչ թե շատ թանդարժեքն ածխածինն է, (այն ել՝ համեմատաբար), վորովհետեւ մյուս յերկուսը բույսը մեծ հեշտությամբ ստանում և ոդից և ջրից։


Ցելուլոզը շատ առանձինական է, մենք հեշտությամբ կարուենք հասկանալ, վոր բջջաթագանթի առանձինական լինելը շատ կարեոր և բջիջի համար, վորովհետեւ բուսական բջիջն իր մեջ պարունակում է՝ շատ անզամ մեծ սամութիկ ուժ ունեցող՝ բջջանյութ, և թագանթը ավյալ բնական պայմաններում հակագլխիւ և

բող, անզում են մեսած կամ կենդանի որդանիզմների պատրաստի որդանական նյութերով։ Այդ պատճառով աղոտի պակասը նրանց մոտ այնպիս թիստ կերպով չը զգացվում։ Ունենալով իրանց տրամադրության տակ բավականաչափ աղոտային նյութեր, նրանց թագանթներն ել կառուցվում են աղոտից։ Նրանց թագանթը կոչվում է զյուկոզամին և պարունակում է մինչեւ 5°/o աղոտ։ Նույն նյութից կազմված են նաև միջատների թերերի կարծր մասերը, այդ պույց և տակիս, վոր միատեսակ մննդառության հետեւնքով ստացվում են միանման պլողուկտներ։

բջջանյութի ազդեցության, վորը շատ կլայնացներ բջիջը և պղու-
տովլազման, յեթե ցելությն առաձգական չլիներ. այդ հանգա-
մանքը սննդառության և ընդհանրապես բջիջի կյանքի մեջ
խանգարում առաջ կրերեր. Բջջաթաղանթը մատապ, նորատի
բջիջներում, ուր կենսական պրոցեսները, հետեւապես և նյութա-
փոխանակությունը, ինտենսիվ կերպով են կատարվում, շատ
նուրբ և բարակ եւ Այդ հանգամանքը մեծապես դյուրացնում է
և յութերի փոխանակությունը: Հետագայում, բույսի աճման ըն-
թացքում, բջիջները փունկցիոնալ զիֆերենցիացիայի յենթարկ-
վելիս, նրանց թաղանթի հաստությունն ել ըստ այնմ փոփոխվում
է: Վորոշ բջիջների թաղանթը մինչև տվյալ բույսի կյանքի վեր-
ջը գրեթե պահպանում է իր սկզբնական հաստությունը. մյուս
բջիջներում թաղանթն այս կամ այն չափով հաստանում է, ըստ
վորում, վորքան հաստանում է, այնքան պրոտոպլազման նվա-
զում և ե, վորոշ բջիջներում, նույնիսկ բոլորովին սպառվում է.
բջիջները մեռնում են: Այսպես, որինակ, բույսերի մեջ կան
ջրատար խողովակներ, վորոնք առաջ են գալիս կենդանի, սկզբ-
բում շատ բարակ թաղանթ ունեցող բջիջներից: Հարմարվելով
այդ փունկցիային, նրանք աճում են գլխավորապես ըստ յերկայ-
նության, ապա լուծվում են իրար վրա ուղղահայաց շարված
այդ բջիջների հորիզոնական միջնապատերը և ստացվում են յեր-
կար խողովակներ, վորոնց միջով ջուրը մեծ հեշտությամբ կա-
րող է տեղափոխվել: Բայց այդ խողովակները ըրջապատված են
կենդանի բջիջներով, վորոնց առաջացրած ճնշումից նրանք հեշ-
տությամբ կարող ելին փակվել և լոնդհատել ջրի հոսանքը: Այդ-
պես չվ լինում, վորովհետև դիֆերենցիացիայի ընթացքում, միա-
ժամանակ ի հաշիվ պրոտոպլազմայի՝ նրանց պատերը բավակա-
նին հաստանում են, վորպես հակակիտ հարիւան կենդանի բջիջ-
ների առաջացրած ճնշմանը: Այդ խողովակներում պրոտոպլազ-
ման իսպառ վոչչանում է, նրանք ուրեմն հանդիսանում են
մեռած բջիջների հաստացած թաղանթներ:

Վորոշ բջիջներ հարմարվում են բույսի որգաններին ամ-
բություն տալու փունկցիային՝ մեխանիկական փունկցիայի:
Նման բջիջների թաղանթները շատ խիստ կերպով հաստանում
են, այնքան են հաստանում, վոր բջջախորը յերբեմն այնքան
է փոքրանում, վոր հազիվ ե նկատվում (նկ. 15):

Այսակ արժեն հիշեմ թե բջիջների զիփերենցիան վճռքան խորն և գնացել Վերը նկարադրված բջիջներն իրանց Փունկցիայի կատարման բարձր աստիճանին հասնում են մեռնելուց հետո միայն Վորքան թաղանթի հասանաւմ ե, այնքան




Նկար 15. Ginkgo ծառի արմատի կեղեկ բջիջները. պատերն ուժեղ կերպով հասացրած են և իրանց վրա կրում են պարզ շերտավորում. 1—բջիջի խորշն և (Ըստ Գիզեն-հակենը)

նյութերի փոխանակությունը նրա միջով դանդաղանում է և անդամ կարող է կանգ առնել,—մի հանգամանք, վոր մահացու կլինիկ բջիջների համար Բայց այդպիս չի լինում. սկզբնական թաղանթի վորոշ աեղքերը չեն հասուանում, վորի շնորհիվ հաստացրած թաղանթի մեջ առաջանում են ծակուախների նմոն գոյացություններ (նկ. 16). Այդ ծակուախների շնորհիվ նյութափախանակությունը կանոնիվ չի առնում, այլ համեմատաբար բավարար կանին հաջող և կատարվում: Բջիջների թաղանթը հաճախ կաղմացած և լինում մի քանի շերտերից. այդ

շերտերից յուրաքանչյուրի ներքին մասն ավելի նեղ և և կարծը, արտաքին մասը՝ ավելի լայն և և թույլ Բջջաթաղանթները բացի շերտավորումից նաև խավեր ունեն: Խավոտությունը մի քանի թաղանթներում յերեսում և առանց սեակտիվ գործածելու, մյուսներում—միայն այնպիսի ռեակտիվի ազդեցության տակ, վորից թաղանթն ուռչում ե: Առանց սեակտիվի՝ խավոտությունը, ինչպես և շերտավորությունը, յերեսում և լուրի թելիկներում: Խավոտ թաղանթների մեջ կարելի յե տեսնել բարակ գծեր, վորոնց միմյանց զուգահեռ են գնում և թեքված են դեպի բջիջի յերկար առանցքը. ավելի խորը գտնված շերտի խավերը գնում են հակառակ ուղղությամբ, և մանրադիտակով զննելիս

Հինում և մի դրություն, յերբ այդ խավերի գծերը յերեսամ են իրար խաչաձեած (նկ. 17): Լուբերի խավերը, ինչպես, որինակ, կտավատի ցողունի մեջ, նրանց մեծ ամրություն են տալիս. ուրն ավելի լավ և վոլորվում և նրանից, այդ խավոտության պատճառով, մանելու ամուր թել և ստացվում:

Բջջաթաղանթի նյութը, ցելուլոզը, պատկանում և որդաշական այն նյութերին, վորոնք կոչվում են ածխաջրեր. նրա քիմիական փորմուն է ($C_6H_{10}O_5$), ծելուլոզն ածխաջուր և կոչվում այն պատճառով, վոր նա կարծես թե կազմված և ածխաջնից և ջրից, այդպես են համարում, վորովհետեւ ածխաջրերի մեջ ջրածինն ու թթվածինն իրար հանդես գտնվում են այսպիսի հարաբերությունների մեջ, ինչպիսի հարաբերությունների մեջ նրանք գտնվում են ջրի մոլիկուլի մեջ, այսինքն ջրածինը յերկու անգամ ավելի յի քանի թթվածինը: Ցելուլոզը մանրադիտակի տակ ճանաչելու համար




Նկար 16. Կաղնու ծուժի բջջաներն ըստ լայնության. 1—միջաջրածինաբարածությունները թաղանթի նախական թաղանթը. 2—թաղանթի երկրորդ շերաբ՝ 3—անցքերով. զրանք թաղանթի բարակ տեղերն են:

զործագրվում և գլխավորապես քլորոցինկ-յոդ կոչված սեակտիվը, վորից նա անգույն դրությունից գուշավորվելով մանիշակապույն-կապույտ գույն և ստանում:

Այստեղ նշենք, վոր յերբ մինք ասում ենք, թե թաղան-

թը կազմված եցելուլոզից, իսկ ցելուլոզն ածխաջուր ե, մենք հայտնի չափով իրերը սխեմայի յենք վերածում. ընության մեջ քիմիապես մաքուր նյութ համարյա յերեք չի լինում. այս դեպքում




Նկար 17. Կտավատի թելերի պատերի խավերը:

և լ որեաք և տաննք, վոր թագանիթը կազմված և ածխաջրերից և նրանց մոռ, աղպակից, նյութերից Այդ աղպակից նյութերն են նմիցելուզներ:

Յեթե մանրագիտակով զննենք բույսի մի վորեե հաստածք, կահոնենք, վոր բջիջների թագանիթները, իրար կարու, կազմում են մի ցանց ձնշում զորեկարասի վրա կամ աշխատեա-սկ ասեկի ծայրափ բջիջներն իրարից անջատեւ մենք վոչինչ չենք շահի, միայն հետամոզվենք, վոր բջիջների թագանիթներն իրար հետ պինդ տմբացված են, և բջիջները կազմում են մի հասաւառ շենք: Կա մի նյութ, վորն արտազրգում և բջիջի պրոտոպլազմայի մի-ջից և անցնելով թագանիթի միջամ մասում և թագանիթի վրա, նրա արտաքին մակերեսի կազմից, և պնդանարավ կազմում և այսպիս կոչված միջրջիջալին նյուրը: Այսողիսի նյութ արտազրգում են բույսը բջիջները, յերբ նրանք նոր են կազմվել և վոչ թե միայն կենզանի յեն, այլև շատ մասապ, շատ կենսունակ: Այդ միջրջի-ջալին նյութը, վորը կարեիլ յե տակը, բույսի շենքի մեջ այն զերն է խազում, ինչ զեր վոր խազում և մի վորեե շենքի քարերի կամ ապյուսների մեջ շազախը, բուծվում և ուժեղ թթվիջների (ոք-սիդացողների) մեջք—բամաթթվի՛ կամ Շուլցելի խասնութրում: Վերջինո ներկայացնում և աղոստաթթու՛ բերառելի աղի հետ խառը, խասներու ժամանակ զբանց տաքացնում են: Յեթե մի բույսի հատվածը մի քանի ժամ թուզնենք այդ յերկու սեակատիվ-ներից մեկի մեջ, միջրջիջալին նյութը կլուծվի և բջիջները, կոր-ցնելով իրար հետ ունեցած կապը, հեշտությամբ իրարից կրա-ժանակին, կամ ձնշուն աղդեցության առակ, կամ յերբ աշխատենք ասեկի ծայրով այդ բջիջներն իրարից անջատել: Այս յերեսութը: յերբ բույսի բջիջներն իրարից բաժանվում են, կոչվում և մա-ցերացիս: Բջիջներն իրարից բաժանելու համար յերբեմն բա-վական և միայն յեսած ջրի մեջ բույսը յեփել: այցպես յեփած գետնախնճորը բաժան—բաժան և լինում, վորովհետեւ նրա միջրջիջալին նյութը լուծվում և տաք ջրի մեջ:

Յեեռացուցիչ լույսը շատ հասաւ բուսական բջջաթաղանթ-ների վրա տալիս և մի մութ խաչ՝ բաց ֆոնի վրա: Այդ ցույց և տալիս, վոր թագանիթի նյութն ել մոռ և այսպես կոչված ասեղնաձև բյուրեղներից, սաֆիտներից առաջ յեկած սփերոկերիս-տալներին:

Թաղանթի տուաջին շերտի վրա առաջ և գալիս նոր շերտ Մենք արդեն ասել ենք, վոր թաղանթի նյութը բջիջի պրոտոպլազմայի արտադրանք և Պարզ է, վոր այս գեպքում ել, այսինքն՝ յերբ կազմվում ե բջիջի թաղանթի յերկորդ շերտը, վերջինս կազմվում ե բջիջի ներսից, պրոտոպլազմայի կողմից, ուրեմն թաղանթը հաստանում և ներսից։ Շատ անդամ բջիջների պատերն ավելի յեն հաստանում, յերկորդ շերտի վրա կազմվում և յերրորդ շերտը, յերբորդի վրա՝ չորրորդ շերտը և այն։ Յեթե նայենք




Նկար 18-ը. Clematis բույսի ցողունի մանակ առաջ են գալիս բջիջների բջիջները Մ—միջնիջային տարածում մեջ։ Բացի այդ գաղերից, միջնուն և ապա յերեսում են թաղանթի բջիջային տարածություններում շերտեր։

Կազմվում ե բջիջների մեջ յեղած ջրից։ Այդ խորշերի մեջ լինում են և այն գաղերը, վորոնք շրջապատող մթնոլորտի միջից մտնում են բույսի մեջ։

Բույսերի թաղանթի հաստանալու ձևի հարցի շուրջը գիտության մեջ շատ վիճարանություններ են յեղել։ Գիտնական Նեգելին այն կարծիքն եր հայտնել, վոր թաղանթի հաստացման ժամանակ թաղանթների միցելները ձգված դրությամբ միմյանցից մի քիչ հեռանում են և այդպիսով կազմված փոքրիկ միջմասնիկային տարածությունների մեջ մտնում են թաղանթաւնյութի նոր առաջացած մասնիկները և այդպիսով նա աճում ե։ Նեգելին եր այս կարծիքը մշակել եր և վերածել մի ամբողջ թերթայի, վորը կոչել եր ինտուսուսեպցիալ տեսություն։ Սակայն

հետագա հետապստությանները, վորոնցից դլխավորները
պատկանում են նույ զիանականին, նեղելիի թեսրիան տա-
ռապարհին Այժմ ընդունված է այսուհետ կոչվոծ՝ ապօպիցիայի քի-
տիան վոր ուսուցանում և, թե թաղանթի հաստացումն առաջ է



Նկար 19. Ապօպիցիայի ձեռք
թաղանթի հաստացումը.

զետեղվում են թաղանթի նյութի տառ մասնիկները, և թաղանթն
այդպիսով ըստ ծավալի աճում է:

Աճման ընթացքում առարեր հյուսվածքների բջիջների թա-
ղանթի քիմիական կազմությունը նույնպես զանազան փոփո-
խությունների յե յենթարկվում: Խնչղես առել ենք, սկզբնական
թաղանթը մաքուր ցելուլուղից և կողմված: Վորոշ բջիջներում,
անկախ նրա հաստացումից, ցելուլուղային ընույթը պահպանվում
է, մյուսներում նա փոփոխության ե յենթարկվում: Բամբակը հա-
մարյա բոլորովին մաքուր ցելուլող եւ նա ներկայացնում է
բամբակնու սերմերի մաշկի շատ յերկար մազերը: Շվեդական
ֆիլտրի թուղթը զուտ ցելուլող եւ թաղանթանյութ և ներկայաց-
նում կատախափ լուրը, վորից մանում են քաթան, բատիստ, կտալ:
Թղթի լավ տեսակները, վոր շորերի կտորներից են ստացվում,
նույնպես կողմված են թաղանթանյութերից: Կանեփի ցողունից
ստացվող մեխանիկական մանածո թելերը զարձյալ ցելուլուղային
նյութեր են (բայց վոչ մաքուր): Ուժեղ ծծմբաթթվի ազդեցու-
թյան տակ ցելուլողը յենթարկվում է հիդրոլիզի, այսինքն մի-
անում և ջրի մոլեկուլի հետ և տալիս և ուղայի նման մի նյութ,
վորը կոչվում է ամիլոփիդ. վերջինս յոդից կապտում եւ նա ընդու-
նակ է շրեշ տպլու: Յեթե հասարակ թուղթը մշակենք թույլ

ծծմբաթթվովի, ցելուլողի մի մասը ամիլոփտ կդառնա և կկողցնէ
մյուս մասը, կստացվի մազաղար: Ցելուլողի քիմիական կազմու-
թյան մեջ բավական մեծ դեր են խաղում պեկտինի նյութերը.
դրանք մոտ են հեմիցելուլողներին:

Ժամանակի ընթացքում բջջաթաղանթն սկսում է փայտանալ-
ցելուլող զիջում և իր տեղը բնափայտին, վորը քիմիական տե-
սակեաից հարուստ և լիզինի կոչված որգանական նյութով: Ցերը
բջիջի պատերը փայտանում են, բջիջի կյանքի մեջ առաջ են
դալիս կարեւոր փոփոխություններ. բջիջն այլևս ընդունակ չի
լինում նյութերի ինտենսիվ փոխանակության, ինչպես առաջ-
այլպիսի բջիջի վրա հիմա ավելի ծանրանում և մեխանիկական
ֆունկցիա, —ծանրություն տանել բջիջը և բույսը պահպանել
մեխանիկական հարվածների և ուրիշ անրարեպատեհ պայմանների
դեմ: Փայտացած պատերը ունեցող բջիջները, թեև սննդառության
այլևս այնքան հարմարեցված չեն, սակայն նրանք ջուր են
տանում՝ իր մեջ լուծված նյութերով, և ծառայում են իրեն սնն-
դարար նյութերի պահեստատեղի: Այսեղ հարց ե բարձրանում,
թե ինչո՞ւ բույսի վորոշ բջիջների թաղանթը, որինակ՝ ցուղունի
բնափայտի բջիջների պատերն ուժեղ կերպով ներծծվում են լիզ-
նինով և փայտանում, քանի վոր, ինչպես գիտենք, ցելուլողն
ինքն արգեն շատ ամուր նյութ եւ Այս հարցի շուրջը յերկու
հայեցակետ կա: Մի քանիսը, յենելով ցելուլողի և լիզնինի քի-
միական անալիզից, ցույց են տալիս այդ փոխարինման առա-
վելությունը: Լիզնինի մեջ, ցելուլողի համեմատությամբ, պա-
կաս ածխածին կա: Ցերե բոլոր անտառներում ծառերի բուն-
ու նյուղերը կազմված լինեյին վոչ թի բնափայտից, այլ բջջա-
թաղանթի նյութից, բնության մեջ, թեկուզ ժամանակավորա-
պես, ահագին քանակությամբ հավելյալ ածխածին կմնար նյու-
թերի փոխանակությունից դուրս, իրեն կմախքի նյութ, հար-
յուր մինչև անգամ հազարավոր տարիներ ապրող ծառերի մեջ:
Մյուս կողմից՝ այս փոխանակության իրեն ոգտակար կողմ
մատնանշում են այն հանգամանքը, վոր ծառերը, կազմված լի-
նելով բնափայտից, քամու հարվածների դեպքում անհամեմատ
ավելի շուտ են հանգստանում տատանվելուց, վորովհետև լիզ-
նինը շատ առաձգական չե, իսկ ցելուլողը շատ առաձգական ե,

և յիմեւ հրն բջիջների պատերն եւ իրանց ցեղութպային բնույթը պահպանելին, ծառերը քամուց շատ ավելի ուժեղ և շատ ավելի յերկար պեսք և տասանվելին, վոր, ինարկե, ծառերի համար վաստակար կլիներ։ Այդ տեսակեալից հասկանալի յէ, թե ինչն բջիջի պատերը ներծծվում են լիզնինով, փայտանում են։

Բնափայտի լիզնինի քանակը հասնում է 30%₀-ի և տառջ և րերում մասամբ նրա հաստացումը, մասամբ պնդացումը, վորի շորելիվ բարձրանում և փայտի տեսակաբար կշիռը։ Միաժամանակ փափխավում են նույնութեալ ֆիզիկական հատկությունները։ Փայտացած թազանթն ավելի ամուր և Աստծիս հիման վրա յերբեմն նկատվում և հայտնի կապ բնափայտի միջի լիզնինի քանակի և բնափայտի ամրության մէջ, այդպես, որինակ, ու ծառի բնափայտը, վորը շատ ամուր և, պարունակում է իր մէջ 35%₀ լիզնին, կազնու ամուր բնափայտը՝ 28%₀, իսկ կաղամամաթի կակուզ բնափայտը՝ միայն 21%₀ Բնափայտի լիզնինը ֆլորոպլացինից և ազաթթվից ներկվում և ինտենսիվ կարմիր գույնի¹⁾։

Թազանթի քիմիական կազմության հատկանշական վուգություններից և և խցանացումը։ Բազմամյա բույսերի այն մասերը, որինակ՝ ճյուղերը, վորոնք շատ ապրիներ են ապրում, ձմեռվա ցրաաշունչ և ամառվա տապ յեղանակներին չափառ և կարողանային զիմանալ, յեթե ժամանակի ընթացքում վորելից պաշտպանողական հարմարեցում ձեռք չըրեցին, վորովինե կենդանի բջիջներից կազմված եղիքերմիսը, վորն այդ ճյուղերի կազմակերպման մկրնական շրջանում բավականին լավ պաշտպանողական հյուսվածք եր հանգիստանում ջրի գուրշիացման, ջերմաստիճանի բացասական ազգեցության և ուրիշ անբարենպաստ հանգամանքների գեմ, արգեն անպիտը և դառնուում։ Այդ ճյուղերի եղիքերմիսի տակ կեղևի վորու բջիջների թազանթները հաստանում և ներծծվում են խցանանյութով, նրանք մեռնում են և կազմում են խցանային բջիջների շերտը։ Նա շրջապատում է բույսի բազմամյա ճյուղերը դրսից և բավականին հաջող կերպով պաշտպանում և նրանց։

1) Բնափայտից, յերբ այն զարձում են ցեղուզագ, հետագա քիմիական մշակման յննթարկելով՝ ստանում են արհեստական մետաքս, վիսկոզա անունով վորի արտադրությունը ավելի և ավելի տարածվում է։

Սակայն նախքան խցանի առանձնատկությունները վերշուծելը, պետք և ասել, զոր խցանանյութի նման նյութ չատանգամ արտադրվում և և միամյա որդանների բջիջների թաղանթի արտաքին յերեսի վրայ Այդպիսի բջիջների շարքը ծածկված և լինում մի չատ բարակ շերտով, զորը կոչվում և կուտիկուլա և զորը կազմված և կուտիկուլա նյութից: Այդ կուտիկուլա խցանանյութի հատկություններն ունի, թեև կուտիկուլան շատ նույր եւ

Խցանանյութը, զորը կոչվում և սուբեռին, մոմի նման և քիմիական կողմից նա մոտ և ճարպերին. նա չի թրջվում ջրից, չի թողնում, զոր ջուրը, հեղուկները, զաղերը միջից անցնեն, ջրության վատ հաղորդիչ և և այդպիսով լավ պաշտպանում և բջիջի ներքին մասը զրոխ յրտից և շոգից: Խցանը, իրքեւ ծածկող հյուսվածք, կքննարկենք վերջը, իր տեղում:

Բարդու կեզեկ լեռնինը կազմվում և խցանի բջիջների մեջ. շատ սպիտակ և, փոշու ձեռվ, մի փոքր կեղասոսում և ձեռքը, շորը: Բետությունը մի քիչ թունավոր և, զորից ոգտվում և բարդին, նրա բնի և ճյուղերի վրա չեն կարող ոնվել բակտերիաները, սունկերը և ուրիշ միկրոօրգանիզմները. բարդու վրա,—յերեսի այդ պատճառով,—քարաքոս քիչ և լինում:

Բջջաթաղանթը հայտնի բույսերի մաշկի վրա լորձունքանում և, որինակ՝ կտավատի, սալըու, սերկենիլի, կոտեմի, ջղախոտի և մի քանի ուրիշ բույսների մաշկի վրա, յերբ ջրի կամ խոնավության հետ շփման մեջ և մտնում: Այդ դեպքում թաղանթն ուժեղ կերպով ուռչում և իր մեջ ջուր ծծելուց: Այս յերեսոյթի բիոզգիական (կենսաբանական) նշանակությունն այն և, զոր լորձունքանալով՝ սերմը պահում և ջուրը և չորության դեպքում չեն չորանում: Ուզիշ դեպքերում լորձունքը կացնում և սերմի ծածկոցը հողի մասնիկներին, և այդպիսով հեշտանում և ծիլի իր կապանքներից ազատվելու և հողից դուրս գալու գործը:

Ցելուլոզի հետակա քիմիական վոփոխության հետեանքով առաջ են դալիս կամեմեներ կամ զամին: Դումի տալիս են բաշնին և Աֆրիկայի մի ակացիա՝ իրանց բջիջների հիվանդության պատճառով: Մասների այդ հիվանդությունը կոչվում և դումոզի:

Թաղանթը շատ անգամ պարունակում և իր մեջ աղերս Բագական մեծ քանակությամբ կայծաքար զանում ևնք հոցարույսերի և ձարբասով ցողունների բջիջների մեջ, նույնպես և զիստումնա կոչված ջրմասների պատերի մեջ,

Այսպիսով մենք տեսանք, վոր բջջաթաղանթը շատ նշանակալի քամի քիմիական և առխոնիկական հատկություններ ունի, վորոնք պատճառ են յեզեր վոր բջջաթաղանթի նյութը ժամանակակից արգյունաբերաթյան կենարունումն և զանգում, 20-րդ դարը կարելի յե անվանել երեկորդականության, յերկաթի և ցերուլոզի գար Տեքստիլ արգյունաբերաթյան մեջ դիխովոր նյութն այդ և Թուղթը պատրաստվում և ցերուլոզից Թուղթ պատրաստում են նաև ծառի փայտից և մի լազորի թղթի համար տարին մի քանի հեկտար տնառաւ են կարում, Կիոնյի Ժապավենը ցերուլոզից և պատրաստվում նույն նյութից են պատրաստում ամենաուժեղ պայմանագիրի նյութերը, Մի խոսքով ցերուլոզ ավող բույսերը հիմա համաշխարհային նշանակություն ունեն:

VI. ԱԾԽԱԶՐԵՐ

Նախընթաց զլուխներից մեկում մենք տեսանք, վոր քլորոպլաստների վրա կազմվում և ուլա, մանր հատիկների ձևով, իբր առաջին տեսանելի որգանական նյութի Ուլան առաջ և գալիս անորգանական նյութերից, այն ինչ մյուս բոլոր որգանական միացությունները, չնայելով, վոր նրանք շատ բազմատեսակ են և տառնյակ հազարներով, վոչ թե անորգանական նյութերից են՝ առաջ գալիս, այլ որգանական նյութերից. Նրանց համար վորպես հիմնանյութ հանդիսանում և հենց այդ ուլան, բույսերում սինթեզվող, առաջին տեսանելի որգանական նյութը. Մի քանի բացառությունները չեն փոփոխում իրերի զբությունը, Այստեղից պարզ է, վոր շատ կարենոր և ուսումնասիրել ուլայի բնույթը, նրա քիմիական և Փիզիկական հատկությունները, հետազոտել նրա առաջանալը և այն պայմանները, վորոնք նպաստում են նրա ստացվելուն: Այդ անհրաժեշտ է, վորովհետև վորքան այդ ամենը լավ իմանանք, այնքան ել ներգործությունն այդ պայմանների, յերնույթների վրա դրական և արդյունավետ կլինի, վորովհետեւ

նրանց վորոշակի, մեղ ցանկալի ուղղություն տալով՝ կարող ենք ավելի շատ որդանական նյութեր ստանալ. իսկ թե գրանք ինչ մեծ նշանակություն ունեն մեղ համար, ինքն ըստ ինքյան պարզ է, այդ մասին չեմ գրում:

Հիրամի մոտ 80 տարի յե բուսաբանները, քիմիկոսները, փիզիոլոգները ուսումնասիրում են ուղան. ահազին քանակությամբ աշխատանքներ են գրված այդ նյութի մասին:

Գիտնականների մեջ ավելի ընդունված է այն կարծիքը, վորոդանական նյութերից առաջինը կազմվում է ամենապարզ ածխաջրերից մեկը՝ փորմալդեհիդը, վորի մոլեկուլները, սակայն, բույսերի մեջ ազատ վիճակում չեն մնում (թունավոր ե), այլ անմիջապես միանալով միմյանց հետ՝ շաքար են տալիս. սա իր հերթին ջրատվելով տալիս ե այն ուղան, վոր մենք տեսնում ենք քլորոֆիլի հատիկներում. Ռեքմն ուղան հանդիսանում ե վոչ թե սինթեզվող առաջին որդանական նյութը, այլ առաջին տեսանելի որդանական նյութը (շաքարն անդույն և և լուծվում ե բջջանյութում, չի յերեսում):


Կազմվող շաքարներից առաջինը համարվում է մոնոսախարիդ գլուկոզը՝ $C_6H_{12}O_6$. Ցերեկվա ընթացքում կազմվող ամբողջ շաքարը կանաչ բջիջներից չի տեղափոխվում: Նրա մի մասը կազմվելուն պես լուծվում է բջջահյութի մեջ և ծառայում է կամ իրեն սննդանյութ, գլխավորապես բջիջի շնչառության համար, կամ իրեն շինանյութ՝ թե այն բջիջի համար, վորի մեջ նա կազմվել է, և թե մյուս, գլխավորապես վոչ կանաչ բջիջների համար, վորտեղ ինքնակախ շաքար չը կազմվում՝ քլորոպլաստներ չինելու պատճառով: Շաքարի մյուս մասն, ըստ յերեվույթին տեղափոխման համար անբարենպաստ պայմանների հետևանքով, կուտակվում է կանաչ բջիջներում, Բայց չե՞ վոր շաքարը բջջահյութի մեջ լուծվում է: Դժվար չե հասկանալ, վոր բջջահյութի մեջ ինչքան ավելի լուծվի շաքար, բջջահյութի ոսմոտիկ ուժն այնքան ավելի կրաքանակ, և կարող ե գալ այնպիսի վայրեցյան, յերբ բջջաթաղանթն այլևս չի կարողանալ պահել իրան և պատառվի՝ բջջահյութի շատ մեծ ոսմոտիկ ճնշման հետևանքով: Սրա վրա ավելացնենք և այն, վոր յեթե վտանգն այդտեղ նույնիսկ չհամար, բջջահյութի չափազանց մեծ ոսմոտիկ ճնշումն այնքան ուժեղ կերպով պատին կլսփի պրոտոպլազման,

բջջակորիզն ու ոլլաստիզները, վոր պետք և կարծեր նորանք
 կկորցնեն իրանց ֆառնկցիտները նորմալ ձևով կատարելու ըն-
 դունակաթյունը Յեփ ահա այդ հակասական գրովյանից բայց
 սերը գուրս են յեկել այն բանավ, վոր կանոչ բջիջներում կու-
 տակված շաքարը վերածված և այնովոր նյութի, վորը չի լուծվում
 բջջանյութի մեջ, չի մասնակցում բջիջի ֆիզիոլոգիական պրո-
 ցեսներին, բջիջի սամառիկ ուժը չի բարձրացնում, — այդ նյութը
 սպան է, նույնապես ածխաջուր, պալիսախարիդ ($C_6H_{10}O_5$)₂ շատ
 մոռ զրուկովին Ասրան, — ավելացնենք նրա առավելությունների
 վրա նաև նետեյալ հատկությունները, — կարծր մարմին և,
 շատ մանր հատիկներ կազմող, պորատարիվ, քիմիական ակտո-
 կեաից վերին աստիճանի իներս և ուրիմ, իրբե պահեստի պա-
 շաքարնյութ, շատ հարմար Գլակոզը սուլայի յև վերածվում գե-
 նիդրատացիայի միջոցով. այսպես՝ $C_6H_{12}O_6 = C_6H_{10}O_5$, հետո
 առզի յև ունենում պոլիմերիզացիա: Պոլիմերիզացիայի ճախրում
 անդուսպես ուղղ պետք և լինի վոչ պակաս 32-ից, այդ գեղքում,
 այսինքն յեթե ընդունենք սուլայի ֆորմուլը ($C_6H_{10}O_5$)₂₂, նա
 կլինի $C_{192}H_{320}O_{160}$, Սակայն սուլայի կուտակումը քլորոֆիլի հա-
 տիկներում ծնում և իր հակասությունը նու բանելով քլորոֆի-
 լի հատիկների մակերեսը՝ խանդարում և նրան լավ կերպով
 շատ լույս կլանել նա թուլացնում և ֆոտոսինթեզի յեռանդը:
 Այդ բացասական ազգեցությունը շատ ամելի խիստ, անզամ
 մահացու կլինի, յեթե այդ կուտակումը յերկար տևեր, յեթե
 քլորոֆիլի հատիկները պարբերաբար չգատարկվեցին նրանց
 դատարկվելը տեղի յև ունենում գիշերվա ընթացքում: Յերբ վրա
 յև հասնում գիշերը, կանգ և առնում շաքարի սինթեզումը, հե-
 տևապես սուլայի նոր քանակությունների կուտակումը քլորոֆի-
 լի հատիկներում (ֆոտոսինթեզի ժամանակ կազմվող և բջիջնե-
 րում կուտակվող շաքարի հաշվին): Այդ ժամանակ ահա սկսվում
 և հակառակ յերեռութը՝ կուտակված սուլան, հիդրատացիայի յեն-
 թարկվելով, վեր և ածվում շաքարի և քլորոֆիլի հատիկներից,
 կանաչ բջիջներից, տեղափոխվում և դեպի բույսի մյուս մասերը,
 ուր շաքար քիչ կա: Այդ պրոցեսը շաբունակվում և այնքան
 ժամանակ, մինչև վոր քլորոֆիլի հատիկներն խսպառ դատարկ-
 վում են: Հետեւյալ որը, վեռ լույսը չբացված, սովորաբար նրանք
 արդեն գատարկված են լինում և վաղ առավոտյան, արեածագից

գիռ առաջ, նորից սկսում են իրենց յեռանդում գործունեյությունը Ռդով և Ռդովի միջնորդական մեջ ընկված լույսի ճառագայթներից, քըրոպալաստները հարվածներ են իջեցնում, մեկը մյուսի հետեւ, ածխաթթվի մոլիկուլին և խորտակելով Ը-ի և Օ-ի կապը, վերականգնում են ոքսիդացած ածխածինը, դեռ մթնջաղի պահին, յերբ միջին տարիքի մարդը կարողանում է հասարակ տիպը կարդար Այդպես և զորոշում լույսի ուժը պրոֆեսոր Տիմիրյաները ասիմիլիացիայի կամ ֆոտոսինթեզի սկզբում և վերջում, արեածագից մի քիչ առաջ և արևի մայր մտնելուց մի քիչ հետո Քանի ավելի յերեւ արեւը բարձրանում յերենակամարի վրա, այնքան ավելի ինտենսիվ և արտադրվում ուղանու կեսորին մոտ ժամերն որգանական նյութի արտադրության ամենանպաստավոր պահն են Այնուհետև, կեսորից մի քիչ հետո, որքախիստ շող ժամերին, մանավանդ յերբ բույշ քիչ ջուր են ունենում հողում իրանց նկար 20. Քլորոփիլի հատրամադրության տակ, ֆոտոսինթեզի յետիկների վրա կազմվել ուանդն ընկնում ե, յերբեմն նույնիսկ կանգ են ուղայի հատիկներ, և առնում: Գերմանացի գիտնականներ

Սաքսը և Բեմը քլորոպալաստների վրա արտադրված նյութի ուլամբինեն ապացուցելու մեթոդը տվին: Առաջ տերեւը դնում են սպիրտի մեջ, վոր նա անդունանա. հետո աղդում են այդ սպիրտակած տերեւի վրա կծու կալիումով, վորից ոսլայի հասիկներն ուռչում, խոչըրանում են, ուստի և ավելի դյուրին ե դառնում նրանց նշմարելը. քացախաթթվով չեղոքացնում են առաջ յեկած ալկալի ռեակցիան. հետո տերեւը դնում են յ-ի լուծույթի մեջ. ուլայի հատիկները ներկվում են մանիջակագույյն-կապույտ գույնով. իսկ յեթե ուղան շատ և կուտակվել կստացվի համարյա սկ գունավորում:

Յերբ ուղայի հատիկն աճում ե, նա միշտ կապված ե լինում բջիջի մի վորեւ մասի հետ, կամ պրոտոպլազմայի, կամ քլորոփիլի հատիկի, կամ սպա կազմող առանձին մարմինների հետ: Նոր շերտերը նստում են հների վրա ճիշտ այնպես, ինչպես բջջաթաղանթի շերտերը՝ ապողիցիայի ճանապարհով: Ուղան բջիջից հեռանալուց առաջ յենթարկվում և հիդրատացիայի



$\text{C}_6\text{H}_{10}\text{O}_5 + \text{H}_2\text{O} = \text{C}_6\text{H}_{12}\text{O}_6$, զառնում և դրակող, լուծվում և բջջաւչյալի մեջ և, իրեն հեղուկ, անսարգել անցնում և բջջաւթազանթի միջից և, անցնելով մի բջիջից մյուս բջիջը, զնում և այստեղ, վարսեղ շնչառության և զինարարության նյութի կորիք կա: Իսկ յեթե այդ կարիքը ավյալ որը բավարարված և, սուրան, շաքար պարձած սուրան, վարք կոչվում և տանիքիու սուր, զնում և արմատը, կոճղարմատը, պարարները, սերմերը, մի խոսքով՝ զեղի այն բոլոր որդանները, վորոնք ծառայում են բույսի բազմացման, վորովնեան սուրան աստղնակարգ շինունյութ և բուսական մարմինների համար Շաքարը, յերբ հասնում և վերաբեշյալ պահանատաեղիները, նորից գեհիգրատացիայի յե յինթորեկվում՝ $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 - \text{H}_2\text{O} = \text{C}_6\text{H}_{10}\text{O}_5$ սերմեցիայով: Այլապես չի յել կարող ամբողջ պրոցեսը կատարվել վորովնեան սուրան, իրեն պինդ մարմին, համար չանի բջջամփառնի միջայի անցկենալու: Այդ պարզ և Հայունված և նաև այն միաքը, վոր սուրան ևլ բույսի միջով տեղափոխվելու: Համար վոչ թե միայն վերածվում և շաքարի, այլ նույնիսկ քայլացիում, մրջնալդեհիդ և տալիու վերաբեշյալ ճիգրատացիան ֆերմենտատիվ պրոցես և, այսինքն՝ այնպիսի ֆիզիոլոգիական մի յերեսույթ, վորը կատարվում և միայն առանձին քիմիական մի աղղակի՝ Յերմենիսի ներգործմամբ: Տիյալ դեպքում գործում և դիտաւազ կոչված ֆերմենտը, ավելի ճիշտն ասած՝ այսակ յերկու ֆերմենտ են գործում: Նրանց ազդեցության տակ սուրային միանում և մի մոլեկուլ ջուր, և սուրան գլուխողի յե վերածվում: Բուսական ըջիջում այդպիսով կատարվում և ճիշտ նույն ֆիզիոլոգիական պրոցեսը, ինչ վոր աելի ունի մեր որգանիզմում, կամ կենդանիների մոտ, այն և յերբ մեր թքի մեջ յեղած պահաւմն ֆերմենտի աղղեցության տակ հացի, գետնախնձորի, բրնձի և այն սուրան վերածվում և գլուկոզի:


Բուսական բջիջի մեջ, բացի մննուսախարիդ գլուկոզից, շատ տարածված և դիտախարիդ շաքարը $\text{C}_{12}\text{H}_{22}\text{O}_{11}$: Գլուկոզը կոչվում է խաղողի շաբար կամ պտղածաբար, գլուկոզ զանում ենք, որինակը, խաղողի, տանձի, արմավի պտղուների մեջ: Դիտախարիդը կոչվում և նաև յեղեղնաշաբար: Նա կազմվում և մեծ քանակությամբ շաքարեղեգնի ցողունների մեջ, գլխավորապես հանգույցների մոտ, և ճակնդեղի արմատներում: Տրոպիկական և մերձտրոպիկական յերկրներում գործածում են շաքարեղեգնի շաքարը, Յեվրո-

պայուռմ՝ ճակնդեղի շաքարը, վորի քանակը բույսի արմատի մեջ հասնում է 21—22%՝ ի. Դիսախարիդ և նույնպես գարու ծլած սերմի շաքարը, վորից պատրաստվում է զարեջուր, Դիսախարիդը բուսական բջիջի կողմից սպասվելուց առաջ յենթարկվում է ֆերմենտատիվ աղդեցության՝ նրա արտադրած ինվիտրին ֆերմենտի միջոցով, այսաեղ նույնպես կատարվում է հիդրատացիա՝ $C_{12}H_{22}O_{11} + H_2O = 2C_6H_{12}O_6$. Հիդրատացիայի ժամանակ, թերկամկապես յենթարկելով, ստացվում է $C_{12}H_{24}O_{12}$, բայց այս միացությունն իր գոյությունը չի կարող պահպանել և կազմված վայրկյանին տարրալուծվում է յերկու մոլեկուլ պատզաշաքարի: Խնվերտին ֆերմենտն արտադրում ենք և մենք, և՝ կենդանիները, և բույսերի նման այդ ֆերմենտով հիդրատացիայի յենք յենթարկում յեղնդնաշաշաքարը:

Շաքարը և ոսլան բուսականության մեջ վերին աստիճանի տարրածված են. յեթե չի յել կարելի ասել, վոր ցելուլոզից ել ավելի յեն տարրածված, սակայն կարելի յե պնդել, վոր այդ յերկու ածխածրերը, չափազանց տարրածված լինելու հետ միասին, միենանույն ժամանակ չափազանց ակտիվ նյութեր են: Ճիշտ ե, յես վերը ասացի, վոր ոսլան քիմիապես իներտ մարմին ե, բայց յերը ֆերմենտը նրա վրա ազդում ե և նա դառնում է շաքար, իներտությունը չքանում ե: Ոսլայի արտաքին ձևի վրա շատ են ուշադրություն դարձել, վորովհետև նա այն չե, ինչ վոր շաքարը, վորի արտաքին ձևը բջիջի մեջ չի կարելի հետազոտել, քանի վոր նա բջջահյութի մեջ հաջում ե և, ուրեմն, ձև չունի: Ոսլագտել են բոլոր բույսերի մեջ, բացառություն են կազմում զուշացնում և մի քանի՝ նրան ցեղակից բույսերի նկատված ե, վոր միենանույն բույսի ոսլայի հատիկները մանր են տերելի մեջ, անհամեմատ ավելի խոշոր են նրա շտեմարաններում՝ պալարի մեջ, սերմում, կոճղարմատում և այլն: Այդ պատճառով ել, հարմարության համար, մանավանդ վոր այդ քազմացման որգաններում ոսլան կուտակված է լինում մեծ քանակությամբ, հետազոտելու համար ոսլան վերցնում են այդ պահեստի որգաններից:

Ոսլան ամբարվում է կոճղարմատների և պալարների մեջ այն բույսերի մոտ, վորոնց ողային. որգանները ձմեռվանից առաջ մեռնում են, իսկ գարնանը պետք է վերանորոգվեն ի հաշիվ ամբարված մննդանյութերի: Կլասիկ որյեկտ և ոսլայի

հետազոտության հոգմար պկանախնձորի պալարը։ Երա բոլոր քիչները լիքն են սովորի նատիվիներով, այնողքո վոր, յեթե մի քիչ նյութ վերցնենք պալարի միջից, ոսլայի անթիվ հատիկներ կունենանք (նկ. 21)։ Ասլայի հատիկներն ընդհանրապես ձագր գաձեն են, կան խոշոր և մանր հատիկներու Մի ձայրից հատիկն ավելի նեղ է, հակառակ ձայրից՝ ավելի լայն նեղ ձայրից զեղի լայնը հատիկն աստիճանաբար և բայցնանում։ Այդ հատիկի մեջ հեշտապես յամբ նկատում ենք շերտավորում, վորն առաջ և զալիս այն բանից, վոր փոխեփոխ մեկ շերտն ավելի բաց զայնի յե, մյուսը՝ ավելի մութի ինքն՝ ուղայի հատիկը սպիտակ և Շերտերի թիվը զանազան է, ամենաշատը մինում և յերկուսից յերեք տասնյակը և նեղ մուռ ահենում ենք մեկ կետ, վորը կոչվում է կազմուրյան կիմսրոն (կամ կազմուրյան կորիզ), այդ կետի շորջը կա մի կանոնավոր շրջան, իսկ համեյալ շրջաններն անկանոն են, եքուցնարիկ բոլոր շերտերն ելլուսի ձևով են, նեղ կողմից իրանք ել նեղ են, իսկ լայն կողմից՝ ավելի



Նկ. 21. Գհանախնձորի պալարից վերցրած սոլայի հատիկներ։ Ա—պարզ հատիկ, Բ—կիսարարդ, Ծ և Դ բարդ հատիկներ (Ծ(փոքր) կազմության կորիզը կամ կենարունը Խոշորացրած և 540 անգամ։

լայն։ Շերտերի զանազան նյոււններ, այսինքն մութի և բաց լինելը, առաջ և զալիս այն բանից, վոր մութի շերտերն իրանց մեջ ավելի ջուր են պարունակում քան թե ավելի լույս շերտերը, վորոնք ուրեմն ավելի չոր են Զրի քանակի զանազանությունը յերկու հարեան շերտերի մեջ՝ վերագրում են այն հանգամանքին, վոր ցերեկով կազմվող շերտը պակաս ջուր և իր մեջ ունենում քան թե գիշերով կազմվողը, Յեվ, հիրավի, ցերեկը բույսն ավելի ուժեղ և ջուր գոլորշիացնում, ուրեմն նրա բոլոր մասերն ավելի չոր են լինում քան թե գիշերը, յերբ բույսն ավելի շատ-

ջուր և իր մեջ պարունակում։ Բույսի գանազան մասերից հիշենք այստեղ շաքարը, վորի լուծույթը ցերեկն ավելի պինդ և լինում քան թե դիշեցը, իսկ վորովհետև ուլան պալարի մեջ առաջ և դալիս զլուկողից, ուրեմն ուլան ել ցերեկն ավելի չոր և լինում, ապա ուրեմն և ավելի բաց գույյնի, իսկ գիշերն ավելի թաց և լինում, ուրեմն և ավելի մութ գույյնի Համեմատության համար թրջենք գրավանի թաշկինակի կեսը. թրջված մասն ավելի մութ կլինի քան թե չոր մասը¹⁾։


Բնական գիտությունների մեջ գիտական գատողություններն այն ժամանակի են ճանաչվում խսկապես ճիշտ և աներկրայիլի, յերբ նրանք ճշտվում են փորձով, Բուսաբանությունը, իբրև բնական գիտություն, նույյնպես փորձերի վրա յե հիմնված ինչ վերաբերում և բույսերի անատոմիային, նա նույյնպես դառնում և փորձնական գիտություն եր. Մենք հիմա փորձի հիման վրա կտեսնենք, վոր վերեռմ հիշտակված գատողություններն ուսլայի հատիկի շերտավորման պատճառների մասին ճիշտ են: Ադոլֆ Մայեռ գերմանացի գիտնականը, վորը տարիներ շարունակ պարապել և ոսլայի հետազոտությամբ, մթության մեջ պահեց մի կանաչ բույս, վորի ոսլաներն սկսեցին չքանակ գառնալ շաքար և լուծվել Այդ պրոցեսի սկզբում ոսլայի հատիկները կրծված են լինում: Յերբ մութ տեղից Մայեռը նորից լույս տեղ հանեց այդ բույսը և պահեց լույսի տակ 9 որ և հետո մանրապիտական քննության յենթարկեց այդ ոսլաները, տեսավ, վոր ոսլայի կրծված հատիկների վրա 9 մութ, 9 բաց գույյի շերտեր եյլն կազմվել՝ հաջորդաբար: Այս մի փայլուն հազթանակ եր ոսլայի կազմության տեսության ոգտին: Իսկ ինչ վերաբերում ե մի ուրիշ գիտնականի այն փորձին, վորը ցույց ե տալիս, վոր ոսլայի շերտերի այդպիսի կազմությունը կանոնավոր կերպով տեղի չի ունեցել, այդ պետք ե պարզել այն բանով, վոր այս դեպքում անկանակած տեղի ունեցած կլինի մի ուրիշ պրոցես, վորը զանազան չափով սպառած կլինի կազմված նոր շերտերը: Այս տեսության ճիշտ լինելն ապացուցելու համար բավական ե և Մայեռի փորձը:

1) Դրան ապացույց ե այն, վոր յերբ այդ հատիկներն աբսոլուտ ալկոհոլի կամ գլցերինի մեջ ենք պահում, նրանք ջրատվում են և շերտերն անհետանում են:

Բոլոր բարձր բույսերի մոտ բջիջների բազմացումն ամենասերտ կերպով կապված ե բջջակորիգի բաժանման հետ: Ցերեր բջջակորիգը բաժանվում ե յ բկու մասի, վիճը նույնպես բաժանվում է յերկու բջիջի: այդ յերկու նոր կորիզներից մեջ ընում ե մի բջիջի մեջ, մյուսը՝ մյուս բջիջի մեջ ե անցնում: Բջիջի այս ձևի բազմացման ժամանակ միայն շատ քիչ դեպքերում բջջակորիգը բաժանվում է հասարակ ձևով՝ յերկուսի կիսվելով: Բջջա-

նկար 33. Peziza պարկասնկեր ասկուսների մեջ առաջ ե գալիս բջջների աղատ ծագում: Եթե ասկուսները կարդացման զանազան ստագիսները՝ ձ, օ, ֆ հաջորդականությամբ:

կորիզի այդ ձեր բազմացումը, վորը կոչվում է ուղիղ կոմ ամիստիկ բազմացում, բարձր բայցների, ինչպես և կենզանիների մոռառած և զալիս միայն իրքի հիմանգաղին (պաթոլոզիկ) յերեսով կոմ ձերաթյան հետեւնք:

Մեծ մասամբ բաւական, նույնպես և կենզանուկան, բջիջների բազմացման ժամանակ բջջակորիզը բաժանվում է յերկուսի՝ վերին տառիճանի բարդ ձեռվլ, վորը կոչվում է կարխովինզ, այս անուղղակի բաժանում է, վորը կոչվում և նուև միտոք: Կարիսկինեղի բարդ յերեւյթն իր բոլոր սասպիրաներով և հետեւղականությամբ ճիշտ ճիշտ միանույն և բույսերի և կենզանիների մոտ, այդ շատ ուժեղ ապացույց և բաւական և կենզանուսական աշխարհի ներքին միասնականության: Կարիսկինեղը բաւական բջիջում զվաճախուարուելու հետազանկ և Սարապրուրդերը, յերեւյթն այն սասպիճան բարդ է, վոր մի մարդ չեր կարող այն ամբողջովին ուսումնասիրել. մի շարք ուրիշ ականազոր միկրոսկոպիուներ շատ մեծ զարկ են ամիել կարիսկինեղի ուսումնասիրանթյանը: Սակայն չպետք մոռանանք, վոր կարիսկինեղի յերեւյթները բոլորն ուսումնասիրված են ֆիբրացիայի յենթարկված և ներկված պրեկտարատների վրա, ուրիշն զիտնականներն իրանց առաջ ունեցել են արհեստական ձևով պատրաստված պրեկտարատներ, ինքնըստինքյան պարզ է, վոր պրոցեսի գինամիկ պատկերն անհնարին և առանել կարիսկինեղն արհեստական կերպով կարելի յե փոխարինել կորիզի ուղղակի բաժանումով, դրա համար բավական և նոր կազմվող բջիջների վրայ որինակ՝ յերկարացող մասապ արժաների վրա, աղղել ջերմասիճանը ցածացնելով, յեթերի կամ քըրուալ հիգրատի միջոցով: Բջջակորիզի անուղղակի բաժանումը յերկու տիպի յե վնասմ, — մեկը կոչվում և վեգետատիվ, մյուսը՝ ռեգուլյարին, կարիսկինեղը բառը կազմված և յերկու հունարեն բառերից. մեկը կարիսկու, այսինքն կորիզ, մյուսը՝ կինեղիս, այսինքն շարժում: Շարժում այսպես այն մոքով և ասված, վոր բաժանվող կորիզի մասերն իրարից անջատվելով, իրարից հեռանալով՝ մտնում են յերկու նոր բջիջների մեջ, այսպես ասած՝ շարժվում են: Կարիսկինեղի պրոցեսը ներկայացնում և մի շարք միմյանց կանոնավոր կերպով հետևող Փաղեր (Նկ. 34): Բջջի բազմացումից առաջ կորիզի մեջ նըրա նյութի մի մասն առանձնանալով ներկայանում և մանը հատիկների ձեռվլ և հետո տալիս և մի վերին սասպիճանի խճճված:

ժապավենս, վորի ծայրերը հնար չկա տեսնելու Այս ստադիան
կոչվում և սպիրենա կամ կծիկի ստադիա ժապավենածև մարմնի
նյութը շատ ուժեղ կերպով կլանում և իր մեջ զանազան ներկեր,
և վորովհետեւ ներկ-գույն հունարեն քրոմ յեւ, այդ պատճառով
կորիզից առաջացած ժապավենի նյութը կոչվում և քրոմատին.



Նկար 34. Կորիզի բաժանման հաջորդական ստադիաները, աղա և բջիջի բաժանման A—կորիզի հանգստյան շրջանը, B, C,D—պրոֆազը. E—K—մետաֆազը. J—O—անաֆազը. P—տելիֆազը. M և N-ի մեջ յերկում և սկսվող նոր թաղանթը, O և P-ի մեջ յերկու դուռար բջջների մեջև թաղանթ արգել կազմվել եւ

կորիզի հիմնական նյութը, լինինը կամ աքրոմատինը, ընդհակառակը, բավական անտարբեր եղանակի ներկերը, գոնե ուժեղ կերպով չի ներկվում, կորիզի մակերեսի վրա պարզ յերկում և նրա թաղանթը և միջում՝ կորիզակը կորիզակները դեպի ներկերը հայտնարերում են քիչ թե շատ նման վերաբերմունք, ինչպես պրոտոպլազման. նրանք ներկվում են անիլինի թթու ներկիրով, ինչպես եղանակ, այն ինչ քրոմատինը առանձնապես ուժեղ ներկվում և «հիմնական» ներկերով, ինչպես մեթիլեն գրյունն եւ չետո քրոմատինի ժապա-

վենք բաժանվում և զանազան մտսերից վարոնք կոչվում են Երևանունիւն, Զանազան բույսերի մոտ քրամոզումների թիվը զանազան է, բայց մեծ մասամբ քառաղպատիկ է, Քրամոզումներին առանձնապես մեծ նշանակություն են վերադրում, համարելով նրանց որդանիքմի ժամանկական հատկությունները կրտսերը Նրանց մեջ առեղջ կարելի և նկատել շերտագործում ըստ լայնության Քրամոզումների սահցվելու հետո կորիզի թագանթն անհետանուած է, քրամոզումները դալիս աեղագործում են կորիզի հասարակածի մակարդակի վրա և կազմում են այսպիս կոչված կորիզի թագանթը, այս կոչվում և աստիվ սատիա: Հետո կորիզը յերկարանում և և իրիզի ձեւ և ըստնուած: Կորիզի միջին մակարդակից, հասարակածից, զեղութեանները յերեան են զալիս գծերի ձեռվ միացնող թերթը Առաջ և զալիս գծափոր կորիզ իշխիլ սատիայում: Ծիմե վերեից զիտենք այդ սահցիայի կորիզը, կահոնենք, վոր քրամոզներն այդ սատիլուած տառպի ձեռվ են շարժել Այդ Ժամանակ քրամոզումները սու վորաբար ունենում են Վ-ի նման մարմինների ձեւ, վորոնք ծարչված կողքով զարձած են զետի կենտրոնը, խև ազատ ծայրերով — զեղի գուրա Հետո քրամոզումներից յուրաքանչյուրն ըստ յերկայնության բաժանվում և յերկուսի Քրամոզումների այդ ճեղքիվելը միշտ սկսվում և ներքին ծոված կողմից: Առաջ յեկած յերկու սեղմենաններից մեկը հետանում և զեղի մի բենուը, մյուսը զնում և զեղի մյուս բեկորը: Այդ տեղափոխություն ժամանակ նրանք միշտ զարձած են լինում իրանց ծայրերով զեղի հասարակածը: Մինչդեռ քրամոզումները զնում են զեղի բներները, կորիզի հասարակածի մակարդակում առաջ և զալիս մի նոր բարակ պատ, վորը կազմված և մանր հատիկներից: Այդ այսպիս կոչված բջիջային պատն և Այդ պատը քանի զնում ավելի ու ավելի պնդանում է, իր կողքերից աճում և այնքան, մինչեւ վոր մայրական բջիջը բաժանում և յերկու գուստը — բջիջների: Սկզբում նա առաջ և սպիտակուցային նյութի սեակցիանները, հետո կամաց — կամաց դաշտանում և ցեղուղղային: Այս գիտողությունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ և կարեռ նշանակություն ունի կորիզը բջիջաթաղանթի կազմելու հարցում: չե՞ վոր յուրաքանչյուր նոր բջիջաթաղանթ կազմվում և բջիջակորիզի մեջ, Բեկոններում հավաքված քրոմոզումները նորից միանում են և տալիս են քրոմատինի ժապավեն, կորիզը ծածկվում և թաղանթով, կորիզի մեջ դարձյալ առաջ

և գալիս կորիղակ, իսկ գծերը անհետանում են: Այսպիսով մայրական բջիջը բաժանվեց յերկու դռւարը — բջիջների, վորոնցից յուրաքանչյուրն ունի իր մեջ մի կորիղ: Կորիղի բաժանման բոլոր նկարագրված ստագիաները կազմում են չորս Փաղ — պրոֆաղ, մետափաղ, անափաղ և տելոփաղ: Պունազը կարիոկինեղի սկզբից մինչև քրոմոզոմների միմ յանցից անջատվելն եւ Միտանազը — յերբ քրոմոզոմները հասարակածից հնարանում են դեպի ընեռները: Անախազ կոչվում է՝ սկսած այն դրությունից, յերբ հասարակածում արգեն քրոմոզոմներ չկան, և վերջացրած այն դրությամբ, յերբ քրոմոզոմները կուտակված քենաներում ի մի յեն հավաքվել կողքերին, և յերբ գծերն սկսում են աճել և լայնանալ Յեղ տեղոնազ — վերջին ֆաղը, վոր հաշվվում եւ այն բոպեյից, յերբ ապագա թաղանթի տեղում սկսում են կազմվել մանր հատիկներ մինչև իսկական յերկու նոր բջիջ ստացվելը, իրանց կորիղներով և կորիղակներով:


Բջիջների բազմանալու այս ձեն ամենուրեք ապահածված և սովորական եւ Spirōց ցըրմուռը կարիոկինեղի մի խոտորում և տալիս Սրա մոտ բջջակորիդն եյականում նույն ձեռվ և բաժանվում, ինչպես սովորաբար բջիջների մեծ մասի մոտ, սակայ նայն զանազանությամբ, վոր յերբ գալիս եւ այն ժամանակը, յերբ յերկու նոր բջիջների միջի պատը պետք եւ կազմվի, նոր թաղանթը կազմվում եւ ուրիշ ձեռվ, հետեյալ կերպ, վորտեղ վոր ուռած կորիղի հասարակածը շփվում եւ բջիջի պատի հետ, այդտեղ բջիջի պատից նոր պատնեղ պատնեղ եղուրս գալիս կլոր շրջանի ձեռվ. այդ պատնեղը քանի զնում ավելի և ավելի աճում եւ դեպի ներս այնպես, վոր նա փակվում եւ աչքի բբի պես, յերբ նա ավելի նեղ եւ գառնում, կամ կարելի եւ ասել՝ միկրոսկոպի փակվող դիաֆրագմայի ձեռվ: Վերջիվերջո յերկու բջիջների միջի պատն ամբողջանում եւ և ստացվում եւ յերկու բջիջ՝ կատարյալ ձերի:

Կորիղի ռեգուլացիոն բաժանում մենք տեսնում ենք այն բջիջների մեջ, վորոնք ծառայում են նոր սերունդ տալու համար, սեռական ակտից առաջ: Այդ ակտի եյությունն այն եւ, վոր յերկու սեռական բջիջները, ավելի ճիշտ կլինի ասել՝ նըանց կորիղները, ձուլում են իրար հետ, վորից առաջ եւ գալիս նոր սերունդ, թվում եւ, թե յուրաքանչյուր անգամ սեռական ակտից հետո քրոմոզոմների թիվը բջիջներում կրկնապատկվելու յեւ, վորովհետեւ յեթե

Տ կորիզները ձուբվում են, վորոնցից յուրաքանչյուրը, առևնք թե, ունի 14 քրոմոզոմ, ապա այդ ձուբված և նրանից առաջացած սերնդի բջիջներում նրանց թիվը կլիներ $14+14=28$, Յեթէ իրոք այդպես ըները, ապա մի շաբք սերունդներից հետո բջիջներում կուտակվելու եյին մեծ քանակությամբ քրոմոզոմներու երականության մեջ ինարկե այդպիսի բան չի լինում: Հայտնի յեւ վոր բաւարի յուրաքանչյուր անսուկը միշտ անհնում և վորոշ, կայուն թվով քրոմոզոմներու ինչպի պետք և բացատրել այդ հանդամանաքը: Սեսական ակախ ժամանակ քրոմոզոմների թվի կրկնապատճեռմ տեղի չի ունենում, ակսակի մոտ նրանց թիվը կայուն և մնում հենց կորիզի ունդուկցիոն բաժանման շնորհիվ: Այդ բաժանման եյտթյունն այն և, վոր բջիջը նկարապրված (կարխովինեղ) ձեռք բաժանվում և մինչեւ յերկու գուսարը—բջիջների, ասկայն բանը զրանով չի վերջանում, գուսարը բջիջներն առանց հանդատյան շրջանն անցնենքու, անմիջապես բաժանվում են՝ տալով չորս բջիջներ, վորոնցից յուրաքանչյուրը ստանում և քրոմոզոմների սովորական, նորմալ թվի կեսը՝ 7 քրոմոզոմ. յեթէ ալյալ անսակի համար նորմալ թիվն ընդունենք 14, ուրիմն՝ վորպես կանոն, սեսական ակախ տասջ գրան ծառայող բջիջներն ունենում են ալյալ անսակի համար քրոմոզոմների նորմալ կայուն թվի կեսը: Յերբ նման բջիջները ձուլվում են, յուրաքանչյուրի կորիզն իր հետ բերում և 14—ի փոխարեն 7 քրոմոզոմ, վորի շնորհիվ բջիջում նրանց թիվը վերականգնում է՝ $7+7=14$, Ուրեմն սեղուկցիոն բաժանման շնորհիվ քրոմոզոմների կայուն թիվը անսակներում պահպանվում է, նա վոչ մեծանում և և վոչ ել նվազում: Մեծուկցիոն բաժանումը հատուկ և բարձր սպորավոր բույսերի մայրական բջիջներին, ծաղկափոշու մայրական բջիջներին և ծաղկավոր բույսերի սաղմային պարկերին կորիզի սեղուկցիոն բաժանումը մի ձեւ, վորի միջոցով բույսերի քրոմոզոմների թիվը, չնայելով բեղմնավորյության, մնում և նորմալ թե ինչպես կորիզը բջիջի ժառանգական հատկությունները հետյալ սերնդի վրա յեւ տանում, այդ կտեսնենք հետագայում իր տեղում:

Բջիջի բազմացման հինգերորդ ձեւը կոչվում և բողոքում: Այդ մենք կարող ենք տեսնել այն շաբքաբանկի Saccharomyces cerevisiae վրա, վորը գարեջուր պատրաստելու ժամանակ և գոր-

ճածվում ածիկի մեջ խմորում առաջ բերելու համար: Այս ստորին սունկ է, միայն միկրոսկոպով տեսանելի: Նրա բջիջները ձևարդաձև են: Իրանց մեջ պարունակում են պրոտոպլազմա, կորիզ, վակուոլներ և յուղի կաթիլներ: Թաղանթը ունեն (*նկ. 35*): Այս սունկը մնալում ե շաքարով և, նրան խմորման յենթարկելով, դարձնում ե եթիլ սպիրտ և ածխաթթու: Յերբ լավ ե անվում, նրա բջիջն սկսում ե բազմանալ Բջիջի կողքի վրա սկսում



Նկար 35. *Saccharomyces cerevisiae*
Շաքարամնկի բողոքումը, 1—առանձին բջիջ, 2—բողոքումը բազմանալ սկսում բջիջ: Խոշորացնած ե 1500 անգամ: 3—սունկն արգել շղթաներ և տվել և դադութ ե կազմել: Խոշորացնած ե 1000 անգամ: (*Հատ Լյուբսենի*)

ների մի ամբողջ շղթա: Բարենպաստ պայմաններում մայր բջիջի մյուս կողքից ել բջիջների նոր շղթա յե առաջ գալիս: Բայց շղթաներում բջիջները միմյանց հետ շատ թույլ են կապված, և հեղտ անջատվում են իրարից և ապրում են առանձին—առան-

ե կազմվել մի ուռուցք, վորը սակայն մայր—բջիջից թաղանթով բաժանված չե: այդ ուռուցքի մեջ անցնում ե մայր բջիջի պրոտոպլազմայի մի մասը, վորն իրարկեանհրաժեշտ գուստոր բջիջի համար: Ուռուցքը քանի գնում աճում ե, բայց մայր բջիջի չափ չի մեծանում: Մայր—բջիջի կորիզը գալիս կանգնում ե այդ յերկու բջիջների սահմանի վրա, նրանց, կարելի յե ասել շեմքի վրա: Հետո կորիզը կարիքինեստիկ ձևով բաժանվում ե յերկու կորիզի: մի կորիզը յետ ե գնում մայր բջիջի մեջ, մյուսը մտնում է գուստոր—բջիջի մեջ: Յերկու կորիզների մեջտեղը, ինչպես պետք եր սպասել, նոր թաղանթ ե կազմվում: Նոր բջիջի վրա մի քիչ ժամանակից հետո, մանավանդ յեթե սնունդը լավ ե, կազմվում ե մի նոր բջիջ, յերրորդ բջիջի վրա՝ չորրորդ բջիջը, և այլպիսով ստացվում ե շաքարամնկի բջիջ-

ձին, Բաղրոջաւմը բջիջի բազմանարու շատ հին և վոչ կտառքեցագործված ձև է, այս ձեր չի դարպացել մնացել և միայն սունդ կերի գասում սահմանափակված:

Խ1. ԲՈՒՅՍՈՒՐԻ ՀԻԱՆԱԼՈՂԻԱ (ԵՅՈՒՍՎԱԾԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ)

«Բայց երի բջիջային կասուցվածքը» զիմում իմացանք, թե ինչո՞ս բառական աշխարհն իր դարպացման ընթացքում, տառչանալով միարջիջ պարզ որդանիովմներից, բազմարջիջ և զարձել, բարգացել և կատարելագործվել և՝ բջիջների դիմերենցիացիյի և նրանց միջի աշխատանքի բաժանման ճանապարհով ինարկի, որդանիովմի ընդհանուր սիստեմում յուրաքանչյուր բջիջ մեկ սողեցիփիկ ձև չունի և մեկ փունկցիոն չի կատարում: Բջիջների վորոշ խմբեր միանման աեզ և զիրք ունենալով, միանման պայմաններում դանվիլով, միանման ել ձև ու կասուցվածք են ունենում և կատարում են միենայն փունկցիան:

Ան այդ միանման ծագում, ձև ու կասուցվածք ունեցող, այլև միենայն փունկցիան կատարող բջիջները, վորոնք որդանիովմի մեջ ունենալով միենայն զրությունը, կազմում են ընական խմբեր, ընդունված և անվանել հյուսվածք: Առաջին բուսաբանները կարծում եյին, վոր բույսները կազմված են թերանման բջիջներից, վորոնք իրար հետ հյուսված են կուպիթի թերերի նման: Այսուղից առաջ յեկավ բուսական անատոմիայի հյուսվածքը տերմինը: Սակայն պետք է ուշազրություն գարձնել, վոր միենայն փունկցիան կատարելու համար անհրաժեշտ միենայն քիմիական նյութերը պարունակել, այնպես վոր մի վորեն հյուսվածքի բջիջների մեջ, բացի վերոհիշյալ աղքակցական կապերից, կաև քիմիական նյութերի միատեսակությունն: Առաջ հյուսվածքները միայն նկարագրում եյին: հետագայում զիտությունը պահանջեց հյուսվածքների արտաքին ձևը կապել նրանց փունկցիաների հետ: առաջ յեկան այսպես կոչված հյուսվածքների ֆիզիոլոգիական սիստեմներ, վորոնց մեջ ամենից լավ մշակվածը Բեռլինի համալսարանի բուսաբանության պրոֆեսոր ակադեմիկոս Հաբեռլանդտի սիստեմն եւ Սա ընդգրկում ենետելյալ հյուսվածքները 1) ծածկող կամ պաշտպանող, 2) փոխադրող, 3) մեխանիկական, 4) ասմիմելիացիոն, 5) պաշարի, 6) սաղմային, 7) ծծող, 8) վենտի-

լացիոն, 9) սեկրետոր, 10) դպացող որդանների և 11) գրգիռներ տարածող հյուսվածքը նայենք այդ հյուսվածքները հաջորդական կարգով, առայժմ կարճառոտ ձևով տալով միայն նրանց համառ սուրբնութագիրը. մանրամասն կնայենք որդանների անառողմայի գլուխներում:

Սածկող կամ պատապամող հյուսվածքը լինում և իհարկե բույսի դրսի կողմից, վարովինետև այդ հյուսվածքը պաշտպանում և բույն արտօաքին աշխարհի ազդեցությունից, վորը շատ անգամ նրա համար կործանիչ կարող եր լինել Այդպես, տերեւ և մատաղ ցողունը ծածկված են լինում մաշկի հյուսվածքով, վորի շնորհիվ ջրի գորոշիացումը շատ խիստ նվազում և այդպիսով բույսը փրկվում և արելի կիզիչ ճառագայթներից, Մաշկը սակայն բույսի բազմամյա մասերի վրա փոխվում և խցանի, վորը կարողանում և պահպանել բույսը ձմեռվա ցրտից:

Փոխարքող հյուսվածքներն այն հյուսվածքներն են, վորոնք անցնում են ցողունի և արժատի յերկայնությամբ և մտնելով տերեւի, բաժակի և պատկի մեջ, սփավում են նրանց մեջ, կազմելով նրանց ջղերը կամ նյարդերը, Այդ տարուքերով հյուսվածքները բաժանվում են յերկու խմբի, մեկը կազմում և անոթները, վորոնց միջով հողից ջուրը և նրա մեջ լուծված հանքային սնընդգարար հում նյութերը բարձրանում են զեղի վեր, մյուսը՝ ներկայացնում և այսպիս կոչված մաղանոթները, վորոնց միջով տերեւից իջնում են զեղի բույսի մյուս, ցածի մասերն որդանական, մշակված շինարար նյութեր, դրանք են՝ սպիտակուցը, շաքարը, ուլան, ճարպը և այլն:

Միասնիկական հյուսվածքներն ամրություն են տալիս բույսին. նրանք հաստ պատեր ունեն և կենդանի նյութից զրկված են, գանգում են ցողունի, արժատի, տերեւի մեջ և հավաքվում, ուժեղ զարդանում են այն որդանների մեջ, վորոնք պետք ե մեծ քեռ կրեն իրանց վրա կամ պետք և ընդդիմանան շատ մեծ մեխանիկական ձգման, վոր բույսը չկոտրվի:

Ասիմիլացիոն հյուսվածքի ֆունկցիան ե՝ կլանել արել լույսի ճառագայթները, գործադրել այդ ճառագայթների եներգիան ածխաթթու դաշը տարրալուծելու համար, այդ գաղի ածխածնից և իր ջրից շաքար և ուլա պատրաստել մի խոսքով՝ կատարել ինչպես ասում են, ասիմիլացիա: Այդ հյուսվածքը կազմվում է

զլիսավորապես աերեի վերեի մտկարգակի տակ, վոր կողմայ վոր աերեի գործած և դեպի արեր

Պաւարի հյուսվածք տուելով հասկանում են բջիջների այն-պիսի խումբ, վորն իր մեջ հավաքում և որդանական շինանյու-թեր և պահում և նրանց բույսի հյունքի ավելի թագուն և ոյսու-սիզ ժամանակը։ Պոշարի բջիջները կենդանի բջիջներ են, և պա-շարի նյութերը զանվամ են այդ կենդանի բջիջների նկրում։ Պաշարի հյուսվածքները գործի յեն դրվամ զլիսավորապես այն ժամանակ, յերբ սկսվամ և, ինչպես, որինակ, գարնանը, ինտեն-սիզ շինարարական աշխատանքը, — յերբ բողբոջները բացվում են, սերմերը ծլում են և այլն Բացի գրանից, պաշարի նյութերը, այսինքն՝ զլիսավորապես շաքարը, սորեն, ճարպը, զրծադղրվում են նաև բոյուերի շնչառության ժամանակը։

Սաղմային հյուսվածք կոչվում են այն բջիջների խմբերը, վորոնք ընդունակ են բազմացման, այդ բջիջների մի խումբը դանվում և ցողունի և արմատի կեղեի և ընտափայտի սահմանի վրա և բազմանալով աարեց տարի նողաստում և ցողունի և ար-մատի հաստանալուն։ Սաղմային հյուսվածք կա նաև բողբոջների դադարթում, վորի շնորհիվ բողբոջները բացվում են, աճում և տալիս են նոր տերեներ՝ յերկարացող ճյուղի վրա Բուսական աշխարհի առանձնահատկություններից մեկն և կազմում նրա սաղմային հյուսվածքի հազարավոր տարիներ ապրելը, կան ծա-ռեր, վորոնք 3000—3500 տարի աճում են՝ շնորհիվ իրանց բող-բոջների մեջ անվերջ առաջ յեկող սաղմային հյուսվածքի, իսկ կենդանիների մոտ սաղմային հյուսվածքը համեմատարար շատ քիչ և զործում։ ամենաշատը մի քանի տասնյակ տարուց հետո կենդանու որդանիզմն այլս սաղմային հյուսվածքը չի առլիս, կենդանին այդ ժամանակ հասնում և իր մեծության վերջին սահմանին և այլս չի աճում։

Սեկենոր կոչվում և այն հյուսվածքը, վորի բջիջներն ար-տադրում են առանձին նյութերմ, ինչպես ասում են, սեկեռ Սեկ-քեռը մնում և բույսի մեջ և ազդում և նրա զանազան պրոցես-ների վրա։

Ծծող հյուսվածք կազմում են արմատի մաղմզուկները, վո-րոնք առաջանում են նրա մաշկի բջիջների յերկարանալուց

Մաղմզուկները տարածվում են հողի մեջ և կլանում են նրանից ջուր և ջրի մեջ լուծված հանգային աղերը:

Վենիտիլացիոն հյուսվածքը ծառայում է դաղերի փոխանակության համար, այս կարևոր և ասիմիլացիայի, շնչառության և ջրի գոլորշիցման պրոցեսները կատարելու համար: Վենտիլացիոն սիստեմը, վորն ավելի ճիշտ տերմին ե քան վենտիլացիոն հյուսվածքը, կազմում է միջնաշխային տարածություններ և խորշեր: Այս անառողմիկական բովանդակություն չունի: այս մի հյուսվածք չե, բջիջներից չի կազմված: այլ սխալմամբ հյուսվածք և կոչվում այն, վորը միայն ուրիշ հյուսվածքների մեջ գտնվող խորշերի մի սիստեմ եւ Բույսի վենտիլացիոն սիստեմը կատարում է շատ մեծ ֆիզիոլոգիական ֆունկցիա:

Զգացող որգանների հյուսվածք — զրանք են շփման զգացում ունեցող ծակերը, մաղերը և հալասարակշության զգացման որոշականները:


Գրգիռներ տարածող հյուսվածք կազմում են պլազմոդես սմաները, պատկառուկ միմոզալի խողովակները:

Այստեղ հարկ եմ համարում մի քիչ յերկար կանգ առնել մեխանիկական հյուսվածքի վրա:

Միխանիկական բջիջների մեջ տառածին տեղ են բանում սքրենենիմի բջիջները, վորոնք սահմանափակ իղողիամետրիկ ձևի յին վնում, կամ նեղու յերկար նրանց թաղանթը մեծ մասմբ չատ հաստացած է լինում և իր վրա պարզ շերտեր ունի: Հաստացած թաղանթը հաճախ ունենում է նեղ, կլոր անցքեր, վորոնք շատ անդամ ճյուղավորված է նկար 36. Թարացած բջիջներ պակոսի արմավենու պտղի բջիջը՝ շատ հասեն լինում (Նկ. 36):

Սքրենենացած պատկանի բջիջները գտնվում են շատ դաշտում, կոչվում են հյուսվածք մասերում, վրա պարզ շերտեր ունի: Հաստացած թաղանթը հաճախ ունենում է նեղ, կլոր անցքեր, վորոնք շատ անդամ ճյուղավորված է նկար 36. Թարացած բջիջներ պակոսի արմավենու պտղի բջիջը՝ շատ հասեն լինում (Նկ. 36):

Սքրենենացած պատկանի բջիջները գտնվում են ամբողջ աշխատավայրում և հենակետ են տալիս: Այդ պատճառով նրանք կոչվում են բարացած բջիջներ:



Նկար 36. Թարացած բջիջներ պակոսի արմավենու պտղի բջիջը՝ շատ հասեն լինում (Նկ. 36):

արմավենու պտղի բջիջը՝ շատ հասեն լինում (Նկ. 36):

արմավենու պտղի բջիջը՝ շատ հասեն լինում (Նկ. 36):

Սքլերէնիֆիմի բջիջներ շատ են պատահում կաղնու կեղեռում, շատ ուրիշ չոր սերմերի պատերում։ Քարացած բջիջները, բացի պըտուգների և սերմերի հաստ պատերի մեջ պատահելուց, միշտ պատահում են նույն ծառերի կճեղում և պաշտպանում են նրանց առկ զանգվազ նուրբ բջիջները։ Քարացած բջիջների հաստացոծ պատերի մեջ զանգվազ կալցիֆիումի և կայծաքարի տղերը չառ ուժեղ կերպով բարձրացնում են այդ հյուսվածքների տմբությունը։ Մի քանի բայց յսերի մոտ, փորսն տերեի մեղոփիլը կակուզ և բջիջների հյութալիք լինելու և նրանց թաղանթի բարակ լինելու հասկանքով, տերեի յերկու մազկերի մեջ ոյսների նման կանգնած են լինում սքլերէնիֆիմի յերկար բջիջները, փորսնք յերկու ծայրից լայնացած են լինում, այդպիսով տերեին անհրաժեշտ ամրություն են տալիս։ Սքլերէնիֆիմի այն լիլիկները, փորսնք զանգվազ են կեղերի մեջ, կոչվում են բորբ' նուրը թելեր, իսկ բնափայտի մեջ զանգվածները — լիրիթնուր։ Այդ թելերը բավական յերկար են։ Մինչդեռ ընդհանրապես բջիջների չափը համարվում է միւ՛ մետրի հազարերորդական մասերով, փորսնք միլիլուսկոպի-
այի մեջ կոչվում են միկրոններ, չ, մեխանիկական լիլիկները հարկ և լինում չափել ամբողջ միլիլուսերներով, առանձին գեղաքերում, — լինչպես, ուրին ակ, կտավատի, կանեփի, յեղինչի լիլիկները, նրանք հասնում են մի քանի սանտիմետրի, նրանց յերկարությունը տեխնիկայի մեջ չափ գնահատված է, վորովներեւ ինչքան յերկար են




Նկար 37. Բամբակի թելիկները. 1—ըստ լայնության կտրված. D—զուլորված տեղերը

լինում միխանիկական լիլիկները, այնքան նրանցից պատրաստված մանուֆակտուրան ամուր և դիմացկուն և լինում, և ուրեմն այնքան ել գժվար և պատվալում, այնքան ել դժվար են մաշվում

Նրանցից պատրաստված կտորները, պարանները, թուղթը Այդ-
պես, կտավատի թելը 20—40 միլիմետր է, կանեփինը՝ 10 և
ավելի, յեղինչի թելը՝ մինչև 77, Նրանց պատերը միշտ քիչ թե-
շտ հաստ են, յերբեմն մինչև խորշ ել չի մնում բջիջի մեջ:

Սքլերենիֆիմի բջիջները շատ անգամ տեխնիկական խոցոք
նշանակություն ունեն, որինակ, բամբակը, վորը բամբակենու-
սերմի եպիդերմիսի վրա զանված յերկար սքլերենիֆիմն ե, մեջը
պատարկ, պատերը՝ մաքուր ցելուլոզից (նկ. 37). Բամբակի թե-
լերը կազմված են մի ժաղավենաձև բջիջից. շատ անգամ նրանք




Նկար 38. Կտավատի լուրի (բրծեն) թելերը. 1—բջիջի
ծայրը. 4—հատվածը ըստ լանության, ջրու մեջ արած.
5—նույնը քլոր—ցինկ—յոդի մեջ. L—խորշը. V—պատե-
րի տեղաշարժը:

վոլորված են լինում, մի ծայրը կոնաձև կամ լայն, կամ կոլբի
ձևով, մյուս ծայրը՝ պատառված, վորովհատե այդ մյուս ծայրով
նա կպած եր սերմին և պոկված ե, Բամբակի թելը կարող ե լի-
նել 12 միլիմետրից մինչև 50 միլիմետր յերկար: Ամենամեծ
լայնությունը թելի (նրա մեջաեղում) 12—45մ. լավ յերեսում ե
միջի լայն խոցը:

Կատավատի թելերը նույնպես մաքուր ցելուրադից են կաղմած, յերկարությունը 4—66 միլիմետր, լայնությունը 1—13μ. (նկ. 38). Առանձին թելը վազորի է, յերկու ծայրերին որացած, նույնաբանելի չի վուրագում, մի քանի կամերում ակղից հանգած է. ըստ լայնության յերբ կարենք, կամանենք, վոր նրանք բազմանկյունի յեն, ներքին խորշը շատ աննշան է:

Կանեփի թելը նման է կատավատի թելին (նկ. 39). Միայն թե բազմանկյունի չե, այլ ավելի կլոր, իսկ մեջակի, խորշը



Նկար 39. Կանեփի լուրի թելերը. 3, 4, 5—թելերի ձայնակար. 6—հատվածը ըստ լայնության, ջրի մեջ արած. 7—նույնը՝ բլոր-ցինկ-յոդի մեջ:

ավելի մեծ ե, յերկար, յերբեմն ել խաչաձև։ Պատերը թեև ցելուլուզային են, բայց նրանց մեջ մի քիչ ել բնափայտ կա, այդ պատճառով կանեփի թելերից ստացվում են ավելի կոշտ, կոպիտ մանվածքներ։ Թելերի ծայրերը բութ են, յերբեմն կողքից յերկարացած։ Յերկարությունը 5—55 միլիմետր, լայնությունը՝ 16—50μ.։

Զուրու կամ բենգալյան կանեփը տալիս և ել ավելի կոշտ

մանվածք: Սրա թելերը Corechorus բույսից են ստացվում: Ցեր-կարությունը 1,5—5 միլիմետր ե, լայնությունը՝ 20—25ս: Ներ-

քին խորշը զանազան լայնության ե, յեր-բեմն ել ընդհատվում ե (նկ. 40): Պատերը փայտացած են:

Վերոհիշյալ մեխա-նիկական հյուսվածքներն առաձգական են են և ամուր: Մեխա-նիկական բջիջների թաղանթն ընդհանրապես փայտացած ե լինում, բայց կարող ե մնալ և ցելուլոզային, ինչպես, որինակ, կը-տավատի, կանեփի մեջ: Ճիշտ չափումները ըույց տվին, վոր նը-

նկար 40. Զումի լուրի, թելերը. 3—հատվածք ըստ լայնության՝ ջրի մեջ արած. 4—նույնը՝ քլոր-ցինկ-յոդի մեջ. V—խորշը նեղանալը, Ա—խորշը ընդհատումը:

բանք շատ ամուր են և յետ չեն մնում մեխաղներից:
Հետեւյալ ցուցակն այդ պարզ ցույց ե տալիս.

	Բանի կիլո ծանրություն և վերցնում, առանց կըտր- վիլու, մի քառ. միլիմ. վրա.	Բանի կիլո ծանրու- թյունից և կտրվում 1 քառ. մմ. վրա.
Նոր-զելանդական կտավա- տի թելերը	20	25
Ցեղիպ. պապիրուսի »	20	—
Դրացենայի • • • »	17	22
Արծաթյա լարը	11	29
Պղնձյա » • • •	12	—
Ցերկաթյա » • • •	13	41
Պողպատյա » • • •	24,6	86

Այսպիսով՝ բուսական թելերն իրանց առաձգականությամբ ուժեղ կերպով գերազանցում են մեխաղներից շատերին. իսկ ինչ վե-

բարերառմ և նրանց ամբության, ինչպես ահանում եք, նրանք մետղներից յետ չեն մոռմ: Կենդանիների վասկորի հյուսվածքի ամբությանը և բայցերի մեխանիկական հյուսվածքի ամբությանն իրար նման են: Վասկորի ամբությանը կախումն ունի այն բանից, վոր նրա բջիջների մեջ մեծ քանակությամբ միջրջիջային նյութ և կազմվում: Վերջինիս մեջ բջիջների կենդանինի նյութը յերկրորդական աեզ և բանում: բջիջների պրոտոպլաստներն իրար հետ հաղորդակցության մեջ են մտնում նեղ անցքերի միջնորդի: Բայցերի մոտ մեխանիկական հյուսվածքի բջիջների թագանթները նույնպես ուժեղ կերպով հաստանում են, իսկ ինքը-բջիջի խորշը—կարող և մինչև անդամ բոլորպիին վոչնչանալ կրավել:

Մյուս մեխանիկական հյուսվածքի—կոլենիխիմի, բջիջները կենդանի յեն: Նրանք ամբողջապես հաստացած չեն: պարունակում են իրենց մեջ պրոտոպլազմա, կորիզ և քլրոֆիլի հասավիճներ: Կոլենիխիմի հյուսվածքը կամ անմիջապես եղիղերմիսի առակ և կազմվում, կամ նրա մոտ Յերր աճում և բռնյափ այն մասը, վորը պարունակում և իր մեջ կոլենիխիմի, այն ժամանակ բազմանում են և կոլենիխիմի բջիջները: Կոլենիխիմը, իր մեխանիկական հասկությունների աեսակետից, զանազանվում և սքլերենիխիմից նրանով, վոր հեշտությամբ ձգվում, յերկարանում և, նույնիսկ յերր չնշին ուժով նրա վրա ազդենք: Այս հատկությունը դցում և նրա մեխանիկական վորակը, բայց նրանով և լավ, վոր հասարավորություն և առաջ մատաղ բռնյախին առանց արգելքների բռնանել Այդ պատճառով, կոլենիխիմը համեմատում են մատաղ կենդանու կրծուկի հետ, վորը նրա աճման ժամանակ կազմում և նրա նախնական կմախքը: Կոլենիխիմի բջիջները հաստացած են լինում կամ անկյուններում կամ թաղանթի ամբողջ յերկարությամբ: Կոլենիխիմի հաստ մասերը ջրի մեջ ուժեղ կարպով ուռչում են և հայտնաբերում են, վոր իրանք կազմված են նեղ ջերտերից: Մյուս հյուսվածքները մանրաղննին կքննենք հետեւյալ գլուխաներում:

XII. ԲՈՒՀԱԻ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԱՆԱՌՈՒՄԻԱՆ

Բույսի որդաններն են տերեր, ցողունը, արմատը և ծաղկը: Մոր-
ֆոլոգիական աեսակետից միայն տերեր, ցողունը և արմատը բռն-

մի որդաններն են ներկայացնում, իսկ ծաղիկն իր բոլոր մասերով, այսինքն՝ ըաժմակով, պասկով, առեջով և վարսանդով ժիայն փոխակերպված, կամ, ինչպես ըիոլոգիայի մեջ առում են, մետամորֆոզի յենթարկված տերեններ են Վարասանդից առաջ յեկող պառակն ել նույնպես փոխակերպված տերեններից և կազմված։ Բայց այդ մետամորֆոզն այնքան ուժեղ և ազդել ծաղկի և պտղի մասների վրա, վոր նրանց անատոմիկական կազմվածքը պետք և առանձին ուսումնասիրել չրավականանալով միայն տերենի անատոմիայով։ Վերոհիշյալ որդանների անատոմիկական կազմության հետ ծանոթանալու ժամանակ մենք պետք եմիշտ աչքի առաջ ունենանք այն ֆունկցիաները, վոր տվյալ որդանը կատարում է. այդ անհրաժեշտ և, վորովհետև որդանի ֆունկցիայի և նրա անատոմիկական կազմության մեջ հայտնի կապ կա. Նրանք իրար համապատասխանում են, իր զարգացման ընթացքում բույսը, հարումարդիքի իր ֆունկցիաներին և դրանց հաջող կատարելու համար միջավայրի զանազան պայմաններին, նրա որդաններում հանդես են գույս, առաջանում են զանազան հարմարանքներ։ Զննելով մի գորևե որդանի անատոմիկական կազմը, մենք պետք և այդ որդանի սարուկտուբայի մեջ վորոնենք այն հյուսվածքները, վորոնեք կատարում են այդ որդանի ֆունկցիաները։ Ծանոթանալով այն գոլոր հյուսվածքներին, վորոնք մենք կգտնենք որդանի մեջ, պետք և աշխատենք պարզել՝ ինչի՞ յէ ծառայում տվյալ հյուսվածքը, նույնիսկ տվյալ բջիջը, յիթե նա առանձին և կազմվել ըույսի մեջ մյուս բջիջների կողքին (այսպես կոչված իդիոբլաստը)։

XIII. ՏԵՐԵՎԻ ԱՆԱՏՈՄԻԱՆ

Տերեվը կլանում և արեի լույսը և նրա ոգնությամբ կատարում և ասիմիլացիա, պատրաստում և շաքար, ուլա և ուրիշ որդանական նյութերի Նա գոլորշիացնում և հողից ծծված ջուրը և մշակման յենթարկում նրա հետ յեկած հանքային աղերը։ Ահա տերեվի ֆունկցիաները։

Զարգացման ընթացքում այդ ֆունկցիաներին հարմարվելով՝ տերենները ձեռք են բերել տարածության մեջ, լույսի տակ հայտնի ձևով ցողունի և նրա ճյուղերի վրա դասավորվելու հարմարություն, լույսը և ողի մեջ յեղած CO_2 -ը լավ և շատ կլանելու

համար մեծ մտկարգակի Բայց վորքան մեծանում և տերեկի մակարդակը, այնքան ել ավելանում և ջրի զոլորշխացումը, վորքի բրինձն մահացաւ աղգեցաթյան և զործում բռնյափ վրա այս հանդամանքին մենք անդրսպառնալու յինք Փիդիսլոգիայի կուրուդրելիս:


Տերեների յուրահատուկ կազմությունը յերեան և գալիսմի քանի պարզ առաջնախառների մոտ Սակայն իսկական տերեներ, յեթի պարզ բռնյակերից անցնենք գեղի բարդերը, առաջին անգամ կդանենք տերեավոր մամուռների մոտ:

Տերեներն առաջ են գալիս բարրոջում՝ մերիստեմի ուսումնակերից: Նրանք աճենալով հասնաւմ են իրանց կտառարյալ մեծության և ձեխն, վորից հետո նրանց կառուցվածքն այլևս փոփոխության չի յենթարկված՝ նրանք չեն հասնաւնում, նրանց մեջ նոր հյուսվածքներ, յեղած հյուսվածքների նոր մասեր, ելեմենտներ, չեն առաջ գալիս, վորովէնեակ կամբիում չունեն: Աւրեմն տերեի հյուսվածքները, առաջանալով մերիստեմայի բջիջներից, վերջնական են: այնուհետեւ նրանք մնում են անփոփոխ մինչև տերեի թափակելը:

Յեթե ծառի տերե ենք վերցնում՝ նրա կազմվածքն ուսումնասիրելու համար, հարկավոր և նրա սալարթի լավ լուսավորված մասից վերցնել այդ տերեր: այն ժամանակ մենք կունենանք մի տերե, վորը ցույց կտա մեզ տերեին հատուկ նորմալ անատոմիկական կազմվածք:

Տերեը հետազոտելու համար պետք և նրա թիթեղը կտրենք ըստ լայնության: Նա կազմված և միջին կանաչ մասից և յերկու անգույն մաշկի շերտերից, վորոնք գտնվում են տերեի վերքի և տակի յերեսի վրա: Կարվածքի շատ տեղերում մենք կտեսնենք առանձին կլոր կազմվածքներ, վորոնք տերեի ջղերն են: Տերեի ամբողջ ներքին փափուկ մասը, վորը համապատասխանում և ցողունի կեղեկին, կամ տերեի նիմնական հյուսվածքը՝ կազմված և պարենխիմային հյուսվածքից: Տերեի մեջտեղի կանաչ մասը, վորը կոչվում և մեզօնիլ, բաղկացած և յերկու մասերից, առաջին մասն այն ե, վորը դարձած և (նկ. 41) դեպի տերեի վերևի յերեսը, այս ավելի կանաչ ե, քան թե մեղոֆիլից ցածի մասը: Նրա ավելի կանաչ լինելու պատճառն այն ե, վորը մասի բջիջների մեջ քուրովիկիլ հատիկներ ավելի շատ կան-

բան թե ցածի մասում. այդ վերևի մասի գերն ե դլխավորապես արել լույսի ճառագայթներ ընդունել և կանել. ըստ վորում նա կտնվում ե այն յերեսի վրա, վորը գարձած ե գեղի արել: Մեզովիլի վերևի ավելի կանաչ մասը կազմված ե յերկար բջիջներից, վորոնք խիտ կանգնած են իրար մոտ, իրանց յերկար կողքերով միմյանց զուգահեռ. այդ բջիջները կազմում են մի ամբողջ շերտ. շատ անգամ ել յերկու շերտ, անմիջապես մեկը մյուսի վրա: Կանաչ բջիջների շերտը, վորոնց փունկցիան ե արել:



Նկար 41. *Fagus silvatica*-ի հաճարենու-աերելի կարգածքն, ըստ հաստության ըր-վերի եակիրմիսը, ըր՝ ցածի յերեսի մաշկը. թլ՝ պալիսաղային հյուսվածքը. Տր՝ սպունդանման հյուսվածքը. Ց՝ հաջաքող բջիջներ, վորոնք տանում հեռացնում են ասիմիլատոնից. ՏՌ՝ հերձանցք. ըր՝ ջղի վրա մաշկի ներս բաշված բջիջը. Կ՝ ըուուրեղ պարունակող իգիորբաստներ. Ա՝ զըուզա:

Աղջորացքած և 360 անգամ

ճառագայթները կանել և որդանական նյութեր պատրաստել, կոչվում ե պալիսաղային շերտ: (Նշանակում ե մեկը մյուսի մոտ խիտ կանգնեցրած յերկար փայտեր): Չոր, արևոտ շրջանների բույսերի տերենների մեջ պալիսաղային հյուսվածքը զարգացած է լինում և՛ վերելի, և՛ ցածի կողմից Յերկորորդ շերտը, վորը այնքան կանաչ չե, այլ ընդհակառակը, շատ ավելի բաց կանաչ դույնի յե, կազմված ե բազմանկյունի, յերրեմն կտր բջիջներից, վորոնք իրար հետ թեև իհարկե մի քիչ կազմ են, բայց ընդհանրապես միմյանցից զատկած են բավական մեծ տարածություններով, խորընքով. և այդ պատճառով մեղովիլի այս ցածի շերտը կոչվում ե սպունդանման շերտ. ուա թեև կանաչ քլորոֆիլյան հա-

առիկներ ունի, բայց սրա կատարած առիմիլացիոն շատ չնշին և
ողալիսագյին շերտի կատարածի հետ համեմտած:

Սպանդանման պարենիմում, վորը միշտ թույլ լույս է
ստանաւմ, բջիջներն այնպես են տեղափորված, վոր քորովիլի
հատիկների մեծ մասը զանամ և գեղի լույսն իր բայն կողման
թրանով թույլ լույսը կրաներու տվելի բարեհաջող պայմաններ
են ստեղծվում: Հետո նշենք, վոր այն բույսերի մոտ, վորոնք
միշտ սովորի մեջ են տպրում, քորովիլի հատիկներն ավելի
խոշոր են և ավելի մութ կրանաչ դույնի, վոր նույնպես հնարա-
վորություն և առվա ավելի լույս կլանելու

Սպանդանման շերտը զլիսագորապես ծառայում և ջրի գորը
շիացման և գաղերի փոխանակության համար, նրա մեջ զանամ
միջիջիջային տարածությունները—խորշերը, խողովակները, ծուռ
ու մոռ ճանապարհները—լցված են լինում զանապան զալերով:
Վորոնց թվում առաջին հերթին պետք և նշել ողն ընդհանրապես,
իսկ թթվածինն՝ ավելի մեծ քանակությամբ, քան թե ողի մեջ
նա կա, վորովնեան արտապրվում և տերելի միջից, ասեմիլացի-
այի ժամանակ. հետո այդպեղ բավական մեծ քանակությամբ
ածխաթթու զադ և լինում, իրեն շնչառության արդյունք, մա-
նավանդ զիշերը, վորովնեան զիշերն այդ զալը չի տարրալուծ և
և ամրողնովին դուրս և գալիս տերելի միջից, բայց այդ զալերից,
սպոնդանման շերտում լինում և ջրի գործքի, վորն անցնելով
այդ միջրջիջային տարածություններից՝ զուրս և զալիս տերելից:

Պալիսագային և սպոնդանման շերտը տերելի մեջ կազմը-
վում են ժամանակի ընթացքում, իսկ տերելի շատ մատադ հա-
սակում, յերբ տերելը նոր և դուրս յեկել բողըոջից և աճում և,
այդ շերտերը չկան, և մենք տեսնում ենք, թե ինչպես որեցոք
վերեւում կազմվում և պալիսագային, ցածում—սպոնդանման
հյուսվածքը: Յեվ ահա թե ինչպես:

Եերբ առավոտյան ժամերին գարնանային լույսի պայծառ
ճառագայթներն ընկնում են մատադ տերելի վերենի յերեսի վրա,
և պիտերմիսի տակ զտնվող կանաչ բջիջների պըտուալազման
սկսում և ուժեղ կերպով զբգովել և, հեռանալով լույսից, տեղա-
փորվում և բջիջի՝ այն պատերի վրա, վորոնք տերելի մակերեսին
ուղղահայաց են—ներսից.—այդ մասում ել ուրեմն կենտրոնացած
և լինում նրա զործունեցությունն ամբողջ որվա ընթացքում—

այդանու պրոտոպլազման իր միջից արտադրում ե ցելուլոզ, վորը
և փորձագրվում ե բջիջի թաղանթի, ուրեմն և իրա՝ բջիջի, յերկա-
րանալու համար Յերեկոյան, յերբ լույսի պատճառած գրգիռն
անցնում ե, պրոտոպլազման տեղավորվում ե ամբողջ բջիջի մեջ:
Նրա պատերի տակ Յեր այդպես ամեն որ նույն յերնույթը
կրկնվում է, վորի հետևանքը լինում ե նման ձեւի բջիջների
առաջացումը, վորոնք պալմագային չերտ են կազմում, ինչ-
քան պալմագային շերտի բջիջները խիտ կանգնած լինեն իրար
մոտ և յերկար լինեն, այդ շերտն այնքան ավելի լավ կետարի
իր ֆունկցիան, վորովինեան այդ բջիջների մեջ չի լինում վոչ մի
գատարկ տարածություն, և արենի ճառագայթները բոլորը կընկ-
նեն քլորոֆիլի հատիկների վրա, վորովինեան այդպիսով մեծա-
նում և բջիջների ներքին մակարդակը, վորի վրա ավելի մեծ
թվով քլորոֆիլի հատիկներ կարող են տեղավորվել, առանց
իրար խանդարելու Յեր արենի լույսը շատ ուժեղ, գրգոչչ չի,
քլորոֆիլի հատիկները մեծ թվով տեղավորված են լինում բջիջի
տերեկի մակերեսին գուղահեռ թաղանթների վրա և դեպի լույսը
գարձած են լինում իրանց լայն կողերով՝ լույսը լավ կլանելու
համար, իսկ յեր լույսը շատ ուժեղ և լինում և քայլալիչ աղ-
ղեցություն և ունենում քլորոֆիլի վրա, հատիկները վոչ միայն
իրանց նեղ կողերով, են դառնում դեպի լույսը, այլև տեղափոխ-
վում են մակերեսին ուղղահայաց պատերի տակ, պաշտպանվելով
լույսի ուժեղ ճառագայթներից, Յեթե արենի ճառագայթները
քլորոֆիլի հատիկներից ամբողջապես չկլանվեն, նույն բջիջի մեջ
ավելի ցածր գանձող հատիկները նրանց կելանեն, վերեւում հիշ-
վեց, վոր շատ անգամ մի շերտի փոխարեն տերենի մեջ, նրա
վերեկի յերեսի տակ, յերկու շարք պալմագային բջիջներ են լի-
նում, այդ առթիվ պետք և նկատել վոր յերկու, նույնիսկ յեր-
բեմն, ճիշտ և սակավաթիվ դեպքերում, յերեք շարք պալմա-
գային բջիջներ կազմվում են հարավային, չոր, անապատային
կամ կիսանապատային վայրերում, վորենի յերկինքը ջինջ և և
արեն ահազին քանակությամբ լույս և թափում բույսերի վրա,
դրանց ֆունկցիան նույնն ե, ինչ վոր և մի շարքի մեջ գանված
բջիջներում և մեկը մյուսի յետե տեղավորված քլորոֆիլի հա-
տիկներինը, այսինքն՝ կլանել լույսի այն մասը, վոր վերեւում
գտնված հատիկները չեն կլանել Այստեղ ել պալմագային բջիջ-

ների յերկրորդ շարքն այն նշանակությունն ունի, վոր կլանում
և առաջին շերտի չկլանած լույսը:

Պալմապային բջիջների քլորոֆիլի հաստիկների վրա կազմը—
վում են ամորֆ մասնիկներ, վորոնք սուրայի հաստիկներ են և
վորոնք ասիմիլացիայի առաջին ականակի արգյունքն են. դի-
շերն այդ սուրան զիստապազ ֆերմենտի աղղեցության առակ շաքար
դառնարով՝ հետանում և պալմապային շերտից. ուրիմն՝ պալմա-
դի մեջ անդի անի ինստենտի ֆիզիոլոգիական գործունեցություն
և նյութերի տեղափոխություն. բայց այնու եւ մենք ականում ենք,
վոր պալմապայի բջիջների թթվանթը բարակ է, վոր իր կողմից
ողում և այդ շերտում կատարված փունկցիային:

Պալմապային բջիջների առակ լինում են առանձին հավա-
նող բջիջներ, վորոնք, վերցնելով ասիմիլացիայի ժամանակ կազմը—
ված նյութերը (ասիմիլատոները), վերջիններս տանում են սպուն-
գանման հյուսվածքի բջիջներին, և հետո այդ նյութերը զնում
են եւ ավելի հեռու Հավաքող բջիջները վերեի կողմից լայն են
և շիվում են 2—3 բջիջների հետ. Պալմապային յերկար բջիջ-
ները հաճախ ուզգված են լինում շասավիզների ձեռվ դեպի ջղե-
րը,—մի հանգամանք, վոր նպաստում և ասիմիլատոների ավելի
արագընթաց եվլակուացիային:

Սպունգանման շերտը նույնողես, ինչպիս և պալմապային
շերտը, ուզրում, տերեի մատաղ հասակում, այդ կազմությունը
չունի, այլ կազմված և հասարակ, միատեսակ, մեծ մասամբ քա-
ռանկյունի, բջիջներից, վորոնք խիտ նատած են իրար մոտ
առանց վորեւ միջրջիջային տարածությունների. Յերբ տերեի
մեջ սկսվում և ասիմիլացիա, չնչառություն, ջրի ողորչիացում,
մի խոսքով՝ մի շարք պրոցեսներ, վորոնց մեջ մեծ դեր են խա-
զում զաղերը, այդ բջիջները յենթարկվում են դրսից տերեի մեջ
մանող և տերեի ներսում կազմվող զաղերի մեխանիկական աղ-
դեցությանը. Այդ գաղերը, յերբ բավականաշատ հավաքվում են,
կուտակում են իրանց մեջ բավական մեծ ուժ, վորի շնորհիվ
սկսում են հրել բջիջներին, նրանց մեջ տարածություններ և
խորշեր առաջ բերել. այդ հեղտությամբ և կատարվում, քանի
վոր զաղերը վորոշ առաձգականություն ունենաւ. Գաղերի աղղե-
ցության առակ այդ բջիջներն ամեն կողմ համահավասար չեն
առում. Գաղերն իրանց համար ճանապարհ են հարթում դեպի


այսպես կոչված հերձանցքները, վորոնք ծակոտիներ են և վորոնք գտնվում են մեծ մասամբ տերեւի տակի յերեսի վրա:

Հարերլանդար, հետազոտելով քլորոֆիլի հատիկների քանակը տերեւի վերի և տակի կողմում, այսինքն՝ պալիսաղային և սպոնդանման շերտերում գտավ, վոր 100 հատիկից 82-ը գտնվում են պալիսաղային մասում, 18-ը՝ սպոնդանման մասում. այդ մոտավորապես $\frac{1}{5}$ մասն ե. այսինքն՝ գեպի տրեւի ճառագայթները դարձած են նրանց կլանելու համար տերեւի 5 քլորոֆիլյան հատիկներից 4-ը, իսկ 5 հատիկից մեկը գտնվում է սպոնդանման շերտում: Այդ հետազոտության համար Հարերլանդարը վերցրել էր տիզկանը ¹⁾: Ապա հարց ե բարձրանում, թե ինչու քլորոֆիլյան հատիկների բուրու 100 $^{\circ}$ ել զետեղված չեն վերի շերտում, այլ 20 $^{\circ}$ ը գտնվում է տերեւի տակի յերեսի վրա: Դրա նշանակությունը, իմ կարծիքով, այն ե, վոր սպոնդանման շերտի բջիջների քլորոֆիլի հատիկները կարող են կլանել այն լույսը, վորը չի կլանվել պալիսաղային շերտի բջիջների քլորոփիլյան հատիկների կողմից, և յերկրորդ՝ այն, վոր ցածի շերտի կանաչը կարող է կլանել այն լույսը, վորն ընկներով հողի վրա, թեև մասամբ կլանվում է, բայց մասամբ ել անդրադառնում է: Այդ անդրադառնում լույսը վոչ մի կերպ չի կարող կլանվել տերեւի վերի կողմի կանաչով. նա կլանվում է, թեկուղ և թույլ կերպով, տերեւի տակի յերեսի կանաչով. այլապես նա բոլորովին պիտի կորչեր բույսի համար:

Ինչպես կարելի յի տեսնել 41-րդ նկարի վրա, տերեւի վերի և տակի յերեսները պատած են մաօկի մի շարք բջիջներով: Իր ծագման կողմից մաշկը կամ եպիդերմիսն աճման կոնի փոփոխված դիրմագինն ե, այսինքն՝ կոնի բջիջների արտաքին շերտը: Վերի յերեսի մաշկը շատ ավելի անելիք ունի, քան թե ցածի յերեսի մաշկը. սկզբում ասացինք, վոր յերկուսն ել համահավասար մեծ, անփոխարինելի գեր են կատարում—վիրկում են տերեւը չորանալուց, թեև տերեն ավելի տաքանում է իր վերեւի կողմից, բայց, յեթե ցածի մաշկից նույնիսկ փոքրիկ մաս հանենք, տերեն ամբողջովին կչորանա. ուրեմն՝ առելով, վոր վերի մաշկը շատ ավելի անելիք ունի, յես ամենելին չեմ ուզում նսեմացնել տերեւի

1) Արհածաղիկ մեջ՝ Հատիկից 1-ը:

տաշկի մաշկի կարենը նշանակաթյունը. Տեսնենք առաջ զիրք յերեսի մաշկաշերտի կազմաթյունը:



Նկար 42. Կաղմառ անքի
կաղմառից անք

Մաշկի բջիջները մեծ մասամբ քառանիյանի յեն, կամ թե զրսի կողմից թաղանթը քիչ թե շատ կոր և լինում (Նկ. 42): Այս բջիջները գտավորված են իրար մասն առանց վորեա միջրջիջային տարածություն, և այդ շատ հասկանալի յէ, վորովհանեա այզպիսակ ջրի գոլորշիացումը խիստ նվազում է: Մաշկը կազմված և լինում բջիջների մի շարքից, մաշկը շատ հազվագիտեա ունինում և յերկու կամ բազմաթիվ շերտեր: Մաշկի բջիջներն անդույն են, կանաչ յերբեք չեն լինում, և որենպարատի վրա շատ սուր կերպով այդ աչքի յէ ընկնում, տեսնում եք կանաչ բջիջներ, վորոնք վերեի կողմից ծածկված են մաշկի անդույն բջիջներով: Մաշկի բջիջները կենդանի յեն, բայց ուրիշ բջիջների հետ համեմատն նրանց պրոտառլազման քիչ ե, ընդհակառակը, մաշկի բջիջների մեջ՝ մեծ քանակությամբ առաջ և դալիս բջջանյութ, այն ել շատ ջրային: Այս վերջին հանգամանքն ունի բիոլոգիական մեծ նշանակություն: Չուրն այս բջիջների մեջ կլանում և արել ջերմության ճառագայթները, ուրին ծառայում և իրեն երան և այս ովտով պաշտպանում են տերեր, նրա մեղոֆիլն ուժեղ տաքանաւոց վորն ամառվա շովերին կարող եք անբեր համար կորսատեր լինել թէ հայտիրմիսն ինչքան լավ և պաշտպանում բույսը չորանալուց, այդ ցույց և տալիս հետեւալ փորձը, վոր կատարված և Aloe vulgaris սուկուլենտ բույսի վրա: Զվարաված բույսի մի քառակուսի գեցիմետրը 24 ժամվա ընթացքում գոլորշիացը ել է 1,603 զրամ՝ ջուր, իսկ նույնովիս տերեն նույն մեծության մակերեսութից, վորի վրայից և պիտիրմիսն պոկված եր, 24 ժամվա մեջ գոլորշիացել և 25,018 զրամ ջուր: Այս 15 անդամ ավելի յէ անում: Երգած խնձորը 24 ժամվա մեջ գոլորշիացը է 1,80 զրամ ջուր, իսկ կլեալով խնձորը՝ միայն 0,120 զրամ, այսինքն՝ 15 անդամ պակաս: Իմ վորձերով 12 անդամ պակաս ստացվեց: Վոր մաշկի բջիջները կենդանի յեն, այս բանում, — առանց մանրագիտակով քննելու, յերբ յերեսում և նրանց պրոտառլազման, —

կարող ենք համոզվել նրանով, վոր յերբ գարնանը տերեւն աճում է, նրա ամրող մակերևույթը ծածկված է լինում մաշկով, դրա համար անհրաժեշտ է, վոր մաշկի բջիջները բազմանան և աճեն, ուրեմն նրանք բաժանվում են և աճում, իսկ այս նշանակում է, թե նրանք կենացանի յնն: Մաշկը դրախ կողմից ծածկված է լինում ճարպանյութի մի ամբողջական բարակ չերտով, վորը կաւ-սիկուլա յի կոչվում, այդ շերտը բջիջների պրատոպաղմայի ար-տադրությունն է, լիցանային բնավորություն ունի, պաշտպա-նում և մաշկն արտաքին անբարենպաստ պայմաններից, Այս նյութը, վորից նա կազմված է, կոչվում և կուտին, թաղանթի կուտինով ծածկվելու կոչվում և թաղանթի կուտինիցացիա: Կու-տիկուլան բավ ներկվում և նարնջագույն-կարմիր գույնի սու-դան կոչված ներկով, վորը կանվում և ճարպանյութերի կողմից: Կուտիկուլան տերեւնի համար շատ լավ պաշտպանողական միջոց է, նա մինչև անդամ չի լուծվում նույնիսկ թունդ ծծմբաթթվի մեջ, նա շատ դիմացկուն նյութ և և յերեխ այդ պատճառով դի-մանում և միկրոսիլանիդների, բակտերիաների և սունկերի գեմ: Կուտիկուլայի միջով չի կարող անցնել ջուրը, վոչ իբրև հեղուկ, վոչ ել իբրև գոլորշի: Մինչդեռ մաշկի բջիջները կանոնավոր քա-ռանկյունի ձև ունեն, կուտիկուլան ներկայացնում և մի ուղիղ շերտ, իսկ յեթե մաշկի բջիջները դրախ կողմից կլոր են, այն ժամանակ կուտիկուլան ընդունում և ալիքավոր ձև, վորովհետև ընդհուպ կմած և լինում մաշկի բոլոր բջիջների, և՛ բարձր, և՛ խոր մասերին կուտիկուլան մաշկի բջիջների դրախ թաղանթի վրայից իջնում և այդ բջիջների կողքի թաղանթների վրայով եւ բայց այստեղ նա ավելի բարակ է, և ինչքան գեղի խորը, այն-քան նա ավելի բարակում և ինչքան հաստ և լինում տերեւնի եպիդերմիսը, այնքան թույլ լույս և ստանում բուկը: Տերեսի մաշկի թաղանթն ավելի յե հաստացած, քան թե պալիսադի բջիջների թաղանթը:


Ինչ վերաբերում ետերեկի տակի յերեսի մաշկին, նա վերի յե-րեսի մաշկից զանազանվում և և ահա՝ թե ինչով: Ծածի մասի բջիջ-ներն ավելի լայն են և տափակ՝ վերի մաշկի բջիջների հետ համեմա-տած, նրանց արտաքին պատը բարակ և և կուտիկուլայով ծածկված չի լինում, վորովհետև, գտնվելով միշտ ստվերի մեջ և ստանալով միայն հողից անդրադարձած ջերմության ճառագայթները, այն-

քան մեծ գեր չունի ներսի բջիջները շողից պաշտպանելու հարցում, ինչպես վերին մաշկը:

Գանգաղ զարգացող տերեների մաշկի բջիջներն ըստ յերկայ-նության և լայնության մոռավորապես միաշափ են. զրանք տիպիկ պարենիսիմ են: Իսկ այն տերեներում, վորոնք դլխավո-րապես ըստ յերկայնության են արագ զարգանում, մաշկի բջիջ-ներն ել քիչ թե շատ յերկար են տերեների յերկայնության ուղղությամբ և սահանում են պրովինչիմի բնույթի: Զբային բույ-սերի եղիդերմիսը կամ վատ և զարգացած, կամ բոլորովին չի կազմվում: Եղիդերմիսը պետք է հայտնի ամրություն ունենա-դիմագրության համար,—քամին առնում բերում և տերեները, ծառում և ծռում և նրանց, տերեների վրա շատ անգամ մեծ ուժով տնձրեն և տեղումն Հացարայների մաշկի մեջ բջիջներն ալիքի ձև ունեն, մինչև խակ առամմավոր ձև են սահանում: Զգողության գեղքում այդ լավ պահպանում և մաշկը կտրատվելուց, պատրա-վելուց Հիշեցեք, վոր մարզու գանդի վասկրներն ել իրար հետ շատ ուժեղ ամրացած են այդպիսի առամմավոր, գուրս ցցված ծայրերով: Տերերի վերի մտկերեսում կազմվում և տիպիկ լուսա-վոր տեղերի բույսերի եղիդերմիս, խակ նրա տակի յերեսի վրա եղիդերմիսի պատերը ծռում-մռու են, ծալքերով, վորոնք հատուել են սովորու տեղերի բույսերին:

Տակի յերեսի մաշկը, ինչպես առվեց, բազմաթիվ ծակութե-ներ ունի, վորոնք ներձանցեն են կոչվում և վորոնք զաղերի փոխանակության առարիգում առաջնակարգ գեր են խաղում: Այդ հերձանցքերը ճեղքեր ունեն, վորոնց միջից զաղերը ներս են մտնում տերեսի մեջ և գուրս գալիս տերեկից: Բացի զբանից, զբանք ջրի գոլորշու յելքի ճանապարհն են: Այդ հերձանցքներին ծանոթանալու համար պետք է տերեսի ցածի յերեսից մի քիչ նըա մաշկից պոկենք, այն ժամանակ մաշկի բջիջների մեջտեղերում կտնենենք հերձանցքերը, (նկար 43): Հերձանցքը կազմված է յերկու կիսալումնի, կամ լորու, յերկուկամունքի, կամ մանզաղի ձև ունեցող բջիջներից, վորոնք գասավորված են իրար, մոտ և իրար են դարձված իրանց գուգավոր կողմերով, Այդ յերկու բջիջները կոչվում են օրջալիակսող բջիջներ: Նրանց անառութիւնական կազ-մության մեջ մի մեծ առանձնահատկություն կա: Այդ այն է, վոր նրանց մեջ կան քլորոփիլան հատիկներ, այն ինչ հերձանց-


քեն շուրջը գտնվող բջիջները և մաշկի մյուս բոլոր բջիջներն անդույն են Ռւբեմ հերձանցքի շրջափակող բջիջներն ընդունակ են ասիմիլացիայի Այս հանդամանքն այժմ նշենք, իսկ հետագայում, յերբ տեսնելու վիճանք հերձանցքի մեխանիզմը, նրա



Նկար 43. A—շուրջանի տերեկի ցածի յերեսի եպիդերմիսը. B—նույնը՝ դրանուկի. C—եպիդերմիսի բջիջ, ՏՊ—հերձանցքի շրջափակող էկտուլուսնաձեռջիջները:

կարեսը նշանակությունը կպարզվի: Հերձանցքի շրջափակող բջիջների կազմության մի ուրիշ մեծ առանձնահատկություննել այն ե, վոր նրանց յերկու յերկար կողմերի թաղանթի հաստությունը միևնույնը չե. այն կողմի վրա, վորով շրջափակող բջիջը դարձած և մյուս շրջափակող բջիջին, թաղանթը շատ հաստ ե, իսկ հակառակ կողմի թաղանթը, վորով նա դարձած և մաշկի մյուս հարեւան բջիջին, շատ բարակ ե (Նկար 44): Երջափակող բջիջների մեջ կա պրոտոպլազմա, կորիզ և բջջահյութ: Այդ բջիջները, նորմալ պայմաններում, ցերեկը, չնորիկվ իրանց մեջ դտնված քլորոֆիլի հատիկների, կատարում են ասիմիլացիա,— կազմում են զաքար, վորը, լուծվելով նրանց բջջահյութի մեջ, առաջ ե բերում նրանց մեջ ոսմոտիկ ուժի բարձրացում. դրա հետևանքով շրջափակող բջիջներն սկսում են մաշկի հարեւան

բջիջներից ջուր ծծել գորտինեան մաշկի բջիջները անդույն են, քրսորդիլի հատիկներ չանեն, շարար կաղմել չեն կորով, և նրանց սոմաթիկ ուժը փոքր է, նրանց բջջանյութից ջուրն անցնում է շրջափափակ բջիջների բջջանյութին Յերբ այդ պատճառով շրջափափակ բջիջներն առաջան են, նրանք չեն կորով համահավասար



Նկար. 44. Amagyl
llis բայրի հեր-
ձանցքները փակ
երաց գրաւթյամբ
(Համ Շվենդեն-
սի).

Եայօինքն յետ քաշված պատը դալիս և իր առաջ-
վա տեղը, արձակում և նաև ասջեխ պատը, զրա-
պատճառն այն և, վոր ցերեկը կաղմիող շաքարը
դիշերը հետանում և շրջափափակ բջիջների մի-
ջից, նրանց մեջ սոմաթիկ ուժն իջնում և, շրջա-
փափակ բջիջները, շաքարի լուծույթ չւնենալով,


այլևս չեն կարով ջուր ծծել մաշկի հարեան բջիջներից և փակ են
միում մինչեւ արեի ծագելը. իսկ արեածագից քիչ հետո սկսում
են բացվել Գիշեր ժամանակ հարկ չկա, վոր հերձանցքերը բաց
վինեն, փորովնեան ասիմիլացիան խափարի մեջ չի կատարվում:

Նկար 45-ի վրա տեսնում ենք հերձանցքն՝ ըստ հաստու-
թյան կտրած: Հերձանցքն ունի արտաքին որապարակ¹⁾ (ա), և ներ-
քին ներապարակ (բ). բարակ գծերով ցույց ե արված հերձանցքը՝
փակված ժամանակ, հաստ և սև գծերով՝ բացված ժամանակը:

Հերձանցքերի թիվը մոտավորապես պետք և հաշվել մի բա-
ռակուուի միլիլիստրի վրա 300—400 հատ, նրանք, ուրեմն, շատ
մանր են, մանավանդ պետք և աչքի առաջ ունենալ վոր յերկու
հարեան հերձանցքերի մեջ ընկած են լինում մաշկի 7—8 բջիջ:
Հերձանցքերն ընդհանրապես գտնվում են տերեւի տակի յերեսի
վրա: Թեև, ճիշտ և, պետք և ասել, վոր կան բույսեր, վորոնք
տերեների վերի յերեսի վրա յել հերձանցքեր ունեն, բայց այդ
գեղքում նրանց թիվն ավելի քիչ և լինում, քան տակի յերեսի
վրա: Զրային բույսերի մոտ, յեթե տերեւ լողում և ջրի յերե-

1) Կամ կամերա:

ոլն, հերձանցքերը բուլը կազմվում են չվերի յերեսի վրա, վորովնեռնե այլանես տերեի տակի յերեսում, ջրի մեջ, հերձանցքերը չեցին կարող իրանց ֆունկցիան կատարել. նրանք չեն փակվում, վորովնեռնե ջրով միշտ ապահովված են, որինակ, հարսնամատի՝ *Nymphaea alba*-ի հերձանցքերը կան ըույսեր, յորոնք առաջատար հերձանցքեր են կազմում, որինակ՝ ձիթենու տերելը



Հեկտ. 5. *Helleborus* բույսի հերձանցքը: Հաստ դժերով ցույց և տրված հերձանցքը լայց գրությամբ, իսկ բարակ դժերով—փակ գրությամբ: Ա—արտաքին հրապարակի սկզբը, բ—ներքին հրապարակի, մ—վորովդաշտը, օ—թիւնությամբ, շ—հարկան բջիջի հոդակապը (շաբներ), Ռւժեղ խոշորացումով:

մի քառակուսի միլիմետրի վրա ունի 625 հերձանցք, բողկը—716: Հերձանցքերի ամենամեծ քանակը տերեների վրա նկատված և *Filipendula ulmaria* (ասպիրակ) բույսի մոտ. այստեղ 1 քառակուսի միլիմետրի վրա 1293 հերձանցք և հաշվված: Եպիդերմիսն այնպես է հերձանցքերով ծածկված, կարծես մաղ լինի:

Կաղնու տերեների ցածի մակերեսի եպիդերմիսի վրա գտել են հերձանցքեր հետևյալ քանակներով՝

4 մետր բարձրության վրա, 1 քառ. միլիմետրի վրա 313 հատ.

10	»	»	»	»	»	»	374	»
16	»	»	»	»	»	»	423	»

Այդպիսով բույսերի հերձանցքների քանակը կարելի յերաք հետ համեմատել այն ժամանակ, յերբ տերեները վերցված են միենույն բարձրության վրա: Այդպիս և ասում պրոֆ. Լ. Իվանովը: Իսկ յեթե զանազան ծառեր ի բնե զանազան բարձրու-

թյան ունեն, կարելի՞ յե արդյոք միենաւյն բարձրությունից վերցված տերեներն իրաք համահավասար համարել՝ շրջապատող փակառըների աղքեցաթյան և հերձանցքերի կազմության տեսակինուից Վոչ, այդ սխալ կլիները Յուրաքանչյուր ծառ մենք պիտի և նրա բարձրության ուղղաթյամբ յերեք հարկի բաժան-նենք—ցածի, միջին և վերեի, և այդ աեղքեցից վերցված զանագան ծառերի տերեների հերձանցքերն իրաք հեա համեմատենք:

Ինչ վերաբերում և ներձանցին նեղի մեծության, նա բաց ժամանակ ունենում և 5 տասը հազարերորդական քառակուսի միլիոներից մինչև 1 հարյուր հազարերորդական միլիոները, ոյ-սինքն՝ աներեակայելի չափով փոքր և Նրանց մեծությունը տարրեր բույսերի մոտ առարել և Այսպէս՝ *Agapanthus genevensis* բույսի տերեի հերձանցքի բաց ճեղքվածքի մեծությունն է 0,0000470 քառ. միլիոները, իսկ Այսա *genevensis* բույսինը՝ միայն 0,0000137 քառ. միլիոներ—մոտ 40 անգամ առաջինից փոքր:


Չոր աեղքերի բույսերի հերձանցքները քիչ են և թագնված հելլնում տասնամյին փասերի մեջ, վորի պատճառավ քիչ չուր են զոլոր-շիացնում: Քսերոֆիլաներն ունեն միայն 10—20 հերձանցք մի քառակուսի միլիոների վրա, սրբնակ՝ *Sedum-p.*, *Sempervivum-p.*, Խշակաթնուկի մի տեսակի, այն և՝ *Euphorbia tirucallii*-ի տերեի հերձանցքերի շուրջը կազմվում և շրջանակածե ոձիք վորի մեջ ուրեմն ողն անշարժ և մնում, և այդպիսապ ջրի գուլուցիացումը թուլանում և Ամբողջովին ջրի մեջ ընկզմված տերեներն ընդհանրապես հերձանցք չեն ունենում: Նայելով տե-րեի կազմության, կարելի յե ասել թե ինչպիսի տեղում և աճում բույսը: *Մերկասերմ* բույսերի ասեղնածե տերեների յերկարությամբ գնում են ակոսանման փոսիկներ, վորոնց մեջ զանվում են հերձանցքերը: Այդ փոսերը ձմեռնամուտին լցվում են մանր հատիկավոր մոմանման խցաններով, վորով գժվարանում և ողի փոփոխումը, հետևապես՝ ջրի արագ գոլորշիացումը:

Միաշաքիլ բույսերի եպիգերմիսի բջիջները քառանկյունի յեն, ուղիղ կողքերով և գասավորված են իրանց ափելի յերկար կողքերով միմյանց զուգահեռ (նկ. 46): Նրանց հերձանցքերն ել դասավորված են իրար զուգահեռ: Հերձանցքերի յերկար առանցքը զուգահեռ և եպիգերմիսի բջիջների յերկար առանցքին: Ցերկ-շաքիլ բույսերի եպիգերմիսի բջիջները, (նկ. 43, В) ընդհակա-ռակը, անկյունավոր յերեք չեն լինում, նրանց կողքերը ծալ-

քեր են տալիս. այդ պատճառով մի բջիջի ցցված մասերը մըտ-
նում են հարևան բջիջի ավելի խորը մասերի մեջ և ուրեմն
յերկշաքիլավոր բույսերի եպիզերմիսը մեխանիկական տեսակե-
տից ավելի ամուր և կառուցված քան թե միաշաքիլ բույսերի
եպիզերմիսը. այստեղից յեզրակացնում ենք,
վոր յերկշաքիլն եպիզերմիսի ավելի կատա-
րելագործված կազմվածք ունի. յերկշաքիլի
հերձանցքերը միմիանց զուգահեռ չեն, այլ
ամեն ուղղությամբ են զասավորված:

Շատ խոնավ անտառներում տերևների
հերձանցքերը կազմվում են առանձին պատ-
վանդանների վրա, մաշկի մակերեսույթից
բարձր, և այդպիսով ավելի հեշտ շիման
մեջ են լինում ողի հոսանքի հետ:

Տերևն, ուրեմն, մաշկով ինքն իրան
պաշտպանում և արտաքին աշխարհի վատ
պայմանների աղղեցությունից, իսկ հեր-
ձանցքերով կազ և հաստատում իր և ար-
տաքին մթնոլորտի հետ. Յերբ ջրի սղության
պատճառով տերևնին վտանգ և սպառնում,
այդ հանգամանքը մեխանիկորեն փակում նկար 46. Միաշաքիլ
և հերձանցքերը, ինչպես տեսանք, և այդ-
ուղարկով տերևը փրկվում է չորանալուց. սա-
կայն այդ յերեւոյթը, բացի իր շատ լավ
կողմից, ունի նաև իր վատ կողմը, չերձանցքերի փակվելը տերևի
համար անվիսաս չի անցնում. յերբ հերձանցքերը փակ են, պարզ են,
վոր կանգ և առնում ամեն մի գաղային փոխանակություն, իսկ
գաղերը, ինչպես ողի թթվածինը, ածխաթթուն և ջրի գոլորշին,
պետք և անց ուղարձ անեն բույսի և արտաքին մթնոլորտի մեջ. Յերբ
ուղում ենք իմանալ՝ արդյոք հերձանցքերը բաց են և նրանց մի-
ջց ջուր գոլորշիանմաւ և թե վոչ, քլորական կոբալտով ներծծված
թուղթ ենք գործածում. թաւղթը դնում ենք տերևի ցածի մակերեսի
վրա. Ջուր գոլորշիանալու գեպօւմ կոբալտի թուղթը, վորը չոր
վիճակում կապույտ ե, ջրի գոլորշիներից կարմրում ե, ցույց տալով,
վոր հերձանցքերը բաց են. Այդ փորձի համար շատ հարմար են
կաղամախը, տանձենին, բեգոնիան այն պատճառով, վոր այդ




բայց ակրի միայն ստորին յերեսի վրա հերձանցքեր կանու եմ բազմաթիվ դիտապաթյաններից, վար յևս կտառքել եմ 1918թ. ամսոր, Դոնի շրջակայրում, գաղատյին բռուժների վրա, հերձանցքերն ավելի բացված են լինում առավատայն, առեւ յեզանակին, մանավանդ անձրեից հետո Յերը հերձանցքերը փակ են, չնչառության համար անճրածեցա թթվածինը ներս չի մանում, այդ որոցին այսպիսի հանդամանքներում կատարվում է թույլ կերտով՝ ի հաշիվ այն թթվածնի, վորն արտազրվում է քլրորդիվի համակիների կողմից ասիմիլացիայի ժամանակ, այդպիսի չնչառությանը անում և վոչ շատ յերկար ժամանուի, վորովնետե հերձանցքերի փակվելով խափանվում է նաև CO₂-ի մուտքը ակրեի մեջ և ինքը փասում նիթինը ել և ընդհանավում է Յեթի չնչառությանը խանդարվում է վատ և կատարվում է եներդիտայի տրձակումը, այդ պատճառով դանողազ և զնումը բռոյսի մեջ նրա շինարար աշխատանքը Աւրեմն յերը չչորանալու համար բռոյը փակում է իր հերձանցքերը, նաև օճարավից խուսափելու համար, ինչպես անում և Տիմիրյազեվը, Շիրան մատնում և սովոր, սրա վրա ավելացնենք ու շինարարական ֆրոնտում ճեղքվածք և սաւացվումք:

Մերկասիրը բռոյսի ասեղնածեւ տերեները լավ պաշտպանված են՝ չուրը չգոլորշիացնելու խմասառվ, վորովնետե, ինչպես պրոֆ. Գորդիազինը ցույց տվեց, մերկասիրը բռոյսերը ձմեռն ել շատ ջուր են գոլորշիացնում, ¹⁾ քանի վոր նրանց տերեներն այդ ժամանակ ել են մնում նրանց վրա:

Շատ անգամ տեսքի վերի մաշկը ծանկված է լինում մոմի շերսով, այդ առաջ ե գալիս զլիավորապես այն բռոյսերի մոտ, վորոնք ապրում են չոր, բայց վոչ ամբողջովին անապատային յերկրներում. այդպիսի բռոյսեր չատ են հարավային Յերապայում և հյուսիսային Աֆրիկայում, մի խոսքով՝ Միջերկրական ծովի ջուրջը. զրանք շատ անգամ կաշենման տերեներ ունեն, ինչպես Մազնովիան, Արբուտուսը և այլն, և մշտադաշտ են, այդպիսի բռուսականությունը կոչվում է մաքվիս: Իրը եռինակ այնպիսի բռոյսի, վորի վրա կազմվում է մոմի շատ հաստ շերտ, կարելի յե մեջ բերել Klopstockia cerifera արմավենին: Տեսակի անունը

1) Այս առթիվ հիշենք, թե ինչպես զուտ չորանում և ձմեռը լվացած և բռուսը ցըակն կամ աված սպիտակեղենը:

Նշանակում եմումարերի Դրա մոմի շերտի հաստությունը համառում
 և 0,66 միլիմետրի և միքանի անգամ ավելի հաստ եւ համեմա-
 տած եղիկերմիսի բջիջնարի բարձրության հետ (նկ. 47): Մոմի
 շերտի մեջ նկատվում են նեղ և յերկար անցքեր, վորոնք հաղոր-
 դակցության մեջ են զնում հեր-
 ձանցքերը չըջապատող մթնոլոր-
 տի հետ Պարզ յերեսում են մոմի
 շերտի խափերը: *Salix*-ը (ուռե-
 սին) ծածկվում ե մոմով, վոր
 մթնունները սայթաքեն մոմի
 շերտի վրա և չգողանան նեկտա-
 րը: Մոմի շերտը նվազեցնում ե
 ջրի գոլորշիացումը, մի հանգա-
 մանք, վոր կարևոր ե, վորովհե-
 տեւ այն յերկրներում, վորտեղ
 կան մոմով ծածկված շատ բույ-
 սեր, յերկար ժամանակ անձրև
 չի գալիս և յերաշտ ե տիրում.
 յերկրորդ՝ մոմի շերտը, փայլուն
 հայելու նման, անդրադարձնում
 է արևի ճառագայթների մի մասը.
 այս ել մեծ նշանակություն ունի,
 վորովհետեւ կլիմայի չորության
 պատճառով հերձանցքերը հա-
 ճախ փակ են լինում, ուրեմն ա-
 սիմիլացիան թուլացած ե, և յե-
 թե արևի լույսի ճառագայթները
 մեծ քանակությամբ բույսի մեջ
 մտնեն, այդ ավելորդ և վնասա-
 կար կլիմա. այդ կարող ե քրիո-
 ֆիլ նյութը գրգռել և քայլա-
 յել. իսկ շերմության ճառագայթների անդրադառնալը նույնպես
 ոգտակար ե տերևի համար, վորովհետեւ այլապես շերմության
 բարձր աստիճանը տերևից ել շատ ջուր կդոլորշիացներ և վատ
 կազդեր բջիջների պրոտոպլազմայի կենսունակության վրա: Իմ
 փորձերը ցույց են տվել, վոր յերբ տերևի վրայից հեռացնում



նկար 47. *Klostockia cetrifera* մո-
 մարեր արմավենուբնի հատվածը,
 ըստ լայնության 8'8"-հերձանցքի
 ճեղքը. W—մոմը շերտը. S8'-անցք, վորը
 տանում ե մոմի շերտի միջոկ զեզի
 հերձանցքը. Խոզորացրած և 216 անգամ:

Այս մամի շերտը, այդ տերերը ^{1/3} մասով ավելի ջուր եր քարոզականում, քան թե նույն բույսի մամով պատված տերերը հաշիվ արվում և ժամանակի միենայն առողության և տերեների միենայն մակարդակի վրա:

Տերեների թիթեղների ծայրերը շատ տոմբացված են մեխանիկական հյուսվածքով, զոր քամուց չպատճենում: Տերեր պետք է ամուր լինի, զոր ճկվելիս չկոտրվի: Տերերի մեխանիկական հյուսվածքները պահում են նրան թիթեղը լայնատարած, ինչպես հովանոցի բարակ յերկաթյան ձողերը, զորոնք հավանոցը բաց են պահում և լարված: Տերեների ջղերը միշտ փակ են, զորովճեակ արտադրական հյուսվածք, կամբիսում, չունեն և այդ պատճեառով չեն հաստանում: Տերեների զղերի գարզացումը կապ ունի արտաքին շրջապատի պայմանների հետ, ինչպես այդ ցույց տվին Զարենակին, կելլերը և ուրիշները:

Այդ կարելի յե տեսմել հետեյալ ցուցակից.

Բույսի անունը	Վորանեղից և բույսը վերցված	Ջղերի յերկարությունը նը, հաշված միլիմետր-ներով, տերերի մի քառ- սանտ. վրա
Paris quadrifolia	{ Շատ սաղիբոս և բա- վակ, խոնավ տեղից: Անտառի մեջ,	157
Actaea spicata	Շատ չոր և արեսա- տեղից:	186
Alhagi camelorum	Շատ չոր	1575
Hypericum elegans	Արոտաշատ գաշտից:	1644

Մաշկը բաղմաթիվ բուկսերի մոտ ծածկված և լինում մազկներով (նկ. 48): Մազիկները կարող են միաբջիջ լինել, բայց սակավ դեպքերում, մեծ մասամբ մազիկները մի քանի բջիջից են բաղկացած լինում: Մազիկն ունի մի հիմնական բջիջ, զորի լայնությունն ավելի յե քան թե բարձրությունը, մազիկները հիմքը, պատվանդանը, նստած և լինում մաշկի բջիջների արանքում, այդ յերկու հանգամանքն ունեն այն նշանակությունը, զոր այդպիսով մազիկն ավելի հաստատուն և լինում: Այդ հիմքի բջիջի վրա նստած և լինում մի ուրիշ, ավելի յերկար բջիջ, վորը սա-

Պայն դնպի վեր բարականում և և ընդհանուր առմամբ հատած
 կոնի ձև ունի. այդ յերկորդ բջիջի վրա հաստատված և լինում
 յերբորդ բջիջը, վորը յերկորդ բջիջի հետ համեմատած՝ ավելի
 յերկար և բարակ և նույնպես հատած կոնի ձև ունի. յերբոր-
 դի վրա նույնում և լինում չորրորդ բջիջը և այլն վերջին բջիջը
 դնալով դնովի վեր նեղա-
 նում և, ունի յեռանկյու-
 նու ձև և ամենից ավելի
 յերկարն է. Հաճախ մազիկի
 բջիջների թիթը ավելի յե-
 րինում. Մազիկի բջիջների
 արտաքին պատերն ավելի
 հասաւ են քան թե ներքին
 պատերը, վորոնցով մի
 բջիջը մյուս բջիջից անջատ-
 ված է, և այդ հասկանալի
 յի, վորովհետև արտաքին
 պատերը, յենթարկվելով
 զրոյի մթնոլորտի ազգեցու-
 թյանը, ողի չորության և
 տաքության պատճառով,
 կոշտանում և հաստանում
 են. դա մազիկին տալիս և
 վորոշ հաստատություն և
 դիմազրության ընդունա-
 կություն խաչ միջին թա-
 ղանթները թեև կրկնակի
 յն, բայց բարակ են, վո-
 րովինեաւ գտնվում են բջիջ-
 ների ներսի խոնավ մթնո-
 ւորտում և չորության ու
 տաքության այնքան յենթակա չեն. Հաբերլանդտի և ուրիշների
 փորձերը մազու տերեների ջուր գոլորշիացնելու խնդրի վերա-
 բերմամբ՝ սխալ ուղղով են ընթացել և, խակապես, յերբ արհես-
 տական կերպով կորում են մազիկները, բացվում են բանց հիմ-



Նկար 48. *Stellaria* բուրոի տերեկի մա-
 զիկը՝ 110 անգամ մեծացրած:

հասկան բջիջը, վորը խոնագ և և վորի հորիզոնական պատը բարակ և, ջուրը միշտ անցկացնում և, այս պարագաների հետեւն քով կարված մաղիկն իր զոլորդիացրած ջրի քանակով չի կարել համաստեցնել չոր հողիկերմիսի բջիջին Մաղիկի բջիջները կենդանի յեն, ունեն իրանց մեջ պրատովազմա, կորիզ, բջջաճյութ շատ անզամ նրանց պրատովազման շարժվում և նեթե մաղիկի բջիջներն իրենց մեջ բջջաճյութ են պարունակում, առաջ ինչու մաղիկների մասին այն գաղափարն և կաղմբի վոր զրանք պահպանում են տերեները ջրի ասաւ զոլորշխանալուց, փրկում են իրը թե տերել չորանալուց Այդ ասթիվ պետք և տում, վոր մաղիկի ֆունկցիայի հարցը, իմ կարծիքով, պետք և բաժանել յերկուսի Ամազին՝ յերր գարնան մաղիկներն առաջ են զալիս տերեների վրա, նրանց բջիջները լիքն են բջջաճյութով, պարզ և, վոր մաշկի մի բջիջը չի կարող այնքան ջուր զոլորշխացնել ինչքան ջուր կողորշխացնի այդ բջիջը և նրա վրա ամբացած մաղիկն իր չորս, հինգ բջիջներով, Գարնանը մաղիկի բջիջները ջուր են զոլորշխացնում և տերեները զրանից միայն շահում են, վորովհետեւ գարնանը հողի մեջ ջուր շատ և լինում, մանավանդ այն շերտում, վորաեկ տարածված են լինում արմատները, և ջուր շատ զոլորշխացներով՝ տերեն ամենի հանքային աղեր և ձեռք բերում, վորովհետեւ գետնաջրի մեջ լուծված են լինում հանքային նյութեր։ Ամառվա սկզբին կամ, ավելի շուտ, ամառվա էեսից սկսած մաշկի մաղիկներն սկսում են չորանալ, այլս ջուր չեն զոլորշխացնում և կազմելով տերեկի վրա բրդյա ծածկոցի նման մի հաստ շերտ, պահպանում են տերել ջրի չափազանց մեծ զոլորշխացնումից։ Գարնանը, յերր մաղիկի բջիջները ջուր են զոլորշխացնում, նրանք զործում են ջրհան մեքենայի սկզբունքով, վորը յերեռում և հետեյալից լեպյոշիկն բոււսարանը գտավ, վոր մաղիկի ամենավելին բջիջի բջջաճյութն ավելի մեծ ոսմոտիկ ճնշում և գործում, քան թե նրա տակ գտնվող բջիջը այս յերկը բորդը, իր հերթին, ավելի ոսմոտիկ ուժ ունի, քան թե նըրանցից ցած գտնված բջիջը, և այդպիսով, ինչքան ավելի ցած, ինչքան ավելի մոտ մաշկի բջիջներին, այնքան պակասում են նրանց բջջաճյութի ոսմոտիկ ուժը, և այդ պատճառով ջուրը ցածից բարձրանում և դեպի վեր, անընդհատ:

Եսատ կարճ միաբջիջ մաղիկներ, այսպէս կոչված՝ պայկա-

նիւր, խիտ կերպով ծածկում են շատ ծաղիկների պատճաթերթիկները, որինակ՝ մանուշակի, վորից վերջիններս թափշի փայլ և նրբություն են ձեռք ընդում:

Մի քանի բույսերի մաղիկները ճյուղավորված են լինում և կարծես մի քանի հարկանի յեն, արտաքուստ նման են, կարելի յի ասել ծառի:


Փշատի մաղիկները, վորոնց պատճառով նրա տերեկի ցածի յերեսը բոլորովին սպիտակ ե, աստղաձև են. այդ մաղիկը մեջտեղում ունի մի գլանաձև բջիջ, վորով նաև հաստավված և մաշկի բջիջների մեջ. այդ պատվանդանի վերեկի մասում, շուրջը, շառավիղ-ների ձևով նստած են բազմաթիվ (նկ. 49) յերկար բջիջներ. նրանք մեռած են, ոգով են լցված և այդ պատճառով փշատի ստորինյերեսը սպիտակ ե:

Պաշտպանող մաղերը կարող են հասնել մի քանի սանտիմետր յերկարության և այդ գեպքում շատ նման են կենդանիների բրդին, այդպես, որինակ՝ *Cer-*
halocereus senilis կակտուսը.

Կաղամախի, բարդու և ուրիշ ծառերի բողբոջների վրա դառնվող մաղիկներն արտադրում են մածուցիկ նյութ, վորը ծածկում և ամրող բողբոջը:


Բացի վերը հիշված մաղիկներից, վորոնց գերն և նպաստել բույսին յերաշախ դեմ պայքարելու, բույսերն ունենում են նաև ուրիշ փունկցիա կատարող մաղիկներ: Կան այնպիսի մաղիկներ, վորոնք եթերական յուղեր են արտադրում. կան մաղիկներ, վորոնք ծառայում են իբրև հատուկ թունավոր գենք. իսկ այն մաղիկները, վորոնք գտնվում են արմատի վրա, ջուր և հանքային աղեր են մատակարարում բուսական որգանիզմին:

Նթերական յուղեր արտադրող մաղիկները կոչվում են գեղձալին մաղիկներ, վորովհետև նրանք նույնական փունկցիա յեն կատարում, ինչպիսի փունկցիա վոր կատարում են գեղձերը:



Նկար 49. Փշատի տերեկի աստեղնաձև մաղիկը վերեկցի Խոշորացրած և 125 անդամ:

Հասարակ մազիկներից զեղձային մազիկները դանողանվում են այն բանով, վոր եթերական յուղ տրատղերը համար նրանք առանձնահատուել կազմություն տնեն (նկ. 50). Բնդիմանուր առամբը, ինչպես տեսնում եք, զեղձային մազիկները, նույն կազմությունն ունեն, ինչպես և հասարակ մազիկները բայց ծայրի վերջը բջիջը կըսր և և ավելի խոշոր քան թե մազիկի մյուս բջիջները. Ինչպես միշտ, այսուղ և զեղձային բջիջը, ուրեմն կատարի կըսր բջիջը, պարունակում է իր միջ մեծ քանակությամբ պրոտոպլազմա և մի մեծ կորիո՛ բջիջի մեջակում. այս հանգաւմանքը մի անգամ և ցույց և տուիս, վոր այնուհետ, վորտեղ կինսական գործառնություններն ինտենսիվ են կատարվում, պրոտոպլազման առաջ և վիճակ, իսկ կորիո՛ խոշոր և կինսարունական գիրք և գրավում բջիջի միջ, բուռարունները յեթերային յուղի վերաբերմամբ այն կարգի քին են, վոր այդ նյութի փոխանակույան ժամանակ կազմվող կողման համար անպեսք նյութ և և բույսը նրանից, իբրև այդպիսի նյութից, ինարկե պետք և ազատվի, Երերական յուղը կոչվում են, ինչպես արգել ասվելց, այն յուղերը, վորոնք սովորական ջերմաստիճանում ցնողում են, դոլորշիանում են և այն բույսերը, վորոնք սովորական ջերմաստիճանում յուղում են, գոլորշիանում են և այն բույսերը, վորոնք եթերային յուղեր են արձակում, հոտ ունեն—յերբեմն շատ դուրեկան, յերբեմն՝ գարշելի: Բայց հոտի այս տեսակ ընուրուցումը շատ սուրեկտիվ և և գիտական նշանակությունից գուրգիացնել եւ



Նկար 50. *Primula sinensis*. Գարնանածազկերեկների կըսր ամսական կըսրեկի կոթունի վրայի զեղձային մազիկները: Ա-ի մեջ սկսում և արտազրկի եթերային յուղը, Ե-ում արգելն կազմվել և յուղի մի բշտիկը ձկուակիուան պատավել և բշտիկը գոլորշիացնել եւ

Փիկացիայի յենթարկել իրանց քիմիական կազմության հիման վրա: Մյուս տեսակի բուսական յուղերը սովորական ջերմաստիճանում, ընդհակառակը չեն գոլորշիանում. դրա համար այդ յուղերը պետք և ավելի բարձր ջերմաստիճանի ազդեցության յենթարկել:


Յերբ գեղձային մազիկի տերեկի խոշոր կլոր բջիջի մեջ, վորը կոչվում է մազիկի զլսիկ, շատ եթերային յուղ և կուտակվում, այդ յուղն իրքի զաղ չի կարող այլև այդ բջիջի մեջ տեղափորվել և սկսում է դուրս գալ. նա անցնում և բջիջի թաղանթի միջով և պատահում է թաղանթի վրա գտնվող կուտինի շերտին, վորը մի քանի բույսեի մոտ բաց չի թողնում յուղը. մյուս բույսերի մոտ՝ յուղը կարողանում է թափանցել այդ շերտի միջով:

Ծուղի կուտակվելու դեպքում կուտինն սկսում է փքվել և յերբ շատ եթերական յուղ և կուտակվում, կուտինի շերտն այնու չի կարողանում ընդդիմանալ ներքին ճնշման և պատառվում եւ այն ժամանակ եթերային յուղը հեշտությամբ դոլորշիանում և ողի մեջ: Բջիջը կազմում է մի նոր կուտինի շերտ և գեղձային մազիկի զլսիկի թաղանթի կուտինի շերտը նորից փքվում, պատառվում եւ և նորից նորոգվում: Եթերային յուղ արտադրող գեղձային մազիկներն ունեն գլխավորապես այն կիսանապատային յերկրների բույսերը, վորտեղ ամառվա ընթացքում ցերեկը շատ շոգ և լինում, մինչև 60° , իսկ դիշերները՝ միայն 20° աստիճանի: Այսպիսի 40 աստիճանի ջերմության զանազանություն մի 10 ժամվա ընթացքում, ինարկե, կարող և վատ անդրադառնալ բույսերի պրոտոպլազմայի առողջության վրա և ահա այդ պատճառով բուսաբաններից շատերը, մանավանդ առաջ, այն կարծիքին եյին, վոր եթերային յուղերը, շրջապատելով բույսը, նրա մոտ ստեղծում են մի մթնոլորտ, վորը պահպանում ե բույսի տաքությունը, վորովհետեւ ինչպես անգլիացի Փիզիկոս Տինդալը ցույց տվեց, եթերական յուղերը ջերմության վատ հաղորդիչներ են:

Կան գեղձային մազիկներ, վորոնց արտադրած նյութերը շատ ուժեղ են. սրանք թեև չեն այրում, սակայն կազմի վրա առաջ են բերում ցան և յերկարատև ուռուցքներ՝ նման եկեմայի: Այդ բույսերի թվին և պատկանում գարնանածաղկի մի տեսակը — Primula obconica, վոր շատ անդամ մշակում են ջերմոցներում և ծախում են ծաղկի խանութներում: Գերմանիայում մի շաբաթ հիվանդության գեպեր են նկատվել, վորոնք առաջ եյին յեկել այդ բույսի գեղձային մազիկների նյութից: Սակայն ամեն մարդու վրա այդ միատեսակ չի ազդում:

Դայլուկի, վոր ժողովուրդը սխալմամբ զրոժ և կոչում, ծաղիկները միասեռ են. ուրեմն՝ նրա մեկ ծաղիկն արական ե,

մյուսը, վորը միտյն վարսանգ տնի, իդական և, այդ իդական ծաղիկի ծաղկապատճենը ծածկված և դեղձային մաղիկներով (Նկ. 51). Ալաղիկը նման և մի ցածր, բայց ուկահակի (վազայի), վորը կազմված և մի քանի բջիջներից և պատվանգանից, այդ բջիջներն արտադրում են մի մոթ շաղանակույն մածուցիկ նյութ, շատ զառն համի, վորը զայլակի անունից կոչվում է լուսուլին, վորովհետեւ զայլակը, չմելչը, լափներին կոչվում է Խոտուս Խորլուս. Այդ նյութը, յերբ շատ և արտադրվում, առաջ և հրում բջիջների վրա զանգված կուտինի շերտը, վորը և պատվում և, լուսուլինը զուրս և հոսում, Այդ լուսուլինի համար և, վոր գոյլուկի իդական ծաղիկների ծաղկապատճանը գործարանում զցում են զարեջրի մեջ, վերջինիս պատրաստելու ժամանակ, և զրանից զարեջուրը զառն համ և սահնում, այցպիսով զարեջուրը, վորի սպիրուլին քիչ և, պահպանվում և նեխումից, Գերմանիայում, վորանեղ շատ զարեջուր և պատրաստվում, զայլակի հսկայական կուլտուրաներ կան.




Նկար 51. Գայլուկի գեղձը.
Ա—մատադ գեղձը՝ արտադրումից առաջ.
Բ—կուտիկուլան բարձրացնել և արտադրված նյութի ճշման առի.

Իսկական յեղինձի վրա առաջ են զալիս պրիչ մաղիկներ, վորոնք իրանց այդ հատկությամբ շատ լավ հայտնի յեն ժողովրդի լայն մասսաներին. Ինչպես 52-րդ նկարից կարելի յետեսնել, այդ այրիչ մաղիկը նեղ և ու յերկար և մեր տեսած մաղիկներից նրանով և զանազանվում, վոր վոչ թե մի քանի բջիջներից և կազմված, այլ միայն մի բջիջից. Այդ այրիչ մաղիկը գեղղի վեր քանի գնում նեղանում և և վերեսում վերջանում և մի գնդիկով, վորը մի քիչ թեք դրություն և ընդունում մաղիկի ընդհանուր ուղղության նկատմամբ. Այրիչ մաղիկը զենք և բռյափի համար՝ նրանով սնվել ուզող խոտաճարակների գեմով. Վորպեսզի մաղիկն ավելի հեշտությամբ շփվի կենդանու դնչի հետ, նա ամրացված և մի առանձին, ընկալակի նման, հյուսվածքի մեջ և այդպիսով բավական առաջ և մդված: Ամբողջ մաղիկն ունի շատ ամուր պատ և չնայելով իր յերկարության՝ միշտ ուզիղ ցցված և դեպի դուրս և շատ առաջդական լինելով՝ ճկվե-

լու գեղագում իսկույն կուղղվի. Նրա պատերին ամբությունը ավելցը կայծաքարն է: Մազիկի մեջ պրոտոպլազման չատ ակտիվ է և հաճախ հնարավոր և լինում նրա շարժումը դիտել, իհարկե միայն միկրոսկոպով. Նու իր մեջ չատ ըջանյութ և արտադրում, վորի պատճառով ըլլիչի ոսմոտիկ ուժը բարձր և լինում: Յերբ մի փոքրեւ մարմին, դիցուք կենդանու ըլլինքը, դիտչում եւ մաղիկին, մազիկի ծայրի գնդիկը. կոտրվում եւ, վորովհետև նրա տակ, չուրջը, կայծաքարը չատ բարակ է, և այդ մասում մաղիկը շատ փխրուն է. յերբ ծայրի գնդիկը կոտրվում եւ, նրա տակի կտրված մասը շատ սուր և լինում և միշտ չատ թեք՝ մաղիկի յերկար առանցքի նկատմամբ, մի կողմը մի քիչ ավելի յերկար մյուս կողմը, ճիղ, ճիշտ այնպես ինչպես բժշկական սրսկիչը (շպրիցը). այդ սուր ծայրով մաղիկը շատ հեշտ կերպով խրվում և կենդանու լորձաթաղանթի մեջ և վորովհետև բջիջի պարունակությունը մեծ ոսմոտիկ ճընշման տակ ե զանվում, բոլոր ըջանյութը լցվում ե վերքի ծակից կենդանու մեջ. բույսը կարծես ներմաշկյա սրսկում և անում. նյութը շատ կծու յե, այրիչ. առաջ կարծում ելին, վոր ըջանյութի մեջ մեծ քանակությամբ մրջնաթթու յե առաջ գալիս, բայց հետապայում այդ չապացուցվեց:


Ճապոնիայում և Տիմոր կղզու վրա աճող յեղինձն առաջ ե բերում շատ ծանր, յերկարատև ցավ, ցնցում. մինչև իսկ լինում են գեղքեր, յերբ մարդ այդ յեղինձի մազի պատճառած վերքից մեռնում եւ Այս ուրեմն համարյա թե հավասար և թունավոր ոճի խայթելուն:

Քանի վոր խոսում ենք ամեն տեսակի մազիկների մասին, հիշենք ծծող մաղիկներն իրանց կատարած շատ կարևոր ֆունկցիայով սրանք աչքի յեն ընկնում բոլոր մազիկների շարքում՝



Նկար 52. Յեղինձի այրիչ մազիկը՝ եղիղիկերմեռի մի փոքրիկ մասով. Նրա վրա սկսում ե անել մի նոր այրիչ մազիկը

և առաջին տեղն են դրավում նույնանման կտղմվածքների մեջ, և, հիբասի, գանգելով արմատի աճաղ մասի վրա, նրանք ջուր և հանգային ազեր են մատակարարում բույրին, այս, ինչպես պարզ է, մի հանգամանք և, տառնց փորի վոչ մի բայց չի կարող առարկը անվել և թերք տալ Արմատի այդ մաղիկները կամ, ինչպես բնութագած և նրանց կաչեր, մաղմղուկները, ներկայացնում են արմատի մաշկի յերկարացոծ րջիջներ, փորոնք իրանց բջջանյութի մեջ առաջ յեկած մեծ սամուկի ուժի շնորհիվ կարողանում են հողի մասնիկներից ջուր ծձել, բայց այդ մաղմղուկների մասին կխռում ենք իր աեղում, այսինքն՝ յերք ծանոթանալու, մինենք արմատի անսառումիկան կաղմությունը:



Նկար 53. *Atriplex* բույրի
տերերի եղիգերմիկ համգածքը
ըստ համառության (Բոս Ֆու-
կենսի):


տերեները խիստ ծածկված են (նկ. 53) այնպիսի մաղիկներով, վորոնց վերեի ուսած մասը ներկայացնում և մի ջրամբար, անձրևների ժամանակ այդ մաղիկները լցվում են ջրով, վոր գործադրում և բույրը անխոռասպիկի յերաշաի ժամանակ. այդպիսով բույրը կարողանում և դիմանալ անսառելի շողին. այդ մաղիկները դարսված են յերկու հարկ, վոր ավելի շատ ջուր ամբարի տերեր. դրա համար մի քանի մաղիկների վտակները յերկարանում են և անցնում ցածի հարկի մաղիկների միջով, իսկ դրանց ուռած պարկանման մասը զարգանում և առաջին հարկից բարձր:

Մյունիսի համալսարանի պրոֆեսոր Գյորելը հարավային Ամերիկայում, Վենեցուելայի սարերում, վորտեղ բարձրության պատճառով, չնայելով ընդհանրապես տաք կլիմային, հանկարծ ցուրտ և սկսվում, փոթորիկ բարձրանում և ձյուն գալիս,—զտել և մի բույս *Espeletia* անունով, վորի տերեները յերկու կողմից և ծածկված են (նկ. 54) յերկար մաղիկներով. դրանք յերեք անգամ վոլորվելով, յերեք չերտ են կաղմում տերերի վրա, և այդ պատճառով ձյունն ու կարկուտն անմիջապես տերերի կանաչի

վրա չեն ընկնում, մազի խալը տերեւի հաստությունից յերեք անգամ ավելի բարձր եւ Գյորելն այդ տերեւներից մի քանիսը քառորդ ժամ պահել եր մի արագընթաց վտակի մեջ և տեսել եր, վոր այդ յերեքհարկանի, այսպիս ասած, բրդյա վերարկվի միջով ջուրը չեր անցել, մազիկների միջի ողը չեր հեռացել և տերեւի թիթեղը չոր եր մնացել.

Հարավային Աֆրիկայում, Կապ-լանդում, վորի կլիման նույնպես շատ չոր ե, ապրում ե մի բույս Rochea անունով. սրա տերեւների վրա կազմվում են մի շարք խոշոր բջիջներ, վորոնց պատերը չորության ժամանակ չեն իջնում շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանց մեջ շատ կայծաքար և հավաքվում. այդ յուրահատուկ բջիջները ջրամբարներ են. նրանք ունեն անցք զեպի տերեւի կողմը և ջրի սղության ժամանակ այդ անցքից ջուրը դանդաղ մատակարարվում ե չորությունից տառապող տերեւնու կայծաքարը թույլ չի տալիս այդ ջրամբարը բջիջներին չորության ժամանակ փոքրանալու:

Մեր կլիմայում շատ բույսեր մազերով յերաշտից պաշտպանվող տերեւներ պետք ե վոր ունենան. այդ հարցը շատ հետաքրքրական և հետազոտության համար:



Նկար 54. Espeletia բույսի տերեւի կտրվածքն ըստ հաստության Խոշորացրած և 8 անգամ: (Բառ Դյուբելի):

XIV. ՑՈՂՈՒՆԻ ԱՆԱՏՈՄԻԿԻԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ցողունը հանդիսանում է արմատներին և տերեւներին մի ամբողջության մեջ կապող ողակը. նրա միջով կատարվում է նյութերի տեղաշարժն արմատներից զեպի տերեւները և հակառակը: Ցողունն իր բազմաթիվ ճյուղավորություններով իր վրա յե պահում տերեւները, ծաղիկներն ու պտուղները. նա ներկայացնում է ամուր, բարդ որդան-պատվանդան, վորի վրա հենված

տերեները, այդ կտրեսը որդանները, վորոնք կտրագանում են տորածության մեջ վորոշ դիրք, դասավորություն բնագանել են որդանական նյութեր սինթեզեր

Անա ցուգունի ֆունկցիաները:


ՄԵՆՔ ընդունում ենք, վոր այս կոմ այն ֆունկցիան յին-թաղբառմ և որդանի վորոշ առաւելաւրա, կառուցվածք, վոր այդ յերկուսը պայմանափարձած են մեզը մյուսով, հանդես են դաշտ միասնարար Այս տեսակետից յենկով, պեսք և սպասենք, վոր ցողունի մոտ խիստ զարգացած և վորոշ կերպով դասավորութած պետք և լինեն (որդանսպասեմում) այն երեմենաները, հյուս-վածքները, վորոնք տվյալ որդանին միասնիկական մեջ զիմաց-կունություն են առլիս, վոր նրանց մեջ խիստ կերպով պետք և արտահայտված լինեն այն հյուսվածքները, վորոնց միջով կա-տարվում են նյութաշարժերը Յողունը, տերենների նման կտրն-վելով որում, յենթակա յե ջրի մեջ գործիքացման, չափ ցուրտ և տաք ջերմաստիճանների բացասական, վատանգավոր աղղեցու-թյուններին ևս միաժամանակ յենթակա յե պարագիտների քայրացիչ զործունեյությունը, վորոնք դրսից կարող են թափանա-ցել նրա ներքին հյուսվածքների մեջ, Այս բացասական աղղե-ցությունները ցողունի վրա ավելի խիստ կերպով կարող ելին արտահայտվել և այդ այն պատճառով, վոր ճյուղերը շատ դեպ-քերում (ծառերի մոտ) բազմամյա յենու Ռեքմին նրա կառուցված-քի մեջ պետք և շեշտաված լինեն նաև այն հանմարանքները, վոր նա իր զարգացման ընթացքում ձեռք և բերել այդ բացասա-կան աղղեցություններից պաշտպանվելու համար, ուրիշ խոսքով՝ նրանում պետք և զարգացած լինեն նաև դրսից նրան շրջապա-տող՝ պաշտպանող հյուսվածքները, Վորքան ցողունի կառուցված-քի այդ հատկանշական գծերը շեշտված լինեն և կատարելագործ-ված, այնքան ել բույր հաստատուն կլինի, դիմացկուն և գոյու-թյան կռվում հաղթանակող:

Յեկ իրոք, ցողունի ստրուկտուրան, նրա զարգացումն ու-սումնասիրելիս, կառուցվածքային այդ գծերը ցայտուն կերպով հանդես են դալիս, ապացուցելով ֆունկցիայի և ստրուկտուրայի փոխադարձ պայմանավորվածությունը, նրանց միասնությունը:

Անցնենք այդ ստրուկտուրայի ուսումնասիրությանը:

Յողունը հետաղոտելու ժամանակ մենք պետք և առանձին


ըննարկենք միաշաքիլ բույսերի ցողունը և առանձին-յերկաքիլ-
ների ցողունի կազմությունը, վորովհետեւ նրանց կառուցվածքը
յերկու տարրեր տիպի յեւ Միաշաքիլների ցողունը չի հաստա-
տում, վորովհետեւ նրանց մեջ չկա այս մերիստեմային հյուս-



Նկար 55. Պարուրաձև անոթի առաջացումը հիմական
հյուսվածքի բջիջներից. 1—պարենխիմի բջիջները՝ ուղ-
ղահայաց գասավորված. 2—նույն բջիջները՝ արդին յեր-
կարացած, բայց դեռ կենդանի պատերը բարակ են, և
նրանց վրայով զնում են ուժեղ հոսանքներ. 3—փայտաց-
ման սկզբը՝ պատճենները դեռ մնում են. 4—5 պատ-
ճեններն արդեն անհետացել են, և անոթն ստացել է իր
փերջնական ձևը: (Բատ Կոմարովի):

վածքը, վորը շատ ընդունակ և բազմանալու. այդպիսի հյուս-
վածք, սաղմային հատկությունների տեր, ունեն յերկաքիլները,
վորի գործունեյության չնորդիվ նրանք և հաստանում են, որին
նաև, բոլոր բազմամյա բույսերը. նրանց այդ հաստացնող հյուս-

վածքը կոչվում է կամբիում։ Փոխազրող անոթներն ընթանում են ցողովնի մեջ ըստ նրա յերկայնության և գնում են ուղղահայցոց ջուր և նյութեր տեղափոխելու ամենահարժար ձեր բույսերի համար խողովակն և ջրասար անորները և մազանման



Նկար 58. Ջախ—ա, ի, շ—սպիրալաձև անոթներ Աջ-յեղիպատացորենի ողակավոր անոթի մի մասը. ի—անոթի բարակ ողասը.
շ—ողակները. Մեծացրած և 550 անգամ։

անոթները բույսի մեջ առանձնացած չեն գնում, այլ միասին են ընթանում և խուրճ են կազմում։ Ջրատար անոթները յերկար են լինում. Նրանք առաջ են դաշիս հետեւյալ ձևով։ Միմիանց վրա ուղղահայց շարքով տեղափորված մի քանի բջիջներ սկըսում են ուժեղ սնվելով յերկարանալ (նկ. 55). Ջրան զուգընթաց նրանց կողային, — նկարի վրա ուղղահայց, — պատերը հասունում, փայտանում են, իսկ միջնապատերը լորձնանալով լուծ-

վում են Յել յերբ այդ բջիջները բավականին յերկարացած են
լինում և նրանց ուղղահայաց պատերը հաստացած, միջնապա-
տերն արդեն բոլորովին լուծված են լինում։ Զարդացման այդ-
ովիսի բնթացքի հետեանքը լինում և այն, վոր նախկին այդ
կենդանի բջիջներից ստացվում և հաստ պատերով բարակ, յեր-
կար, մի մեռած խողովակ կամ անոթ։ Այստեղ միջնապատերի
լուծվելն ունի այն նշանակությունը, վոր դրա չնորհիվ ջրի հո-
սանքն արագանում և Խողովակների պատերը սարքեր ձեւըով
են հաստանում, Վորմանց մոտ այդ հաստացումները պարուրածն-
են լինում, մյուսների մոտ՝ ողակի, սանդուխքի, ցանցի և այլ
ձևերի նայած թե խողովակն ինչ ձեր հաստացում և տալիս,
ըստ այն ել նա կոչվում ե՝ պարուրածն, ողակածն, սանդուխքա-
ծն, ցանցածն կամ կետավոր (նկ. 56)։ Ի՞նչ և այդ հաստացում-
ների նշանակությունը, Բանն այն ե, վոր այդ խողովակները
շրջապատված են կենդանի բջիջներով, վորոնք յերբ տուրքորա-
յին վիճակում են լինում, խողովակների պատերի վրա վորոշ
ճնշում են գործում, Յեթե նրանց պատերը հաստացած չլինելին,
պարզ ե, այդ հարեան բջիջների ճնշումից նրանք կարող ելին
փակիւր վորի հետեանքով կընդատվեր ջրի հոսանքը։ Բույսերի
մատագ մասներում, որինակ, մատագ ցողունների մեջ, սկզբում
առաջ են գալիս ողակածնել յել պարուրածնել անօրներ։ Նրանք
չեն խանդարում մատագ որդանին աճել ըստ յերկայնության,
վորոշիւեան իրանք ել կարող են յերկարանալ այդ ժամանակ
ողակներն իրարից հեռանում են, իսկ պարույրը դառնում և վոչ
այնքան լարված։ Յերբ որդանի աճումն ըստ յերկայնության
վերջանում ե, այդ անոթները փոխարինվում են ավելի յերկա-
րակյաց զանցածնել և կիտավոր անոթներով, րայց լինում ե և
լայն պարուրածն աճոթ։ Ողակներն իրարից հավասար հեռակա-
րության վրա են զանգում, վորալեազի անոթի հակադղեցությունը
դրացի բջիջների առաջ բերած ճնշմանը համահավասար լինի
Յեթե ողակները խոշոր են և հաստ, նրանք իրարից հեռու յեն
տեղավորվում, իսկ յեթե մասն են և բարակ, ավելի իբրար մոտ-
մոտ են զանցում։ Ողակների իրարից հեռու կամ մոտ լինելը
կախումն ունի նաև դրացի բջիջների առաջ բերած ճնշման ուժի
չափից։ Ողակները, ինչպէս այդ պարզել ե պրոֆեսոր Ռոտերար,
կպած են անոթի պատին վոչ թե իրենց ամբողջ լայնությամբ,

մի բարտկ փոյտյա շերտով, վորը գտնվում և սպակի մեջ-
տեղում: Զրաւար անոթները, պետք և առեւ լնգեանրապես կոչ-
վում են տրախեաներ, մի սփալ անուն, վոր տվել են նրանց
առաջին հետազոտող բաւարանները, կարծելով, վոր այդ անոթ-
ներն իրանց մեջ ոդ են դարսւնակում և շնչառության համար
են ծառայում¹⁾:


Սպիրալուճե արախեանները իրանց աճման և զարգացման
ընթացքում նույնպես փոփոխության են յենթարկվում. սպիրա-
լի ողակները արտիստայի զարգացման սկզբում իրար մոտ են
լինում, իսկ հետո, ինչողեւ առացի, արախեայի յերկարանալու-
պատճառով, նրանք ավելի բացվում են Յես կարծում եմ, վոր
ողակները միմյանցից հետանալու ժամանակը ավելի հաստանում
և ամրապնդվում են, վոր կարողանան առաջվա չափով հակածըն-
շում առաջ բերել Կատարելազործման ահասկեսից սպակալոր
արախեաններն ավելի բարձր պետք և գնահատել վորովինան,
յեթե նրանցից մեկը մեխանիկորեն վնասվեց, վնասը կմնա կղզի-
ացած. իսկ սպիրալուճե արախեայի սպիրալը, յեթե վնասվեց մի
ժամկեց, ամրողջովին որոկվում և թափում և, ողակածե անոթի
մեջ հիվանդությունն ել նույնպես ավելի գդալար կտարածվի:

Տրախեաններից սպակավորները և սպիրալածենները ամենից
նեղն են, կետավկորները - ամենալայալները: Փաթաթվող բույների
վանների, արախեանները շատ լայն են, նրանք շատ բարձր են
գնում և ժամանակին ջուր հասցնելու համար նրանց ջրատար
անոթների արամագիծը պետք և մեծ լինի, անոնց բերանը լայն:
Տրախեանների մեջ ողի ճնշումը հասարակ ճնշումից պակաս եւ

1) Հետաքրքրական և այն, վոր բոլորովին նման կադմալիքյուն ունեն մի-
ջատների տրախեանները, վորոնք ծառայում են շնչառության համար, նրանք
նույնպես սնամեջ խոզովակներ են և ներքին կողմից պարուրածն հաստ տեղեր
ունեն, վոր չփակենան Այգափիսով մենք պատեղ տեսնում ենք այն բազմաթիվ
գեղագիրից մեկը, յերբ յերկու բույրովին տարեկը որդանիշները մեջ առարկեց
որդաններ բարորովին նմանվում են իրար այն պատճեռով, վոր հարմարվում են
դորժունեության նույն պայմաններին: Ասոթների մեջ ոդ են դաել, այդ պատ-
ճեռով սկզբում կարծում եյին, վոր նրանք ծառայում են բույսերի շնչառու-
թյան համար. այդաղից և ծագել նրանց տրախեա անունը չըշենց, վոր մարզու
շնչափողն ել արախեա յե կոչվում, և վոր շնչափողի մեջ կան կընկային կիսա-
շրջաններ:


Մերկասերմ բույսերի մոտ ջրատար անոթները շատ ավելի հարճ են քան արախիաները և կոչվում են տրախիդներ. նրանք յերկու կողմից կտրված են թեք պատերով: Ստրաղբուրգերը դառավ, վոր արախիաների միջից ջուրն անհամեմատ ավելի արագ է անցնում քան թե արախիդների միջով. ուրեմն, իրեն ջրատար անոթներ, արախիաները շատ ավելի կատարելագործված են քան թե արախիդները, և մենք ապագայում կահսնենք, վոր ծածկասերմ բույսերն իրանց ուրիշ հատկությունների տեսակետից ել շատ ավելի առաջ են գնացել քան մերկասերմ բույսերը:

Մաղանման անօրները նույնպես յերկար են, ինչպես ջրատար անոթները, բայց այնչափ լայն չեն: Նրանք բաժանված են մաղանման հորիզոնական կամ թեք մակարդակներով, միջնապատերով (նկ. 57): Այդ մաղանման մակարդակները ծածկված են բազմաթիվ հնդանկյուն, քառանկյուն անցքերով. այդ պատճառով ել այդ անոթները



Նկար 57. Մաղանման խողովակ. А—նրա հատվածքն ըստ յերկայնության. յերեցում են յերկու մաղանման հորիզոնական մակարդակները. ձախ կողմից՝ յերկար ուղեկիցը, արբանյակը. խողովակի մեջտեղից անցնոմ և պրոտոպլազման, վորն ավելի կուտակված և մաղանման մակարդակների մոտ: В—յերկու մաղանման խողովակների հատվածքն ըստ լայնության. ձախը կտրված և մեջտեղից այնպիս, վոր յերեւմ և խողովակի մեջտեղով անցկացող պրոտոպլազման, վորը պատերից պոկվել եւ Աջ խողովակը կտրված և խողովակի ծայրում, և յերեւմ և մաղանման մակարդակը վերելից Յերկու խողովակներից դեպի ձախ՝ արբանյակը:

կոչվում են մազանման։ Մազանման անոթները, հակասակ ջրատաք անոթների, կենզանի բջիջներ են, պարանակում են իրանց մեջ պատի տակ գանգող պրոտոպլազմա, մեծ քանակությամբ լորձունք և շատ մանր ոսլայի հատիկներու Այդ ութրունակությունը հայտնաբերում է ալկալի սեակցիա, վորով նաև խիստ զանազանվամբ և արիշ կենզանի բջիջների սեակցիայից, վարչ թթու յև Պրոտոպլազման հեղա կերպով պոկում և անոթի յերկար պատերից և ուժեղ կաշում և մազանման պատճեններին



Նկար 58. Դպումի մազանման անոթները, թթ-անոթի պատերից պոկա-զած պրոտոպլազմային նյութը. Ը—մազանման անոթների ծակներու ուժեց-ցող պատճենները. Տ1—մազանման մակարդակը¹²

կողքի պատի վրա:

(նկ., 58). Մազանման անոթների միջամ անցնում են որգանական նյութները Դի-տոթյան մեջ կոմի ցուցում այն մասին, վոր սպիրակուցային նյութները բռւյսի մեջ մի ակղից մյուս ակղը գնալու համար կա-րող են քայլայիլ ավելի պարզ նյութների, վորոնք արգեն ավելի հեղա են լուծվում և ավելի թիթե կերպով անց են կենում բջջա-թաղանթների միջամ։ Պեսք և ասել վոր մազանման անցքերով մակարդակ լի-նում և նաև մազանման անոթների կողքի պատերի վրա Յերկար պատերը կազմված են մաքուր ցելու լողից։ Մազանման մա-կարդակները շատ անդամ բարակ են մուռու բռւյսի ամբողջ կյանքի ընթացքում, յեր-բեմն ել նրանց վրա կուտակված նյութը կարծրանում է, դառնում է կոշտ և կոշվում է կալուս։ Մի քանի բռւյսների մոտ նկատել են, վոր ձմեռը մազանման մակարդակները բռլորովին ծածկում են կալուսով, վոր գարնանը, յերը բռւյսական կյանքն արթնանում է, լուծվում է։ Մազանման անոթների կողքից, նրանց յերկայնությամբ, ըն-թանում են ավելի նեղ, յերկար բջիջներ, վորոնք մազանմաննե-րի ռողեկցիմեր, արքանյափներ են կոչվում։ Մազանման անոթները, ջրատաք անոթների նման ստացվում են հիմնական հյուսվածքի պարենիտիմյան բջիջներից, սրանց յերկարանալու հետեանքով։

Բացի ջրատաք անոթներից, շատ բռւյսների մեջ կան կար-նատաք անորներ։ Սրանց մասին սակաալ բան գիտենք, շատ տեղ-

յակ չենք. միայն կողմնակի կերպով դատողություններ ենք անում, կաթնատար անոթների մասին գիտենք միայն հետեւյալը, երանք կենդանի յերկար խոռովակներ են, վորոնց բջջահյութի մեջ կա սպատակ, յերբեմն ել՝ դեղին նյութի Բջջահյութը դաշնավում և վորոշ ճնշման տակ, և յերբ այդպիսի բույսին մի վորեն վերք են հասցնում, կաթնանման հյութը կաթիւի ձևով դուրս և դալիս վերբից, քիչ ժամանակից հետո պնդանում և փակում ենոցը, կաթնատար անոթների մեջ պրոտոպլազմա և ուլայի հատիկներ կան, վերջիններիս ձեն այստեղ նման և մարդու ազդրուկին կաթնատար անոթները շատ նեղ են, ճյուղավորվում են և ստեղ, ավելի ճիշտ ասած՝ համարյա յերբեք, չունեն իրանց ամրող յերկայնության վրա վոչ մի պատճեզ, նրանք սկսվում են բույսի վերևի-ամենածայրի մասից, ճյուղավորվելով մտնում են բույսի բույր ճյուղածքների մեջ և գնում են մինչեւ արմատի բույր ճյուղավորությունների ամենադրսի ծայրերը։ Այդ եպատճառը, վոր յեթե կաթնատար անոթներ ունեցող բույսի մի վորեն մասին վերք հասցնենք, իսկույն կաթիւ դուրս կդա, ինչպես, որինակ, խաղիսաշի, իշակաթնուկի և ուրիշ բույսերի մոտ կարելի յե այդ տեսնել Յերբ կաթնատար անոթներ ունեցող բույսի սերմը ծլում ե, նրա մեջ զանված մի քանի բջիջները, վորոնք իրանց մեջ այդ կաթն են պարունակում, սկսում են յերկարանալ, ճյուղավորվել ե, ինչքան վոր ծիլն աճում, բույս և դառնում և հետագայում ինչքան վոր մատաղ բույսը մեծանում ե, ճյուղավորվում և հաստանում, այդ կաթնատար անոթները, ասում եմ, յերկարանում, ճյուղավորվում են և մտնում բույսի բույր մասերի մեջ։

Մի քանի բույսերի կաթնատար անոթների այդ ճյութը պարունակում ե իր մեջ ալկալիդներ, այսինքն, այնպիսի, զատքարդ, ազոտային քիմիական միացություններ, վորոնք շատ ուժգին ազդում են կենդանական որգանիզմի վրա, մեծ մասամբ ինչպես թույն, այդ թունավոր նյութերը բույսը, պետք ե կարծել, զործադրում ե իրքն զենք խոտաճարակ կենդանիների դեմ։ Մաքրված ե թույլ լուծույթի ձևով այդ թույները զործադրվում են բժշկականության մեջ իրքն գեղ, որինակ մորֆին, կոդեյին և այլն, կառչչուկը և ուսինը ներկայացնում են կենտրոնական մօքրիկայում, Հնդկաստանում և Բրազիլիայում ապրող կառչու-

կատու ծառերի կտթնատար անոթների նյութերից մեկը կառչուկն ածխաջրածինների խառնութք և՝ ընդհանութք (C₆H₈)_n ֆորմուլի, և ներկայացնում և բազմաթիվ կըսր գնդակներու նու գուտատպերչը քայլայման արդյունք և կառչուկ տալիս են առ քիչ արտպիկական ծառեր, այն և Հեվեա, Պարա, Ficus և մի քանի ուրիշ ծառեր Բացասություն և կաղմում Մերսիկայի մի թօւփ՝ զվայուլա անունով, վորը մեր Միաթյան սահմաններում տանում և Թուրքմենստանի կիման Սակայն նրա մեջ չկա կաթնատար անոթների մի խսկական սիստեմ, և կառչուկը զանցում և, զարագանյութերի նման, կեղեի պարենխիմայի ձուծի և բնափայտի մեջ։ Եաւ բուսաբաններ հաստատում են, վոր կաթնածառի—Galactodendron-ի կաթնանման սպիտակ հեղուկն արեագարձային յերկրների տեղական ժողովությունը, — նեղորեը և այլն, — խմում են իրեն սննդաբար նյութ։ Բայց այդ զարցմանալի յի, վորովհետեւ այդ ծառից հոսող սպիտակ նյութի մեջ կա բավական շատ կառչուկ, վորը վոչ թե միայն անմարուելի յե, այլ նույնիսկ հավանորեն վնասակար Սակայն Ալեքսանդրը Հումբուզի նման մի հեղինակավոր անձնավորություն տալիս և զրա ճիշտ նկարագրությունը, իրեն ականատես¹⁾։

Կաթնատար անոթներ ունեցող մի քանի բույսների կաթնանման հեղուկի մեջ լինում են զարագանյութեր, Այն հանդամանքը, վոր այդ անոթներն իրանց մեջ պատեր չւունեն, նպաստում և նրանց հեղուկի արագ տեղափոխմական ինարկե, որդանական նյութերն ընդհանրապես կարող են ամեն տեսակ կենդանի բջիջների թաղանթից անցնել շնորհիվ զիփուզիայի, բայց անոթները շատ ավելի շուռա կարող են նույնն անել իսկ կաթնատար անոթները, փոխադրելու տեսակետից, ամենակատարելազործվածներն են, քանի վոր հեղուկը հոսելիս նրանց մեջ վոչ մի խոչընդուռի չի պատահում, Carica Papaya արեագարձային ծառը, վորը կոչվում է սեխի ծառ, իր պաղի կաթնատար անոթներում տալիս և մի հյութ, վորից սուանում են յերկու ալկալոիդ՝ պապային և

1) Կառչուկի համար մղվող պայքարը կաղիտալիստական յերկրների գաղութային սարկացուցիչ քաղաքականության անբաժան մասն և կաղմում Յեկըռողացիք ստիպում են սերբն սետին հավաքել Աֆըիկայի անտառներում խոնավության, մալարիայի, ցեցի հիվանդության սոսկալի պայմաններում։

պապայոտին: Դրանք բժշկականության մեջ գործ են ածվում դիս-
պեպիայի դեպքում, այսինքն՝ յերբ ստամոքսահյութի մեջ բա-
վականաչափ պեպսին չկա: Carica Papaya-ի պտուղը մեր սեխի
նման ե, դեղին, մեջտեղն ավելի հաստ քան ծայրերը. սերմերը
նույնպես նման են սեխի սերմերին, բայց ավելի ուռուցիկ են
և հաստ, սերմիրը լողում են պտղի կիսահեղուակ նյութի մեջ¹⁾
Գութապիրչ տալիս ևJsonandra gutta տրոպիկական բույսը: Գու-
տապեր չի փորձուն և (C₆H₁₀)_n և մասամբ նրանց ոքսիդացման
արդյունքն ենա: Մեր բույսերից զուտապերչ տալիս և Chond-
ril^{1a} junccea-ն, վորն աճում և մեր Միության հարավային դաշ-
տերում և կիսանապատճերում, սամի սարդածաղկավոր բույս և
Գութապիրչ և տալիս նույնպես Asclepias Cornuta-ն:


Մազանման անոթների և կաթնատարների մեջ վորոշ հա-
րաբերություն կա: Ինչքան բույսի մեջ շատ են կազմվում կաթ-
նատար անոթները, այնքան քիչ են լինում նրա մեջ մազան-
մանները: Կաթնատար անոթների ծայրերը սովորաբար դալիս
մուտքում են անմիջապես ասիմիլացիոն հյուսվածքին, տանում
են և աննդարաբ, և անպետք նյութերը:

Ջրատար և մազանման անոթներն առանձին-առանձին չեն
լինում, այլ համախմբվելով, իրար նկատմամբ վորոշ կերպով դա-
սավորվելով, կազմում են անօրտին խճեր: Անոթալին խրձերի
շուրջը կամ նրանց յերկու կողմերում դասավորված են լինում
մեխանիկական հյուսվածքներ, վորոնք խրձին տալիս են ամրու-
թյուն: Մեխանիկական այդ հյուսվածքի ելեմենտները յերկար
թելիկների ձևունեն: Այդ պատճառով ել հաճախ անոթային
խրձերն անվանում են անոթաթելային խրձեր: Ջրատար անոթ-
ների մասը խրձի մեջ կոչվում և խիլինու կամ հադրուն, իսկ
մազանման անոթների և ընդհանրապես խրձի, նրանց հետ միա-
սին որգանական նյութը ցած տանող մասը կոչվում և ֆլուեն
կամ լեպտամա: Քսիլինման և ֆլուեման իրարից բաժանվում են
սուրբաշաքիլան մասում: Ցեթե խրձի մեջ քսիլինման անմիջակա-
նորեն կպած և ֆլուեմային, այն ժամանակ խուրձը կոչվում և
փակ խուրձ: այդպիսի խուրձը ֆլուեմայի և քսիլինմայի նոր ելե-

1) Այդ սեխը Հնդկաստանում գործ են ածում առավոտյան: Ուզում եյքն
այդ սեխը գործադրել գիֆտերիտի բակտերիաների կոլոնիաները լիզացնե-
լու համար, բայց չհաջողվեց:

մենուներ չի տալիս, չի հասաւնում է նրանք հասուկ ևն միաշառքի բույսերին, որինակ, հացահատիկներին:

Բայց յերկշորի բույսերի խրձերի փրկեմայի և քսիլեմայի մեջ կա մի առանձին հյուսվածք, զորն ունի մերիսաւելային բնույթը, նրա բջիջները բաղմանում են և դեպի մի կողմ, դեպի



Նկար 59. Գորգանուկի խրձի կտրվածքն՝ ըստ լայնության Տ—արախիկոյ, Թ—ջրատար անոթ (քսիլեմա), Վ—մաղանման անոթ (ֆլուկեմա). Ը—կամբիում:

դուրս, տալիս են ֆլուկեմա, դեպի հակառակ կողմը, դեպի ներս, տալիս են քսիլեմա (նկ. 59): Այդ մերիսաւեմային արտադրողական հյուսվածքը կոչվում է կամբիում: Կամբիումը ունեցող խըրձերը կոչվում են բաց խրձեր:


Բույների կամբիումն աշխատում և պարբերաբար, այն և՝ նրա գործունեցությունը դադարում և ձմռանից առաջ մինչև դարուն, յերբ նա սովորաբար զարթնում է, և այդ՝ ամենից տառաջ ամենամատաղ մասերում, հետո հաջորդաբար և ավելի հասակավոր ու ծեր մասերում։ Կամբիումի աշխատանքի սկզբը կարելի յեւ վորոշել թեև վոչ այնքան շատ ճիշտ, առանց մասնադիտակի յեւ միայն ծառի կեղեց քաշել-հանելով։ յեթե կամբիումն սկսել և աշխատել կեղեցն այդ գեպքում հեշտ և պոկիում, գորտովնեան նրա մատադ, նուրբ բջիջները հեշտությամբ պատռվում են, և շատ դյուրին և նրանց նրաբից բաժանել իսկ յեթե կեղեց պոկենք այն ժամանակի յերբ դեռ կամբիումը չի սկսել աշխատել, այդ արդեն դժվար է կամբիումը, վոր ամբողջական վերաբերի նման փաթաթում, և ծառի բնափայտը մինչև նրա ամենաբարակ մյուզերը, գործում և ծառի ամբողջ կյանքի ընթացքում, վորդ գեղքերում։ մի քանի դայր¹⁾։

Կամբիումի բազմացումը կեսի բնափայտի կողմը կատարվում և մոտ տած անգամ՝ ամենի հաճախ, քանի դեպի լուրի կողմը։ Այդ պատճառով բնափայտը կեղեցից ալիքի արագ և աճում։

Կամբիումը մի կամ մի քանի շերտ գունի, նա նեղ և տափակ բջիջներից և կաղմված։ Ետմբիումի բջիջներն իրար շատ մոտ-մոտ են նստած, առանց միջիջիջային դարածությունների և մեծ մասամբ լինեամ են քառասնիյեանի։ Իրեն ինտենսիվ գործունեցություն կապարող բջիջները նրանք լիքն են գլրոտոպլազմայով, ունեն մեծ կորիզ, նրանց դաստերը բարակ են։—մի հանգամանք, վոր նմանատում և բջիջների բաժննման համար անհրաժեշտ նյութերի փոխանակության ինչպես ասվեց, կամբիումը ունեցող իրձերը կրչվում են բաց, իսկ չափանիշողները—փակ

1) Կամբիումի և մերկսութիւմայի սաղմալիս հյուսվածքների այդ յերկարակեցությունը շատ խօս զանազանություն և զուրծ բույսերի և կենդանիների մեջ հայտնի յեւ, վոր կենդանական աշխաբեռում սաղմային հուսվածքները գործում են կենդանու զարգացման առաջին տարիները միայն, իսկ հետո բոլորովին զարգարում և նրանց արտավրական աշխատանքը՝ վաղեմի յերկարանական ժամանակաշրջաններում կենդանիների սաղմային հյուսվածքը գործում եր անհամեմատ ավելի յերկար ժամանակ, և այդ պատճառով այն ժամանակվա կենդանիների անելի մեծություն ունելին Մարած (անհետած) կենդանիների խորությունը հնեաբաններն այդպիս են պարզում։

խրձեր, իրրի փակ խրձերի որբնակ զննենք յեղիպտացործներ խուրձը, 60-րդ նկարի վրա տրված և այդ խրձի հատվածքն՝ ըստ հասառաթյան ց, ց, Տ, Ր, Լ—քսիլիսման են, Վ—ֆլուեման և, վերջինիս մեջ Վ, Վ նշում են մաղանման անոթները, վարոնց մեջ գուշակում են մեխանիկական բջիջների կամբիթորմի նեղ բջիջները, Լ—միջրջիջային անցք և, Ր—ողակավոր անոթ և, Ց—պարուրաձև



Նկար 60. Յեղիպտացործներ ցողունի անոթակիլիկային խրձի կտըրվածքը. տառերը պարզված են տերսում:

անոթ և, ց, ց—խոշոր ծակութիներով կամ ցանցավոր անոթներ են Ֆլուեմայի և Տ, Ց, Ց-ի մեջ գտնվում են մի խումբ նեղ ծակութիներով անոթներ: Խրձի շուրջը գտնվում են սքլերենիմային հլեմենտներ, վորոնք մութ գույնի յեն գծված, Պ, Ր—բարակ պատերով պարենխիմային բջիջներ են, Ա—խրձի արտաքին մասն եւ, Ի—նբաներքին մասն եւ:

Այսպիսի խուրձը, յերբ քսիլեմայի չարունակության վրա՝ դեղի պերիֆերիան, նրան գրեթե զուգահեռ դասավորված, գտնվում և փլում է փլուման, կոչվում և կոլատերալ անօթային խուրձ (կուտաերալ բառը լատիներեն և և նշանակում է կողք-կողքի): Վերևում առվեց, վոր սրանք փակ են, կամբիում չունեն, ուստի միաշաքիլների անոթաթերելային խուրձը պատկանում է փակ կուտաերալ արթիքն:

Անոթաթելային խրձերին և նրանց ելեմենտներին ծանոթանալուց հետո, մենք հանգում ենք հետեւյալ հարցին՝ նրանք ի՞նչպիսի դասավորություն և դրություն ունեն տարրեր տիպի բույսերի ցողունի մեջ, ուրիշ խոսքով՝ տարրեր տիպի բույսերի ցողուններն ի՞նչպիսի հատկանշական կառուցվածք ունեն: Սկսենք միաշաքիլներից և վորպես որինակ վերցնենք յեգիպտացորենի ցողունի ընդլայնական հատվածքը:

Արտաքուստ նա շրջապատված է թիջների մի շերտով, վորոնց արտաքին պատերը քիչ հաստացած են, ծծված կուտինով և սիլիցիումով: Այդ վերնամաշկն ե, վորը պաշտպանում է ցողունը շատ ջուր գուրուշիացնելուց, պարագիտներից և այլն: Եպիգերմիտից հետո գալիս և հաստ պատեր ունեցող թիջների մի շերտ (այդ թիջները յերբեմն լինում են առանձին խմբերի ձևով): Մեխանիքական հյուսվածքի պատյանն ե այդ, վորը ցողունին ամրություն և տալիս Յողունի մեացած ամբողջ մասը լցված է պարենխիմային հյուսվածքի թիջներով, վորոնց միջև դասավորված են անոթաթելային խրձերը, վորոնց կազմության մենք արդեն ծանոթ ենք: Առաջին հայացքից մեղ թվում ե, վոր սրանց դասավորության մեջ վոչ մի որինաչափություն գոյություն չունի, վոր նրանք ինչ վոր պատահական կերպով ցաք ու ցրիլ են տռաջ յեկել պարենխիմային հյուսվածքի մեջ: Ճիշտ ե, նրանք էլանոնավոր ողակի, կամ վորեիցե այլ ձևով, վոր մենք տեսնում ենք յերկաքիլների մոտ, դասավորված չեն, բայց ուշիմ դիտողն անմիջապես կնկատի, վոր այսուղ ինչվոր բան կա: Խնդիրն այն է, վոր անոթաթելային խրձերը, վորքան մոտենում են պերիֆերիային, այնքան վորքանում են, այնքան խիտ են դասավորված, իսկ նրանց շրջապատող մեխանիկական թիջների թիվը մեծ է և, հակառակը, վորքան գեպի կենտրոնն ենք գնում, այնքան նրանք խոշորանում են, նոսրանում, իսկ նրանց զուրջը

գանգող մեխանիկական բջիջների թիվը նվազում է: Բոլորովին կենտրոնամ խրձեր նույնիսկ չեն լինում: Վարոշ մխաղաքի ների, ինչպես որինակ, հացարուցերի, ցողունի կենտրոնական մասում վոչ միայն անոթաթելային խրձեր, այլև տարենիսիմային բջիջներ չեն լինում: Երանք սնամեջ են, այսինքն՝ նրանց ցողունի կենտրոնական մասը բռնված և մի մեծ խորշով, վորոն ոգով և լցված: Այսորինակ կառուցվածքի, խրձերի այդպիսի դասավարության հետանքը լինում և այն, վոր պերֆերացին մասերում ստացվում և մեխանիկական ելեմենտների մեծ կուտակում, իսկ այդ, ինչպես ահանելու յենք, խոշոր նշանակություն ունի: Յեթև յերկու հենարանի վրա գնենք մի նեղ և յերկար փայտի ծայրերը, իսկ փայտի մեջաղը գնենք մի ծանրույթ, որինակ՝ մի քար, փայտը մեջաղից կծովի: Նրա վերևի մասում գանված նյութի մասնիկները կմասենան և կճնշեն իրար, իսկ ցածի մասի նյութի մասնիկներն իրարից հետանան և կքաշեն իրար, կձգտեն իրարից բաժանվել Փայտի վերևի մակերեսից ինչքան խորանանք գեղի փայտի մեջաղը, այնքան մասնիկների փոխադարձ ճնշումը կփռքրանա, ինչքան փայտի ցածի յերեսից մոտենանք փայտի մեջաղին, մասնիկներն այնքան ավելի անշարժ կմնան իրենց տեղում, պակաս չափով կձգտեն իրարից բաժանվելու Փայտի մեջաղում կգտնենք չեղոք մակարդակ, վորի մասնիկները վոչ կձգտեն իրարից հետանալ, վոչ եւ իրար մոտենալ:

